

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ  
Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Բ

№ 4 1900

Ա Պ Ր Ի Լ

1900 № 4

ՏԱՍԽԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

երես	
1 ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . . . .	419 Սողոմոնի աւլքիւրը (Դրմագիկական պոչմա),
2 ՊՈ-ԾԵԵԱՆՑ, ՊԵՐՃ . . . . .	449 Յունօն (վէպ, շարունակութիւն),
3 ԻՍԱՀԱԿԵԱՆ, Ա.Ի.ԵՏԻՔ . . . . .	486 Մե ամպերէն... (Բանաստ.),
4 ՆՈՅՆՆԸ . . . . .	487 Կեանքիս ճամրէն... (Բանաստ.),
5 Ա.ՂԲԱԼԵԱՆ, ՆԻՔ. . . . .	488 Նամակներ Զանգեզուրից, II,
6 ԳԵՐՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻԿ . . . . .	498 Արծիւը (Բանաստեղծութիւն),
7 ԱԹԱԲԵԿԵԱՆ, ՄԻՔ. . . . .	499 Հելինակների իրաւունքը, I,
8 ՄԵԼԻՔ-ԿՈՐԱԳԵԶՋԵԱՆ, ԳԵՂՈՐԳ .	509 Գերմանական օդնութիւնը Տաճկա- հալերին (վերջ),
9 Ա. Ա. . . . .	523 Ալևակը Լաֆոնթինիո, թարգմա- նութեամբ Մ. Նուպարեանի:
10 ՅԱՐՄԱՐԵԱՆ, Ս. . . . .	531 Պարոկասորանից, IX:
11 Զ. . . . .	541 Պարերազմը Հարաւ-Աֆրիկալում,
12 ԽՄԲ. . . . .	552 Զանազան լուրեր:

Տեղեկատու և Յայտարարութիմներ




ԹԻՖԼԻՍ

Տպարան S. Ա. 0-08166058

Տպոգրաֆիա Տ. Մ. Ռոտանիանա, Գոլ. պր., հ. № 41.

1900





ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍՈՎ ԳԻՐ

№ 4 1900

Ա Պ Ր Ի Լ

1900 № 4

ՅԱՍԽԵՐԿՈՒՆԻՒԹԱԳՐԻ ՅԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպիրակ Տ. Մ. Պոտիւնսկի

Տիոգրաֆիա Տ. Մ. Պոտիւնսկի Պոլ. պր., հ. № 41.

1900



ՀԱՅՈՒԹ ՀԱՅՈՒԹՈՒՄՆ ՀԱՅՈՒԹՈՅ

Կ Վ Գ Ա Շ Ա Ջ

Дозволено цензурою. Тифлисъ, 21-го Апрѣля 1900 г.

ՀԱՅՈՒԹՈՒՄՆ ՀԱՅՈՒԹՈՅ

ՀԱՅՈՒԹ ՀԱՅՈՒԹՈՒՄՆ ՀԱՅՈՒԹՈՅ

ՀԱՅՈՒԹ ՀԱՅՈՒԹՈՒՄՆ ՀԱՅՈՒԹՈՅ

ՀԱՅՈՒԹ

## ՍՈՂՈՄՈՆԻ ԱՂԲԻՒՐԸ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊՈԵՄԱՆ ԽՐՆՔ ՊԱՏՎՈՐՈՎ

ԼԵՒՈՆ ՄԱՆԻՎՆԵՍՆՑԻ

ՊՈՂՄԱՅԻ ԱՆՁԻՆՔ

Սողոմոն, զիւղի պատրւաւոր անձը  
Խափացէլ, նրա որդին  
Մելքոն, զիւղի ազգեցիկ անձը  
Օսաննա, նրա աղջիկը  
Եղիա, Սողոմոնի բարեկամը  
Մարուք, Մելքոնի բարեկամը  
Մելիք-Յակոբ, գիւղի որանուգերը  
Երիսասարդ  
Ծերունի իւր երկու թռոնիկներով  
Աշուղ  
Երկու գիւղացի  
Գիւղացիներ, պղամարդիկ, կանայք, աղջիկք, երեխաներ

Գողծողութիւնը կարարւում է Գողթնում:

## ՊԱՏԿԵՐ ԱԹԱԶԻՒ

Տեսարանը ներկայացնում է եկեղեցու գաւիթը, որը մի բա-  
ւական մեծ և պարիսպներով շըջապարւած փարածութիւն է,  
ծածկւած ճանապարհի երկու կողմից զերեզմաններով։ Ծառերի-

եղուից երեսում է եկեղեցին իւր զմբէթով։ Զանդերը լողանչում  
են։ Գաւիթը լցւում է գիւղացիներով։ Կանաչը և երեխաներ միան-  
գամայն բացակացում են։ Ժողովուրդը գեղաւորւում է զերեզմանա-  
քարերի վրայ։ Բազմութիւնը խպանում է ծառերի սպաներներում։

## ՄԵԼԻՔ-ՑԱԿՈԲ

Ել ում ենք սպասում? Մեր իշխանները  
Հիմա ամենքը այսորեղ ներկայ են,  
Եւ բաւականին ժողովուրդ էլ կայ։

## Մ Ե Լ Ք Ո Ն

Խօսքը քոնն է, Սողոմոն, սկսիր։

## ՄԵԼԻՔ-ՑԱԿՈԲ (ԺՈՂՈՎՈՐԴԻՆ)

Սձւս, մի խանգարէք... Լըռութիւն... Ոիմոն,  
Հարեւաններիդ ասա, մոնջ կենան։

## Մ Ո Ղ Ո Մ Ո Ն

Ժողովուրդ, գուցէ ձեզնից շատերը  
Դեռ չեն իմանում—ինչի համար ենք  
Հաւաքւել այսորեղ, և որովհետեւ  
Մեր այս ժողովի պատճառը ես եմ,  
Ուրեմն խօսքը ինձ է պազմանում։  
Ժողովականներ, ես մրադիր եմ  
Այսորեղ արծարծել մեր գիւղը աղբիւր  
Տերելու հարցը։

## Ե Ղ Ի Ա

Ախ, օրհնեալ լինի այն օրն ու ժամը,  
Երբ մենք ջըրասար աղբիւր կ'ունենանք!

## Մ Ո Ղ Ո Մ Ո Ն

Զուրը Ասովը ծոյ այն առըրբ պարգևն է,  
Որ անապատը դըրախու է շինում,  
Պոկ եթէ չը կայ, կանաչ դըրախուը

Ամայանում է, անապար դաւնում։  
 Երեսուն դարի մեզանից առաջ  
 Մեր գիւղը այսպէս չոր աւերակ չէր,  
 Սյլ շէն, շար շէն էր... Կանաչ, խիտ և զով  
 Ազգիների մէջ կորած էր գիւղը,  
 Եւ մինչև կէսօր փայլում էր ցողը  
 Շաղկանց, թլքիւրի, մարդերի վըրաւ.  
 Առար էր հունձը և հողի բերքը.  
 Եւ ժողովուրդը չըգիտէր կարիք,  
 Այլ միշտ գոհ, ուրախ և հաշտ ապրում էր  
 Եւ փառաբանում վերին Արարէին.  
 Մենք այն ժամանակ աղբիւր ունէինք,  
 Այն էլ ինչ աղբիւր... Ախ, այն աստիճան  
 Վարար էր ջուրը, որ իր հոսանքում  
 Զաղաց էր բանում. և ձեռք էր ստուչում,  
 Ով մի հինգ րոպէ պահում էր մէջը.  
 Կըսրում էր խորակ ալմազի նըման—  
 Այնքան սառն էր նա. Նըրա ցայտերը,  
 Խնչպէս աշամանդ, փայլիլում էին  
 Արևի ամեն մի ճառագայթից,  
 Եւ ինչ պարզ էր նա, ինչպէս թափանցիկ.  
 Նրա մէջ ողկոցզը ծածկւում էր կարծես  
 Մարգարիտներով... Այս, ժողովուրդ,  
 Մեր գիւղի համար մի անդին գանձ էր  
 Են կաթնաղբիւրի յորդառար ջուրը,  
 Որովհետեւ նա լիացնում էր մեզ,  
 Եւ մեր այդիքըն ու անդասպանը!

Ե Դ. Ի. Ա.

Հան, լաւ աղբիւր էր, ափսոս, փըճացաւ!

ՍՈՂՈՄՈՆ

Բայց այսպեղ նըստած բոլոր ծերերը  
 Ենշուշտ յիշում են Տիրոջ պարիժը—

Այն մեծ հեղեղը, որ հիմնայագակ  
 Կործանեց տրներ, աւերեց այգիք,  
 Եւ այն աշբիւրը, որ մինչև այսօր  
 Ոչ ոք չը զիվէ, ուր անհետացաւ—  
 Կարծես անդունդը կրլանեց նըրան:  
 Հիմա մեր յոցալ մեր գետակըն է,—  
 Բայց միայն Սագւած գետակ համարէ,—  
 Մեղանից վերև քանի գիւղեր կան,  
 Որ ըսպառում են նըրա ջըրերը,  
 Եւ միայն չընչին մասը բաց թողնում  
 Դէպի մեր գիւղը... Ներթի պարձառով  
 Ծագում է կոււ, հայոցանք և ծեծ...  
 Եւ այսպէս, ջըրի սակաւութիւնից  
 Մեր բարք ու վարքը վայրէնանում է:  
 Սիրտ է մըշկըսում, երբ մարդ գետնում է,  
 Որ մինչև անգամ մեր ծառներըն էլ,  
 Իրանց խընամուլ պէրերի նըման,  
 Ծարաւից կախ են դրցում գլուխները  
 Եւ կարծես լալիս. մինչեւ մի կաթիլ  
 Զուր հասնի իրանց, շապերը թոռմում  
 Եւ չորանում են...

## Մ Ա Յ Ա Ք

Ի՞նչ որ ասում ես,  
 Սոլոմոն, ճիշտ է և իրաւացիւ  
 Բայց ինչ կարող ենք դըրա դէմ անել  
 Մենք, խելմ, հասարակ մահանացուներս?

## Մ Ա Յ Ա Ք

Հենց այդ է հարցը, ինչպէս Մելքոնը  
 Ու շիշ նըկապեց, ինչ անենք դըրա դէմ՝  
 Երկընքից ջըրեր ցած բերենք նիրըն—  
 Մեր ուժից վեր է: Իսկ դեպինի պակին  
 Հորերի ջուրը մեծ մասամբ աշի  
 Եւ կամ անտէպը է:

## Ս Ո Ղ Ո Մ Ո Ն

Զեղնից, բարեկամք,  
Յանկութիւն լինի, ինձնից—ցոյց տալ ձեզ  
Դըրա հընարլ,—և մենք կունենանք,  
Ասպուծով, մի օր հրեղէն աղբիւր!...

Եղիս. (Նկագելով շուրջը անհանգիստ շշուկ)  
Մելիք, այն կողմում բարձր են խօսում  
Եւ խանգարում են:

## ՄԵԼԻՔ-ՑԱԿՈԲ

Լուռ կացեք այդրեղ!  
Փողովականներ, ուշադըրութիւն!...

## Ս Ո Ղ Ո Մ Ո Ն

Ինչ պիտի յայտնեմ, ոչ թէ մի օրւայ  
Մըրածողութեան ծընունդ է, այլ շան  
Եւ շափ օրերի: Դուք ինձ շափ անգամ  
Տեսած կը լինիք այն քարաժայոի  
Մի ծայրին նըստած. և անշուշփ մէկը  
Ըստ կը լինի. «Մեր Սողոմոնը  
Կամ ճըգնաւոր է կամենում դառնալ  
Եւ կամ ցընդեկ է, որ այծեամի պէս  
Ծնցնում է օրը ժայռերի գրլիսին»:  
Բայց ահա այնպեղ, առանձնութեան մէջ,  
Ես խորհում էի աղբիւրի մասին:  
Եւ բախտաւոր միպէ ինձ լուսաւորեց:  
Հիմա լըսեցէք: Մեր սարի երեւ  
Կայ մի ասկառած, որի լոնջի վրայ  
Երեսում է ծերպ, լըրացած լուսնի  
Սկաւառակի չափ, որ թըլուճ էր ինձ  
Երբեմն արծւի կամ ուրուրի բոյն:  
Բայց հետեւելով ջըրի շիթերին,  
Որ ծորում էին ժայռի ճեղքերից,

Եւ, սրորորի մօս միախառնւելով,  
 Վաղում առւի պէս, ես գուշակեցի,  
 Որ այնուեղ անշուշր թագնւած է սիրուն  
 Սղբիւրի մի ակն։ Վըճռեցի վերև  
 Բարձրանալ—իսկոյն կադար ածեցի  
 Իմ ցանկութիւնը, և, մագլցելով,  
 Հասայ այն ծերպին և, խուռչի մէջ  
 Զըգելով աչքս—ինչ պեսնեմ—մի խոր,  
 Գողպրիկ գաւագան, որ բընութիւնը  
 Խւր մեծահանճար վարպետի ձեռքով  
 Կերպել էր այնպեղ, քարաժայոի մէջ,—  
 Ծովացած ջուրը այնպէս ջինջ ու սպարզ  
 Եւ այնքան պաշուկ, որ կարծես թէ ես  
 Կանգնած էի ոչ ջըրամբարի մօս,  
 Այլ սառցարանի մուգքի առաջեւ...  
 Այնպիսի անուշ և անասելի  
 Քաղցր զովութիւն վլցեց երեսիս...  
 Ես լսքանչացայ, սըրպի բերկրութեամբ,  
 Գոհութեամբ լըցւած բացականցի.  
 Ահա մեր զիւղի իսկական գանձը!  
 Սըրա ջըրերը մեր զիւղի միջում  
 Պէտք է քըչքըչան, սըրա ջըրերով  
 Մեր զիւղը նորից պիտի կանաչի  
 Եւ փարթամանայ!...»

## Մ Ե Լ Փ Ո Ն

Ինչ նոր բան է այդ?

Ամեն մի հովիւ, որ ոչխարներին  
 Տանում է սարը արածացնելու,  
 Քո ասած սառը ջըրից խըմում է  
 Եւ խըմացնում իր ոչխարներին։

## Մ Ա Ր Ո Ւ Ք

Ինչ? Մոռացել էք ձեր մանկութիւնը?  
 Մենք քանի անգամ ուրախ խըմբերով

Վաղվեգել ենք այն ժայռերի գլխին,  
Կապուի-ճանկ» ծաղկի եղեից ընկած?  
Եւ քանի անգամ քո ասած ջըրով  
Զովացրել ենք մեզ մանուկ հասակում...»

## Ս Պ Ղ. Ա Մ Ո Ւ

Բայց այն ով գիտէր, «որ ժայռի կըրծքում»  
Կայ սիրուն մի ակն, «որ ինչպէս մի մայր  
Իւր անուշ կաթով, կարող է կեանք տալ  
Մեր ամբողջ գիւղին իւր անապական,  
Անարափ ջըրով?» Բայց այդ չէ հարցը  
Այլ հարցը այն է, «որ մեր մօրերքում»  
Կայ մի աղբերակն, և նըրա չուրը  
Մենք կարող ենք մեր գիւղի մէջ բերել:  
Եւ ահա այդ է իմ առաջարկը,  
Որի համար և այսքան ժողովուրդ  
Խըմբւել է այսուեց:

## ՄԵԿԸ Ճ-Ռ. Ա-Վ. ՐԴՒՑ

Հիանալի միոք!

## Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ը

Օրհնւի այն մարդու բերանը, «որ մեզ  
Այդ միոքը յայրնեց!»

## Ե Ր Բ Ո Ր Դ Ը

Երնէկ այն օրին,  
Երբ մեր գիւղի մէջ աղբիւր կը վազի!...»

## Ե Ղ. Ի Ա.

Դա կը լինի մի Ասպծոյ պարգև,  
Որ բաշխում է մեզ սրա արդար ձեռքով.

## Մ Ե Լ. Փ Ո Ւ

Եւ ժողովուրդը արդէն հաւաքաց,  
Որ գիւղը մի օր աղբիւր կ'ունենայ!...  
Նիծաղելի է!... Դուք, միամիզներ,

Ինչ հեշտ հրապուրւել և խաբւել գիրկէք!  
 Զըմինի թէ դուք կարծեցիք, այսպեղ  
 Զեր առջև կանգնած խօսում է մի նոր  
 Խիկար-իմաստուն և կամ Սոլոմոն,  
 Որ Ասպւածային պատգամ է յայտնում?  
 Հընարը լաւ բան ասելը չե, ոչ,  
 Այլ այն, որ խօսքի կարար ածես!  
 Սոլոմոնը մեզ առաջարկում է  
 Սարի եփեից ջուր բերել այսպեղ.  
 Բայց մըսածեցէք—կարելի է այդ?  
 Խելքի մօպիկ է?... Ինչպէս? Ուրեմն  
 Այս սարը քանդենք? Ժայռերը պոկենք  
 Խրանց գեղեցից?...

## Ս Ա Ղ Ո Մ Ո Ն

Ո՛չ, ինչ կարիք կայ  
 Սարեր քանդելու, ժայռեր պոկելու?  
 Ո՛չ, ես գըպել եմ այն ճանապարհը,  
 Որով առւակը, միայն մի քանի  
 Պըտոյս անելով սարի լանջի վրայ,  
 Ինչպէս լեռնային սըրընթաց վրապակ,  
 Կայրառ և ուրախ կը վազի ներքեւ  
 Եւ մեր գիւղի մէջ անուշ ձայն կը պայ...

## ՄԵԼՔՈՆ (հեղնական ծիծառով)

Միայն քո գըլխում անուշ ձայն կը պայ,  
 Սոլոմոն, բայց ոչ մեր գիւղի միջին...

## Ս Ա Ղ Ո Մ Ո Ն

Բարի կամք է այէպք, և յորդ ալբիւրը,  
 Ես ասում եմ ձեզ, անուշ ձայն իը պայ  
 Մեր գիւղի միջին!...

## Մ Ե Լ Ք Ո Ն

Եթէ թոյլ էլ որանք,  
 Որ ճանապարհը դու մըսածել ես

Եւ արդէն գիրես, բայց ես քեզ ուրիշ  
Արդելքներ կ'ասեմ: Որորեղից գըպնենք  
Մենք պարապ ձեռքեր, որ սեփական գործ,  
Աշխափանք թողած, օրեր, ամիսներ  
Քրինաթոր բանեն, քանդեն քարափներ,  
Ժողովեն կաշկառ, ճանապարհ հարթեն  
Եւ հողը փորեն?... Ասենք, այդ էլ կայ:  
Բայց ինչպէս գըպնենք, ինչպէս հաւարենք  
Մենք այնքան գումար, ո՞ր մշակներին  
Եւ նըրանց բոլոր գերդասպաններին  
Օրեր, ամիսներ գուցէ և գարի  
Ազրուսո բանք, ալահենք?...

## Ս Ո Ղ Ո Մ Ո Ն

Մենք ամենքըս էլ  
Հերթով կ'աշխափենք. ես առաջինը  
Իմ ձեռըս կ'առնեմ բահը և լինգը.

Ե Դ, Ի Ա.

Եւ ես էլ քեզ հետ:

## Ս Ո Ղ Ո Մ Ո Ն

Մեզ հետ էլ նոյնպէս  
Ուրիշ շագերը, և կը սկսի եռալ  
Մեր աշխափանքը... Մեծ գումար պէտք չէ:  
Ամենաշափը, ամենաշափը  
Մի չորս-հինգ հազար, և արդէն գործը  
Գըլուխ եկած է...

## Մ Ե Լ Ք Ո Ն

0, չորս-հինգ հազար!  
Հէնց այդ էր սպակաս մեր ալքապ և խեղձ  
Այս ժողովը թիւ! Ինչ հեշտ է ասել—  
«Մի չորս-հինգ հազար!»... Առանց այն էլ մեր  
Այնքան չարչարանքն ու այնքան գումար

Ի դերեւ ելաւ... Զուր վորձեր արինք  
Մեր Հին աղբիւրը մի կարգի բերել,  
Նորից ջուր հանել. բայց դուք հօ տեսաք,  
Ար ոչինչ չընկաւ մեր ձեռը, ոչինչ!...  
Այդպէս կը լինի և հէնց այս անդամ!

## Մ Ո Ղ Ո Մ Ո Ն

Փողը թող լինի ունեորներից,  
Խսկ աշխատանքը — չունեորներից!

## Մ Ե Լ Ք Ո Ն

Ես սար ու քարում շաղ դալու համար  
Աւելորդ մի հաս կոպէկ էլ չունիմ!

## Մ Ա Ր Ո Ւ Ք

Ես երս,—ինչպէս Մելքոնն ասաց:

Մէկը ժՈՂՈՎՐԴԻՑ

Եթէ այսպէս է ասում հարուստը,  
Էլ ինչ կարող է ասել ալքատրը?

## Մ Ո Ղ Ո Մ Ո Ն

Մելքոն, դու արի, մի՛ հակառակւիր.  
Տես—քեզ է նայում այս ժողովուրդը.

## Մ Ե Լ Ք Ո Ն

Ո՞չ, ժողովուրդը ինքը խելք ունի.  
Եթէ ուզում է, կարող է և դալ  
Համաձայնութիւն. և այն ժամանակ  
Ես կը մնամ մենակ—ամենից յիմար  
Եւ կամ ամենից խելօքը այսդեղ:

## Մ Ա Ր Ո Ւ Ք

Աւելի լաւ է, ձայներ հաւաքենք:

## Մ Ե Լ Ք Ո Ն

Լաւ, հաւաքեցէք:

## ՄԵԼԻՔ-ՑԱԿՈԲ

Ճողովուրդ, թող նա,

Ով համաձայն է Սողոմոնի հետ,  
Վեր կենաց գիշից. ով հակառակ է,  
Թող նըարած մընայ!

(Ժողովուրդը նստած է մեռմանք վեր և կենում և էլի նստում. Ոսկի վրայ և միան Եղիան, Ռափաէլը և որա ընկերները).

## ՄԵԼԻՔԸ (Հպարտ)

(Վեր է կենում) Հիմա ամեն մարդ կարող է զընալ  
Իր բանին զործին:

## Ս Ա Դ. Ո Մ Ո Ն

Ե՛Կ, Ասրւած ձեզ հետ!

Գընացէք!... Ես էլ,—թող վըկայ լինի  
Ահա այն խաչը զըմբեթի ծայրին,  
Գընում ևմ մենակ իրազործելու  
Իմ այս հանրաշահ ձեռնարկութիւնը,  
Այն երկելի և ազնիւ զործը,  
Որից դուք այդքան փոքը հոգութեամբ  
Նըրաժարւեցիք!... Այսուհետ չը կայ  
Ենձ համար շուկայ, այլ հոգս և հանդիսար.  
Այսուհետ բահն է իմ գաւազանը,  
Իմ աղբիւրն է իմ խօսակիցը,  
Օրնիբուն պիտի քըրպնաջան բանեմ  
Իմ ձեռքով վարձած մըշակներիս հետ.  
Իմ ունիցածը պիտի վեր դընեմ,  
Պիտի չը մեռնեմ մինչև այն օրը,  
Երբ ծըրազիրը յանգած կը լինի  
Բարի վախճանի!... Խսկ նա, որ այսուհետ  
Ծաղրելով ծաղրեց իմ առաջարկը  
Եւ ձեր բարիքին խոչընդուռ եղաւ,  
Թող չը մոռանայ այս օրւայ օրը!...  
Ես մարգարէ չեմ, բայց հաւափացէք  
Իմ գուշակութեան,—կը գայ ժամանակ,

Եւ մեր գիւղի մէջ, ձեր աչքի առաջ,  
իմ ջինջ աղբիւրը քաղցր ձայն կը դայ,  
եւ, —վըստահ եմ ես, —Դուք բոլորը էլ  
կը մըստարերէք այս օրւայ օրը!... (Գնում է):

ՌԱՓԱՅԵԼ. (Հեղեղելով հօրը)

Հայր, Դու մենակ չես! Ես էլ քեզ հետ եմ!

ԵՊԻԱ. (Հեղեղելով Սողոմոնին)

Ես էլ, Սողոմոն, քո օգնականք:

Վա ըստ գոյն թ:

## ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

ՓՈՂՈՑ: ՄԵԼՔՈՆԻ ՏԱՆ ՄՕՏ

(Երեսում են երկու գեղջուկ):

1-ին ԳԵՂՋՈՒԿ

Այս գիշերւանից հկեղեցու մէջ  
կը սկսւի հըսկում: Թող ժողովուրդը  
Զերմեռանդ սըրտով հաւսպւի մէկփեղ  
Եւ ծունկ խոնարհած սեղանի առաջ՝  
Սուգ անեն, ողբան և արփասւագին  
Աղօժեն. գեսնենք, գուցէ Տէր Ասրւած  
Մեղքանայ և մեզ դայ առափ անձրե...

2-րդ ԳԵՂՋՈՒԿ

Բայց նայիր այնպեղ: Տես, սարի գըլիսից  
ինչ ծանըր-ծանըր բարձրանում է սի.  
Բըլրաշափ մի ամսու:

1-ին ԳԵՂՋՈՒԿ

Այդպէս պատահեց  
Եւ երէկ, ուղիղ այս ժամանակիս.

Երեւաց մի ամպ, մի կայծակ խըփեց,  
Մի անգամ գոռաց, և առանց մի հապ  
Կաթիլ անձրեի կը բիին եր քաշւեց  
Եւ ցըրիւ եկաւ:

## 2-րդ ԳԵՂՋՈՒԿ

Ոչ, կամաց կամաց  
Մւծանում է նա, և հորիզոնը  
Մըթնում է արդէն... Ախ, թէ Ասպեծոյ  
Աղորմութիւնը շուր վըրայ հասնէր!...  
Եթէ ոչ, ահա երկու ամիս է,  
Երկինքը բարձրից կը րակ է թափում,  
Այլում, խանձում է վարուցանք, ծառեր,  
Բայց դեղի համար զոնէ մի անգամ  
Այսքան ժամանակ մի կաթիլ չընկաւ...

## 1-ին ԳԵՂՋՈՒԿ

Անսէրութիւնը երբ որ բուն դըրեց  
Ֆողովը դիմ, Ասպւած էլ նրանից  
Երես կը դարձնի...

## 2-րդ ԳԵՂՋՈՒԿ

Եյս ինչ պապիծ էր,  
Արարիչ Ասպւած, որ դու մեզ տըւիր!  
Փճացաւ այգիս և անդաստանըս!  
Եզու ը իմ խոփը պապուեց արգաւանդ  
Եմ արգոի կուրծքը. իզուր եզներըս  
Քրոնաթոր եղան ինձ հետ միասին,  
Երեգակի դակ հլու դանելսվ  
Գութանի լուծը. հազիւ մի կանգուն  
Բարձրացաւ հասկը, ջըրի պապակից  
Նըրա հասակը շուրով կանգ առաւ,  
Հացահատիկը չորացած մընաց...  
Չորացաւ թթի իմ ծառափունկը,  
Որ միւս գարնան դերեւ այխոի դար

Ներամիս համար. դեղնեց իմ վազը,  
Եւ վրափառ ճիւղը հազիւ է պահում  
Անհւթ ճիթերը... Այդին այլ ևս  
Այդու տեսք չունի. աշնան սկըզբում,  
Տերեաթափին աւելի ուրախ,  
Աւելի սիրուն է լինում այդին.  
Մառերը տըխուր, գըլուխները կախ,  
Փոշիով պարած՝ կարծես թմրում են...  
Մինչեւ իսկ հողը՝ կոշտացած և չոր  
Ճաքեճաք եղած՝ հազար բերանով  
Կարծես վերեկից անձրեւ է հայցում...

## 1-ին ԳԵՂՋՈՒԿ

Ինչ ես լաց լինում, եղբայր. իմըս էլ  
Պոնից պակաս չէ. Ասպւած ողորմած  
Եւ բարեգութ է. եթէ նա չանսայ  
Մեր աղաչանքին, մեր արդար մանկանց  
Զայնը կը հասնի Ամենաբարձրին:  
Յոյսըդ մի՛ կըտրիր... Տեսար? Կայծակ էր!...

## 2-րդ ԳԵՂՋՈՒԿ (Խուլ որոտում)

(Գլխարկները հանում, երիսները խաչ են անում)  
Բարերար Ասպւած! ...

## 1-ին ԳԵՂՋՈՒԿ

Ես քեզ ասում եմ,  
Յոյսըդ մի՛ կըտրիր. հըսկումը չեղած,  
Մեզ լըսեց Ասպւած, և սուրբ Յակոբայ  
Սլքիւրից բերած ջուրը, թափորը  
Չուր տեղը չ'անցաւ: Նախավըկացի  
Սուրբ աջըն էլ մեզ օգնական եղաւ...

## 2-րդ ԳԵՂՋՈՒԿ (Կրկին կայծակ և որոտում)

Մեռնեմ այդ ձայնին, զօրաւոր երկինք!  
Դէ հիմա թափիր, հիմա վեր ածա

Առապս անձրելդ!... (կրկին կայծակ և որո՞ո)   
 Թամի բարձրացաւ.

Ահա երեսիս մի կաթիլ ընկաւ.   
 Փառքը շատ, Ասրւած!...

1-ին ԳԵՂՋՈՒՄ

Ահա մէկըն էլ  
ՊԺ ձեռքիս ընկաւ... (որո՞ո և կայծակը քածախակի)

2-րդ ԳԵՂՋՈՒՄ

Նայիր—ինչ արագ  
Պալիս են այս կողմ սեսե թըլսովերը...  
1-ին ԳԵՂՋՈՒՄ

Ինչ մընեց օրը!

2-րդ ԳԵՂՋՈՒՄ

Ծիծեսնակերը  
Հէտալով ինչպէս կորում են օդը!...

1-ին ԳԵՂՋՈՒՄ

Բայց վայ մեզ, եթէ այս խելառ քամին  
Ամոկերը քըշի... (որո՞ումը զնալով թուլանում է)

2-րդ ԳԵՂՋՈՒՄ

Հէնց այդպէս էլ է...  
Արագ գալիս են և արագ անցնում,  
Եւ այսքան կայծակ—որովանկից յետ,  
Ախ, անդութ ամսկեր, միթէ միմիայն  
Արկու հար կաթիլ մեզ բաժին ընկաւ?...  
Նախիրը հանդից երբ դուն է գալիս,  
Սյն կովը, որի կուրծքը շատ է լի,  
Կաթը չի պահում, կաթկաթում է նա,  
Հողը թաց անում, մինչեւ տեղ հասնի...  
Թակ այս ամսկերը, որոնց ջըրերով

Ծովը կ'լըցէր և գես կը վաղէր,  
Այսքան անողոք և այսշափ ժըլտոր]...

## 1-ին ԳԵՂՋՈՒԿ

Գընմնիք, բարեկամ: Ինչովէս էլ լինի,  
Անձրե պիտի դայ: Եթէ ոչ այսօր,  
Վաղը անողադռնառ:

## 2-րդ ԳԵՂՋՈՒԿ

Քո բերնի խօսքը  
Թո՛լ Ասպաւած լըսի:—Արի, ասում եմ,  
Այսպիս ման զալով բարձրանանք վերի,  
Ուր Սոլոմոնի մարդիկ օրն ի բուն,  
Բոլոր յոյսերը Ասպըծուն կապած՝  
Աշբիւրի զործը առաջ են գանում:

## 1-ին ԳԵՂՋՈՒԿ

Յայց թէ յաջող եց, խուսովանք լինի,  
Էերած աշխիրը մեծ բան կը տեսնի,  
Մի այսշափ դըժւար և վաս Ժամանակ.  
Երբ եօթ շարաթ է երկինքը կապւած՝  
Անձրե չի դոլում... Ուղում ես, գընմնիք:  
(Գնում են):

## ԵՐԵՒԱՅԹ. II

ԱՍՓԱՅԵԼ. ՕՍՍՆ (լուսամուտի մօտ).

Օ Ս Ա Ն

Ուափայէլ?...

Ո Ա Փ Ա Ց է Լ.

Օսան?... Այդուհեղ ես, ջանլսա?  
Կարօպից մեռաց, մինչեւ քեզ դեսնեմ:

Օ Ս Ա Ն

Ուափայէլ, զիսիս, հայրըս գալիս է  
Օպարութիւնից: Այսօր նամակ կար:

## Ռ. Ա. Փ Ա. Յ է Լ

Հայրըդ գալիս է? Ինչ կայ որ? Թող գայ:  
 Ինչ լինելու է, թող շուրով լինի:  
 Հայրըդ դանակը մեր բըկին Դըրած՝  
 Ոչ մորթում է մեզ և ոչ բաց թողնում:  
 Եւ երկուսը ել, երկու մոմի պէս,  
 Վառուումհալում ենք սիրոյ կըրակից . . .

## Օ Ս Ա. Ն

Այս, իմ Ռափայէլ, ինչ կանենք, թէ մեզ  
 Միմեանցից բաժնեն? . . .

## Ռ. Ա. Փ Ա. Յ է Լ

Միմեանցից բաժնեն?  
 Ինչպէս այդ խօսքը թըսցըիր բերնիցըդ?  
 Ով ուզու է միմեանցից բաժնել,  
 Գըլինից ձեռք քաշած մարդ պիտի լինի.  
 Թող առաջ զընայ քահանայի մօք  
 Հաղորդի, յեզոյ .. Բաց ոչ, Օսան ջան,  
 Չեն համարձակի իլ! Հայրըդ էլ զիտէ  
 Եւ ամեն մէկը լաւ իմանում է,  
 Որ Սողոմոնի որդու զընդակը  
 Հասնում է ուղիլ իւր նըպարակին,  
 Եւ Ռափայէլի ձեռքից չեն ողըրծնում  
 Նոյն իսկ օդի մէջ թըսող ագռաւը,  
 Յինը և բազէն . . . Ոչ, դու իմըս ես,  
 Հոգուս հարորը! . . . Աշխարհի աչքը  
 Թող քեզ վրայ լինի — միւնոյն է.  
 Օսանի տէրը և տիրականը  
 Ռափայէլըն է! . . .

## Օ Ս Ա. Ն

Զան, ջան, Ռափայէլ! . . .

Դու ես իմ տէրը և տիրականը,  
 Յիրոք ու չիդեալս և իմ մաւրազըս!

Ռ Ա Փ Ա Յ Ե Լ,

Աղ մի ծուռ աչքով քեզ վըրայ նացի,  
Ես նըրա ծուխը վեր կը բարձրացնեմ!

Օ Ս Ա Ն

Երնէկ, Ոտփայէլ, հայրըս, գայ թէ չէ,  
Քո հօր հետ հաշուեն...

Ռ Ա Փ Ա Յ Ե Լ,

Կը հաշուեն, Օսմն,  
Մի օր կը հաշուեն! Եւ, եթէ միայն  
Մեր հայրերը մեր բարին են ուզում,  
Զեռք ձեռքի կը դան և կօրհնեն որդոց!  
Այդ յոյսըն է, որ ինձ կեանք է փալիս  
Եւ վառ է պահում բոլոր եռանդըս,  
Եւ առաւօտից մինչեւ երեկոյ  
Արեում ուրքնել և աշխարհելը  
Մահըր չէ թըւում...

Օ Ս Ա Ն

Անցեալ դարւանից մինչեւ այս ամառ  
Ինչքան ոյժ, ինչքան աշխարհանք Դըրիք  
Աղքիւրի վըրայ... Երնէկ իմանամ:  
Ոտփայէլ, գոնէ, ձեր այդքան երկար  
Չարչարանքից յետ, գալու է աղքիւր,  
Թէ ձեր աշխարհանք և յոյս—բոլորը  
Զուր է կորչելու...

Ռ Ա Փ Ա Յ Ե Լ,

Ոչ, Օսան ջան, ոչ!  
Մինչեւ մի ամիս, Ասուած յաջողի.  
Գիւղում այնազիսի աղքիւր քըշքըշայ,  
Որ քո հրեշտակի չըքնալ պապկերը  
Նըրա երեսին լոյս դայ և շոշայ...  
Աղքիւր եմ ասում, Օսան ջան, աղքիւր,

Որ նըրաւ ամեն մի կոթիլ չուրը  
Նոյնքան պարզ, մաքուր, անարար լինի,  
Որքան մեր սէր!...

Օ Ա Ա Ն

Երնէկ այն օրին!...

ԱԱՓԱՅԵԼ, (Ակադեմի հօրը)

Հայրւ գալիս է, օսան ջան...

Օ Ա Ա Ն

Գընա,

Որ քեզ չը սեսնի մեր գան մօր կանգնած...  
Առ այս ծաղիկը, Առափայէլ, ահա  
Համբուրում եմ ես—դու էլ համբուրիր.  
(Զգում է մի ծաղիկ, որ Առափայէլը վերցնում է, համբուրում և  
հոր քաշում).

## ԵՐԵՒՈՅԹ. III

ԱԱՂՈՄՈՆ, ԱԱՓԱՅԵԼ,

Ա. Ա. Փ. Ա. Ց. Ե. Լ.

Հայրիկ, տըկար ես? Խնչու ես տընքում?

Ս Ա Գ. Ո Մ Ո Ն

(Մոտիսան) Վաղը... աղբիւրի... շէնքալն ենք պցումն (Գնում է կրթ-  
նած Առափայէլին).

## ՊԵՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

(Գիւղի մէջ մի լնդարձակ հրապարակ, որի ճակարին երեսում  
է փոքրիկ մագուռի չափ մի նոր կամարաձև շէնքս: Զորակից ջուրը  
թափւում է քարէ աւազանի մէջ: Աւազանի մօր՝ սրբարաշ վէմի  
վրայ նագած է Առջումնը, ձեռքին բոնած մի արծաթեաց զաւաթ:  
Բազմութիւնը գնալով սւարանում է: Գիւղացիները՝ մեծ ու փոքր,  
տղալաղիկ, մարդիկ և կանայք—պօնային դրամագրութեան մէջ

են, ուրախ զւարթ։ Իւրաքանչիւրը հաղած է իւր ունեցած լաւ զգեստը։ Հասարակութիւնը խոսում է աւելի աղբիւրի շուրջը։ Միմեանց հետ աշխոյժ խօսում են, ցոյց են տալիս դեպի աղբիւրը, Սողոմոնի վրայ և կարծես գոհութեամբ ձեռքները վեր բարձրացնում դեպի երկինքը։ Խառը շշուկի միջից պարզ որոշում է աւազանի մէջ թափող ջրի ձայնը։

Առաջին պատկերի և այս երրորդի միջև անցել է մօս մի դարի ժամանակամիջոց)։

## Ե Ղ Ի Ա

Նայիր, Սողոմոն, տես ամբողջ զիւլը  
Խմբւում է այսպեղ, քո աղբիւրի շուրջ։  
Եւ հասպարակը նըման է պէսպէս  
Ծաղկունքով պըճնւած մի դաշտավայրի։  
Կարծես թէ այսօր Կարմիր-Կիւրակի  
Կամ Վարդավառ է։ Ուր որ նայում եմ,  
Ամենքի դէմքին գեսնում եմ անհուն  
Գոհունակութիւն։ ամենքի սիրաը  
Լըցւած է սիրով և երախտիքով։  
Իւրաքանչիւրը, անունըդ տալիս,  
Պարկառանք է զգում իւր հոգու խորքում։  
Այն երկարագու նեղութիւնները,  
Որ դու չանձդ առար այս անապական  
Աղբիւրի համար, մի ծերի ոյժից  
Վեր էին թըլւում։ բայց դու, Սողոմոն,  
Զինւած եռանդով և գոկունութեամբ,  
Յաղթեցիր բոլոր խոչընդուներին  
Եւ իմասպունի հեռափեսութեամբ  
Այս ուրախ օրը մարզարէացար։

(Ցոյց տալով դեպի ալբիւրը)  
Եւ ահաւասիկ բոլոր ուրքնութեանց  
Փաղցրիկ վասրակը, բոլոր յոյսերիդ  
Բարի վախճանը...

## Ս Ո Ղ Ո Մ Ո Ն

Եղիա, ես սըրպանց  
 Ելնորհակալ եմ, որ բարեկամիդ  
 Մենակ չը թողիր այն օր, երբ այսպես  
 Աղքիւր հանելու իմ առաջարկը  
 Ոչ ոք չընդունեց և մինչև անդամ  
 Խնձ ցընդամիր կարծեցին ոմանք...  
 Դու էիր, որ իմ աջ թելս եղար  
 Աշխափանքներիս բոլոր ժամանակի:  
 Երբ մարդ մենակ է, յուսահարում է,  
 Երբ ընկեր ունի, ծանըր բեռըն էլ  
 Թեթեանում է...  
 Առ, քեզ է վայել ամենից առաջ  
 Այս անմահական պարզ ջըրից խըմել:  
 (Առաջարկում է նրան արծաթեակ թասով ջուրը, որ նա  
 փերցնում խմում է):

## Ե Ղ Ի Ա.

Սողոմոն, ահա այս գործի համար  
 Համարեա ոչինչ չը խընայեցիր.  
 Ոչ դարիք, ոչ գոյք, ոչ հանդըսութիւն:  
 Բայց այնպիսի վարձ դու վասփակեցիր,  
 Որ վոխարինել նըրան չէ կարոշ  
 Աշխարհում ոչինչ—համագիւղացոց  
 Անսահման սէր և իւր յարգանքը:  
 Յրհնեալ լինի քո բարի անունը  
 Եւ թողլ յաւիգեան անմոռաց մընայ  
 Բոլորիս սըրպում՝ սերընդից սերունդ  
 Եւ որդոց որդի! (Եթ է քաշւում և դեղ է դալիս մի այլ ծե-  
 րունու, որ մօտենում է Աողոմոնին երկու թոռնիկների հետ):

## Ծ Ե Ր Ո Ւ Ն Ի

Սողոմոն, մեզ էլ  
 Արժանացրու քո անապական  
 Աղքիւրի ջըրին.

1-ին ԹՈՒՆԻԿ

Ինձ էլ, որապէ!

2-րդ ԹՈՒՆԻԿ

Ինձ էլ՝

Ս Ո Գ. Ա Մ Ո Ն

Այն, առաջ ձեզ, առաջ ձեզ կը տամ,

Փոքրիկ մանու կներ, առաջ երեխան

Պիորի յագեցնի ծարաւը, յետոյ

Միայն ծեր մարդը։ Խըմեցէք, որդիք.

(Առաջարկում է Արքաները խմում են)։

Ինչպէս է?

1-ին ԹՈՒՆԻԿ

Շաբար լու։

2-րդ ԹՈՒՆԻԿ

Սառցի նըման է.

Արամը առաւ։

ԾԵՐՈՒՆԻ (Խոռնիկին)

Հիմա սպացեցէք այս սպազի ձեռքը։

Նա է ձեզ համար այս ջուրը բերել։

(Երեխաները համբուրում են Սովորոնի ձեռքը, և նա օրհնում է նրանց)։

Ս Ո Գ. Ա Մ Ո Ն

Ապրէք, լաւ ապրէք և երկար ապրէք։

Ասպաւծ օրհնի ձեզ, փոքրիկ մանուկներ!։

Սարի եպիսից այս քաղցր ջուրը

Ձեզ նըմանների համար եմ բերել,

Որ դուք վայելէք, ամէք, մեծանաք

Եւ խելօք, առողջ զաւակներ լինիք։

Իսկ մենք, ծերերըս, մեր տեղը շուպով

Ձեզ կը տանք, այն։ Այսօր չէ վաղը—

Այդ Ասպաւած զիսկ, —ինձ գերեզմանը  
իւր ծոցը կ'առնի և, ալս, այլ և ըս  
(Զգացւած) Զը պիտի լրտեմ ազիզ աշբիւրիս  
Այս քաղցր ձախնը, այս կը էլլոցը...  
Բայց Դուք, որդիքս, որ Դեռ շատ երկար  
Պիտի սքանաք այս աշբիւրի վրայ,  
Ինձ չը մոռանաք, այլ ամեն անդամ,  
Երբ կը գաք այսպես, ձեր այրւած սիրուը  
Զովացընելու, ինձ միշտ կը լիշեք,  
Ոշորմի կը տաք ծեր Սողոմոնին...  
(Եկրունուն) Ալմար, Դու էլ սրբա համը զես  
Եւ ասա, եթէ մըտաբերում ես.  
Ինչպէս էր մեր Հին-աշբիւրի ջուրը,  
Եւ ինչպէս է աս? (Ծերունին խմում է, չի ճւանքով գլուխը  
շարժում և մի պահ լուռ մնում):

## ԾԵՐՈՒՆԻՆ

## Մեր Հին-աշբիւրը

Աւնէր գովելի և պատւական ջուր.  
Պարզ էր նա, ինչպէս հալւած մարդարի,  
Կաթնահամ, սառը... Բայց թող ջուխու աչքով  
Կուրանամ, —եթէ եփ չեմ սովորել  
Լաւըն ու վատը իրարից ջոկել...  
Սա—ուրիշ բան է!

## ՍՈՂԱՄՈՆԻ

Ես էլ կարծում եմ,  
Սա—ուրիշ բան է!

## ԾԵՐՈՒՆԻՆ

## Լոյս Դառնայ հայր,

Սողոմոն, նա էլ քեզ պէս մեր զիւշի  
Բարերարըն էր. նա հին կամուրջը  
Վերանորոգեց, Դու Հին-աշբիւրը:  
Զեր անունները թող տնջընջելի

Մընմն յաւիտեան ամենքիս սըրպում!

(Ծերունին քաշւում է մի կողմ, և առաջ է զալիս մի երիւ դասարդ գիւղացի):

ԵՐԻՑԱՍԱՐԴ

Սողոմոն ապեր, այս երիտասարդ  
Խըմբի կողմից եմ շընորհաւորում:  
Դու մեր բոլորի բարի հայրըն ես,  
Մեր սիրելին ես: Այս ազնիւ դործով  
Մեզ համբերութեան և աշխարանքի  
Օրինակ ուլւիր. Դու բարձրացըրիր  
Մեր հոգին, մեր մէջ եռանդ վառեցիր,  
Եւ վըսեմ գործի անհուն դենչանքով  
Լի է մեր հոգին! Տղերք, երկար կեանք  
Եւ երջանկութիւն մաղթենք մեր հօրը  
Եւ կեցցէ» կանչենք!...

(Երիտասարդները կեցցէներով լցնում են օդը):

Ս Ո Պ, Ո Մ Ո Ն

Ապրեք, որդիքա:  
Տայ Ասուած, որ այս մաքուր աղբիւրը  
Սէր և հաշփութիւն բերի մեր գիւղին!  
Այս առար ջըրով մենք կը լիանանք,  
Եւ մինչև անդամ մեր այգիներին  
Բաժին կը հասնի: Եթէ այսուհետ  
Կապւի երկինքը, և անձրւ չը գայ —  
Էլ առաջւայ պէս չենք մընալ անճար.  
Այս ցուրդ հեղուկը կը զովացընի  
Մեր պարտէզների ծառըն ու թուփը,  
Կանաչ մարգերի հորաւէպ խորը  
Եւ բուրասփանը... Կը կենդանանայ  
Կը մեր գիւղը, կը գեղեցկանայ  
Փարթամ կանաչով ու ծաղիկներով,  
Եւ պարարդ հողը կը բեղմնաւորւի  
Ասործոյ ուլւած իւր բարիքներով

և վայելումըն և ի բերկութիւն  
 Մեր ժողովը դի... Բայց լաւ լրսեցէք  
 Իմ այս կրտակը, որ ես թողնում եմ  
 Զեղ ջահելներիդ: Դուք այս աշբիւրը  
 Աչքի լոյսի պէս պիտի փայփացէք  
 Եւ այնպէս հոգաք, որ մի մարտաչափ  
 Զը պակսի ջուրը, չաւերւի շէնքուր,  
 Եւ շլրջակացքը չը խոսկանանայ,  
 Ալ այսպէս ահա գիշեր և ցերէկ  
 Քաղցր քչքչայ և ուրախացնի!...  
 Օ, հաւարացէք, բարի կամք է պէտք.  
 Եւ ժամանակով, ես ձեզ ասում եմ,  
 Նոյն իսկ այս որելը, որ այժմ մի չոր  
 Տարածութիւն է, մի կանաչ, սիրուն  
 Պարսկա կը դառնայ, և սաղարթազեղ  
 Սօսենիների դիւրեկան և թանձր  
 Հարւերների մէջ պարուրւած կը մնայ  
 Օրհնեալ աշբիւրը և իւր մարգարինաց  
 Ասուլ ցայտերով կը ուրփաթ իւր շուրջ  
 Անուշ զովութիւն, և թշրւանների  
 Աշխոյժ խըմքերը ծառափանի մէջ  
 Ուրախ երգելով ձայն ձայնի կը գան  
 Այսուեղ օրնիբուն, վաղ առաւօդից  
 Մինչև վերջալոյս...

## ԵՐԻՑԱՍԱՐԴ:

Մեր պարսկը լինի  
 Կարարել, ինչ որ մեղ կը կում ես:

## ՍՈՂՈՄՈՆ (նկառելով մի աշուշի)

Դու էլ այսուել ես, մեր աշուշ թեւան?  
 Այս ուր էիր դու այսքան ժամանակ?  
 Որպեղ էր, ասա, ասզըդ ձէն որալիս?

## Ա. Շ Ո Ւ Վ.

Գիւղէ գիւղը լնկած ման էի դալիս,  
Հեռու գեղում էր սազրս ձէն դալիս:  
Մի օր վաթանըս մրտաբերեցի  
Ու եկաց սըրպիս կարօպն առնեմ:

## Ս Ո Ղ, Ո Մ Ո Ն

Ծընընդավայրը քաղցր է լինում,  
Երբ շաբ ես մընում օպարութեան մէջ:

## Ա. Շ Ո Ւ Վ.

Բայց մանաւանդ այդ ծընընդավայրը  
Որ ունի երկու աննըման ալբիւր:

## Ս Ո Ղ, Ո Մ Ո Ն

Ինչպէս հասկանանք մենք քո ասածը?  
Դու աշուղ ես և սիրում ես խօսել  
Հանելուկներով: Բայց մենք հասարակ  
Մարդիկ ենք, մեզ հետ պէտք է պարզ խօսել:

## Ա. Շ Ո Ւ Վ.

Թէև աչքովը ոչինչ չեմ դեսնում:  
Բայց ականջովըս պարզ լըսում եմ ես  
Երկու կըչքչող ալբիւրի ձայնը...

## Ս Ո Ղ, Ո Մ Ո Ն

Նոր դաշեր ունիս, աշուղ, թէ էլի  
Հին երդերըդ ես ամեն դեղ կըրկնում?

## Ա. Շ Ո Ւ Վ.

Թէ հրաման կը դաս...

## Ս Ո Ղ, Ո Մ Ո Ն

Ասմա, լըսում ենք.

ԱՇՈՒՐ, (ածում է սաղը և երգում)

Աղբիւրն եկաւ քըշքըշալով  
Դիւզի միջում ձեն տըւեց.  
Ախ, ջան աղբիւր, զիլալ աղբիւր.  
Մեռած զիւղին կեանք պըւեց:  
Քեզ յաւիրեան փառք ու ալապիս,  
Մեր աչքի լուս Սողոմոն:

Եղեմական անուշ ջուրը  
Դէմ էր առել ժէս քարին.  
Իմաստունը հընար զըսաւ,  
Ճամբաս բացաւ աղբիւրին:  
Քեզ երկար կեանք, կարմիր արեւ,  
Մեր աչքի լուս Սողոմոն:

Օրը բացւեց, ջան իմ վաթան,  
Հիմայ ծաղկիր, կանաչիր.  
Ջուրըն եկաւ անմահական—  
Քեզ հալալ է—վայելիր:  
Օրհնեալ լինի յիշարակըդ,  
Մեր աչքի լուս Սողոմոն:

### Ս Պ Գ. Ա Մ Ա Ն

Աշուղը նա է, ով ժողովըրդի  
Սըրպից է խօսում, ում ձեռքի սաղը  
Ժողովըրդի հետ ուրախանում է  
Եւ լաց է լինում ժողովըրդի հետ  
Դէհ, առ ջուրը անմահական.  
Քեզ հալալ է—վայելիր:

(Աշուղը վերցնում է թասը և խմում Առաջ են գալիս մի քանի հասակաւոր կանաչ երեխաների հետ: Սողոմոնը բոլորին ջուր է տալիս: Մի պահ, բացի հոսու չըի ձախից, ուրիշ ձան չէ լսում: Քիչ թեղոյ երեսում է Մելքոնը, ՕՍՍՆԻ և միւս որդոց հետ: Նա վարանման մէջ է: Դժւարանում է զնոսկան քալ անել: Վերջապէս բարի զգացմունքը լալթում է, և նա գրկարաց ներւում է Սողոմոնի զիրկը, որը զգացըում է հակառա-

կորդի խոնարհութիւնից և մնծանողութեամբ սեղմում է նրան իւր կրծքին:

## Մ Ե Լ Ք Ո Ն

Դու ինձ ներում ես, Սողոմոն? ասմա

## Ս Ո Ղ Ո Մ Ո Ն

Անցածը անցաւ... Զեռք ձէռքի խըփենք,  
իրար հետ հաշուենք!

ՄԵԼՔՈՆ (Ճեռքը խմելով նրա ձեռքին)

Հաշուենք, Սողոմոն,  
Եւ այսուհետեւ մինչև գերեզման  
Բարեկամ լինինք! Դու ինձ յաղթեցիր:  
Ոչ, չը յաղթեցիր, այլ ոչ նշանացրիր,  
Եւ ես ամօթով մընացի քեզ մօր  
Եւ գիւղամիջում...

## Ս Ո Ղ Ո Մ Ո Ն

Ես ասում եի,  
Որ կը դայ մի օր, և իմ աղքիւրը  
Անուշ ձայն կը դայ... Այն օրը եկաւ:  
(Առաջարկում է թասը) Առ և համը պես. հրաշտի ջուր. է:

ՄԵԼՔՈՆ (խմելով)

Անմահական ջուր սըրան են ասում,  
Որովհետեւ սա մարդու կեանքի վրայ  
Մի քանի տարի կ'աւելացընի:—  
Բարեկամ, հիմա լըսիր ինչ կ'ասեմ  
Եթէ հաշուում ենք, պէտք է լաւ հաշուենք:  
Ինձ էլ և քեզ էլ շապ լու յայրնի է,  
Որ մեր պատճառով մեր խեղճ որդիքը,  
Որ իրար այնքան մօր էին սըրդով,  
Միմեանցից հեռու, մոլորւածի պէս,  
Դլուխները կախ, ձեռները ծոցում,  
Միշտ իրար կարօտըն էին քաշում.

Թող ձեռք ձեռքի տան և հայրերի պէս  
Միմեանց հետ հաշուեն:

## Ս Ո Ղ Ո Մ Ո Ն

Մելքոն, իմ սըրտից  
Դու չուր խլմեցիր: Կեզիս ծալրին էր,  
Ինչ որ տացիր: Մօս եկ, Խափայէլ!

## Մ Ե Լ Ք Ո Ն

Օսան, մօրեցիր:

(Խափայէլը, որ կանգնած էր մի դեղ և աչքը Օսանուց չէր հեռաց-  
նում, ուղախ առաջ է դալիս, նոյնպէս և Օսանը, որը կարմրում է և աչ-  
քիրը ցած պահում):

## Ս Ո Ղ Ո Մ Ո Ն

Ձեռք ձեռքի տլւէք, սիրելի որդիք,  
Եւ հանգըստացէք հողով ու սըրտով.  
Էլ սըրանից յետ ձեզ ոչ ոք, ոչինչ  
Զի համարձակւիլ միմեանցից բաժնել:  
Տեսնում էք դուք այս մաքուր աղբիւրը?  
Սա, հաւափացէք, ինձ շատ թանկ նըսպեց.  
Խըլեց ինձանից իմ այս ծերութեան  
Ոյժերի վերջին մընացորդըն էլ.  
Կեանքիս ընթացքում, ու օրւայ համար,  
Գանձած ունիի աննըշան, համեստ  
Մի կարողութիւն, այն էլ կըլանեց.  
Եւ մինչև անդամ, հաւափացէք ինձ,  
Զեր հարսանիքի հանդիսի համար  
Ոչինչ չը մընաց... Բայց ահա այսօր  
Իմ երջանկութեան գագաթին հասայ,  
Եւ փառք եմ դալիս ես քեզ, Արարիչ,  
Որ արժանացըիր ինձ մի այսպիսի  
Բախուաւորութեան! Կայ աւելի մեծ  
Վարձափըրութիւն, քան այն վիճակը,  
Երբ մարդ, հասնելով իւր նըսպարակին,

Նըրջապարւած է ընդհանուր սիրով?  
 Բայց նամանաւանդ ցընծում է հոգիս,  
 Որ իմ ոլքնութեանց քաղցրիկ պըտու զը  
 Դարձաւ հաշոտթեան և սիրոյ ալբիւր,  
 Այն, հաշոտթեան և սիրոյ ալբիւր...  
 Դժո, օրհնեալ լինիք, իմ անդին որդիք!

ՄԵԼՔՈՆ (օրհնում է)

Օրհնում իմ և ևս, սիրելի որդիք,  
 Դու էլ, Տէր Ասուած, վերելից օրհնիր.  
 Խող սըրանց սէրը, որ այսքան ջերմ է,  
 Այսպէս էլ մընայ նաև մինչեւ վերջ!

(Մատակէլի ընկերները հուռա են կանչում)

Վ. Ե Բ Զ

Յարս. 1900 թ. ապրիլի 14:

# ՅՈՒՆՈՆ

ՊԵՐՃ ՊԱՌԵԱՆՑԻ

(Յարունակութիւն <sup>1)</sup>)

ԺԵ.

Սի հանդամանք մենք անուշադիր թողինք պատմուածքիս նախընթաց զիսումը, որը սակայն մթութիւններ պարզելու համար ներկայումս անհրաժեշտ է:

Ահմօ բէգի վրանները տուած էին Քաջալ թափա կոչուած բլրի սպորտում։ Վրանների դռներն ուղղակի նայում էին դէպի հիւսիսից հարաւ ընկած մի ձորահովորի։ Զորակի արեւելեան թմբին, ճիշդ Ահմօ բէգի վրաններին հանդիպակաց կարգով դնկուուած էին համայնքի վրանները։

Այս մի բացառական դիրք չէր գեղադրութեանն յարմարացրած։ Ալսպէս էր ամեն դեղ ընդունուած կարգը։ Էլլէզու վրանները սովորաբար տնկուում են բարչավանդակների վերայ՝ հայեացքն ուղղած դէպի ցած դրուած վրանները, որոնց ներքոյ պատմարուում են էլլէզու հովանաւորութեան դակ գովուած ժողովուրդը։

Ուզում եմ ասել, թէ մենք մեր վրանի միջից զուարձանում էինք Ահմօ բէգի հակողութեանն յանձնուած համայնքի նիստ ու կացը, երեխանների լացն ու ծիծալը, կանանց պարապմունքներն ու շարժմունքները դեսնելով։

<sup>1)</sup> Սկիզբ Մուրճ 1900 թ. № 1, 2, 3.

Եթէ վրանի նսգուածքի տեղը հաւասար փարածութիւն լինէր, մեր ազար գեսողութեանը շար աննշան կերպով կարող էր խափանառիթ լինել ինքը հիւրասէր դանդէրը՝ ծնկների վրայ առաջներին չոքած Դիբովը: Բայց այժմ, եթէ Ահմօ բէզն իւր բարձր հասակով կանգնած է լ լինէր առջևներս, չէր կարող մեզ արգելք լինիլ ԴէմուԴէմը նայելու, որովհետև մենք նսդած էինք վերի կումում հաւասարացրած գաֆարակի վրայ, իսկ Ահմօ բէզը զառիվարի բերանում էր չոքած:

— Հեռուն նայիր, յանկարծ առաց ինձ պէրպէրը:  
Նայեցի և սոսկացի:

Դիմացից համայնքի վրանների վերի կողմն ընկած նեղ ճանապարհով Դէպի մեր կողմն էին գալիս երկու ձիաւոր, մէջ առած մի բարձած ձիւ:

Եթէ չըգեսնէի անգամ մէջ գեղի ձիու վրայ բարձած բեռը, Դարձեալ չէի կարող առանց սարսափի անդարբեր մնալ: Այժմ երկու էր շփրժուելուս սպարծառը. նախ՝ որ անմիջապէս ճանաչեցի երկու ժամ առաջ Սուլէյման բէզի մեզ մօս պարգամաւսր ուղարկած աւազակին, որը քաշում էր բարձած ձիու սանձը: Երկրորդ՝ որ բարձուած բեռը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ երկու անշնչացած մարդկացին Դիակներ, որոնց ողբերը ճօճում էին ձիու կողերին Դիւզելով:

Այնքան շպազով էին գալիս բեռնաբերները, որ Ահմօ բէզի որդիքն ու դասնաւոր ամբոխն իրանց դանուցէրով ժամանակ չունեցան շուրջով նկարելու արդասով: Դէպքը: Նրանց ուշքը մեր վերաց էր, իսկ Ահմօ բէզի երեսը դարձեալ մեր կողմն էր:

Ոչ քահանան և ոչ ես ձայն չենք հանում և միայն աչքներս ուեռել, մոխի ևնք դալիս:

— Ուր է Ահմօ բէզը, յանկարծ կանդնեցրին ձիանքն եկողներն և գոչեցին. շնուր, կանչեցէք էլքզգուն, Սուլէյման բէզն ասում էր՝ թող էս Դիակները տեղաւորի, մեզ էլ հաց ու պաշար դայ՝ գնանք: Անիծած հայ շուն-Յունոն յարձակուեց մեր խմբի վրայ, էս երկուսին սպանեց, և եթէ Սուլէյման բէզը չըփախչէր ու մենք էլ նրան շըհեպեկինք, բոլորիս կոփորած կը լինէր: Դեռ լաւ էր, որ Ասգուած Յունուի խելքն առաւ, եփմներիցս չընկաւ: Մենք էլ յետ Դար-

ձանք, մեր դիակները վերցրինք: Նորազ արտասանած այս մի քանի խօսքի հետ՝ աւազակները ցած թռան իրանց վրացից ուղղակի վրանի դրանու:

Այնքան անակնկալ էր դէպքն և աննախապիսանելի, որ Ահմօքէգը հազիւ այսքանը բացականեցեց.

—Չեր պունն Ասպուած քանդի, որ իմ պունը քանդեցիք: Եւ Ահմօքէգն երկու ձեռքը դեպինին սիւն պուեց, ուզեցաւ պեղիցը կանգնել:

Խեղճը ըլկարաց. Տնկները ծալուեցին ու երեսի վրաց վացը ընկաւ:

—Ոչինչ, ոչինչ, Ահմօքէգ, գոչեցի ևս և ձեռքս ձգեցի թել:

—Ալլահ ու ապկեար, երանեալն էստթշ, ձայնս լսեց, աչքն երեսիս ձգեց մեր պարգամբերը: Նա ական թօթափել՝ հեծաւ կրկին ձին ու որքան կռնումը զօրութիւն կար, խեղճ գրասորին մորակեց:

—Երանալը, կրկնեց ընկերի բացականչութիւնն երկրորդ աւագին ու ձիու գլուխը յեպ դարձրեց:

Մինչ ես ու քահանան Ահմօքէգին գեպինին կը պառկացնէինք, աւազակներն անցան ձորաթմբի միւս երեսն և անհեղացան:

—Շուպ ջնոր, ջնոր բերէք, գոչեցի ես վրանի դրանը ժողոված ամբախին, Ահմօքէգի ուշըը գնաց, ջուր հասցրէք:

Փառաւորի քահանան, ևս մոռացել էի, որ առջեներս մեծ քերեղանով սառը կաթն էր դրած. տէրոքին առաւ պնակն և դարպարկեց Ահմօքէգի զլսին:

Կաթի սառնութիւնը ցնցեց փոքր ինչ էլքէզու նեարդերը, ծերունին աչքերը բացեց ու դարձեալ փակեց:

Ներս թափուեցին այդ ժամանակ բէգի որդիքը, ջուրն էլ ժամանակին հասաւ, իմ հրամանով վրանի եփեի մասը վեր քաշուեց. Ջրի և հովի սառնութիւնը կազդուրեցին հիւանդին և հինգ բոպէից Ահմօքէգն ուշքի եկաւ և աչքերը բաց արեց.

Կը ներես, երանալ, վերջապէս կարողացաւ նուազ ձայնով ասել Ահմօքէգը:

—Ոչինչ, ոչինչ, մի՛ նեղանալ, սիրու՛ լայն պահիր, իրախուսեցի ես:

—Ասպուած է՛ աւազակների վիզը կորրի, շշնչաց և ուսերը վեր քոշեց Ահմօքէգը:

—Ես քո տեղը լինեի, նոյնը կանէի, միջամբեց տէրտէրը, թռղել ես դունու տեղի, եկել ես և սարերի միջին մի քանի դաւարի համար կծկուել, կարձալ ես նրանց հրամանը չըկարարել, մի գիշեր կը գան քեզ էլ, քո համայնքին էլ կը չնշեն:

Ոշորմի՛ հօրդ, ինչ կասեմ հասկացող մարդին:

—Ես հիմի ինչ պիտի անեմ էս դիակները, ուսերը վեր քաշեց Ահմօ բէդը. ես մօլլա եմ, թէ տէրպ էր եմ, որ մեռել թաղեմ:

—Հայ եթէ լինէին, իմ զործն էր, բայց որ մուսու լման են, ձեր մօլլի գործն է դրանց դրախոն ու զարկելը, հեղնեց քահանան:

—Իրաւ, ինչ կը հրամացես, երանալ, դարձաւ ինձ Ահմօ բէդը, ես էս դիակներն ինչ անեմ. դիւանին ցացրնեմ:

—Մեր երանալը չըղիսէ, մեր կեանքին անձանօթ է, խօսեց քահանան, բայց ևս ու դու էս սարերի մէջն ենք մեծացել, մեր ցաւը մեզ է յայտնի. առաջինը չէ, վերջինն էլ չի լինելու, օրական էսպիսի բաներ միշտ պատահում են. եթէ ամեն մէկի համար դիւանին իմաց տալու լինինք, պիտի մի թելլուզրաֆ սարքենք ու առաջիցը չըվերկենանք: Մի սկսնջ անիր, մոլլին կանչիր, թող պանի թաղի. հրամայի ջահէլներից մէկին էլ, թող մի բեռը հաց ու պաշար բարձի դանի Սուէցման բէդին. ձեր պղայքն, ի հարկէ, նրանց բունը զիրեն, էնորել էլ չըլինեն, դիշերը յեր կը գան. աւազակներն էլ մեզ պէս մարդիկ են, նրանք էլ ուզել կուզեն:

—Զարմանալի մարդ ես, տէրտէր, էնպէս ես խօսում, կարծես թէ ես աւազակներ պահող, աւազակի լնկեր լինիմ. մեր երանալը հիմի ով զիտէ, ինչ կարծիքներ պիտի անի:

—Այ մարդ, քէփդ քօք պահիր, պատրասխանեց տէրտէրը, մեր երանալը, փառք Աստծու, մեր աշխարհի ձագ է, սա մեր դրութիւնն ինձանից ու քեզանից լաւ է հասկանում. սրա ինչ ցաւն է՝ գնաց գլուխը փորձանքների մէջ իռճի: Խթէ իրան հարցնելու լին՝ նին՝ ուղար գեսած կաս Աը պատասխանի. ուղորի քոշակ (կողոակ) էլ չեմ գեսել լնպէս չի, երանալ, դարձաւ ինձ տէրտէրը, դու մեծ. մեծ զործերի տէր մարդ ես, դու ինչ ժամանակ ունիս դարձարկ բամբասանքների ականջ դնելու, կամ դիւանի դաներում վկայութիւններ դալու:

—Ի հարկէ, ես այսօր այսպեղ եմ, վալը կարող եմ Մոսկովումը

լինիլ. մենք ծառայող մարդիկ ենք, եթէ մեզ յանձնած գործերն ել կարողանանք օրինաւոր կարարել, մեծ բան է հասրապեցի քաղաքադեմ քահանացի խօսքը և խորհուրդ տուի վերջացնել մէջ ուեցից Դիակները:

— Դէ հիմի էլ հրամանցի, թող Սուլէյման բէզի պաշարի հոգսը քաշեն, նորից միջամբեց տէրուերը, երբ Ահմօ բէզի հրամանով Դիակները պարան թաղելու. ոչինչ, մեր երանալի սիրոն անփակ ծով է, շար էդպէս գաղփնիքներ կան մէջը, որ իրան ու Ասուծուն են յայգնի. սա ինձ ու քեզանից լաւ գետի, որ ամէն գիշեր ժողովրդի մեծերի պներում աւաղակներն ու ճանապարհ կրօրողներն են ընթրիքի վերի կողմը բազմողները. քեզ մօս Սուլէյման բէզն է, ինձ մօս Յունոն է, մի զիւղական պանուպէրի մօս Ալին է, կամ Նշոն է: Խ'նչ անմն ժողովրդի տէրերը. եթէ այդպէս չանեն, կարող են գիշեր ու էլեօ պահել:

— Լաւ է ասում տէր հայրը, Ահմօ բէզ, Դարձայ ես մեր պանուսիրոջը. կարգադրի թող Սուլէյման բէզի համար պաշար պանեն:

— Դիլիդ դուրբան, լաւ ես հրամանք անում, իրիկնադ' մ կը սլարդասրեն կը պանեն, հիմի մեզ օրուշ է (պահք), մինչեւ լուսինը չըդուրս գայ՝ ոչինչ չհնք ուստիլ. էդ հացն էլ որ բերի՞ն քո հրամանոյ համար, մեր ընդպանիքը ազիզ խաթրիդ համար օրուշը քանդեցին, ձեռաց շաղախեցին, երկաթէ բովի վրայ թիսեցին, թէ չէ մեշքս ինչ թաղցնեմ, պանը հացի փշրունք էլ չըկար:

— Եթէ այդպէս է, ուրեմն ես քէյլանի (պանդիկին) քրոջս մէշքի մէջ եմ զցել, թող ուրեմն իր անդաս անձանօթ ելլորից էս հասարակ դանակն ընծայ սրանայ, որ չար ու լալիան երեխաների ականջները կարի<sup>1</sup> ասացի ես և հանեցի գրանիցս մի նոր երկբերնանի փոքրիկ դանակ և պուի Ահմօ բէզին:

Բէզը սկզբումը չէր ուզում վերցնել, բայց վերջը, չուզելով սիրոս ցաւացնել, լնդունեց իմ չնչին նուերը:

Ի դէպ՝ ես մօսս միշտ պահում էի այդպիսի Դիւրտղին նուերներ, պեղին և յարմարութեանն ընծացնելու համար:

<sup>1</sup> Ասիական ազգերը երեխաներին մեծերի կումից ականջ կորելու սպառնալիքով են երկիւլ ազդում:

Ժ Ղ.

Ուրեմն, ոիրելի Ահմօ բէդ, կերանք, խմեցինք, հանդսպացանք,  
ժամանակն է որ գնանք մեր պարտքը կատարելու: Ինչպէս տէր-  
հայրը մի ժամ յառաջ ասաց, հրամայի ձեր տանուտէրին՝ թող երե-  
սուն քաջ ձիաւորներով ինձ ճանապարհ դնի մինչև նոր-հայազի-  
դի գաւառի Գ. դիւղի ամարանոցը:

— Ոչ երեսուն, ոչ քսան, ոչ հինգ, զլսիդ մագալ, պատասխա-  
նեց Ահմօ բէգը, ես հրամանոցդ կը յանձնեմ քո ծառաներին — իմ  
մրկու որդւոցը. նրանք քեզ ողջ ու անվանդ կը հասցնեն ոչ թէ  
Գ. դիւղի ամարանոցը, այլ աւելի այս կողմը՝ մինչև Դարալագեալ-  
ցի տանուտէր Նասիր բէգի վրանը: Ողորմած տէրութիւնը մեր  
պարտականութեան սահմանը մինչև այնպիշ է նշանակել: Խոկ այն-  
պելից ձեզ կը տանեն ձեր հրամայած Գ. դիւղի ամարանոցը: Քո  
շնորհիւ՝ իմ որդիքս հարիւր ձիաւորի կարող են պատասխան տալ,  
ինքը Յունոն էլ նրանց ելունդը շարժի, եթէ իրաւունք ունենացին  
տանը թագցրած այնալու հրացանները վերցնելու:

— Մի՞թէ տանն ոնիք արագագարկ հրացաններ, հարցը ես:

— Եէ, հերիք է, երանալ, մեզ անբան անասունների տեղ դնես  
ու միամիտ ձեան աս, միջամկեց քահանան. մի՞թէ քեզ յացնի չի,  
որ ամէն մէկիս տանը տասններով կան այդպիսի հրացաններ ու ըն-  
վոլներ. մի՞թէ դու հաւատացիր, երբ որ ես հրամանոցդ ասացի,  
թէ ունեցած զէնքն էս անշախմախ հրացանն է. շատ լաւ էլ ուզում  
էի 16 անդամ բայցուզ, ոսկու պէս փացլող հրացան վերցնեմ, բայց  
որ իրաւունք չունէի, կաներս կապուած էին, Ասպծու անունը պուի  
ու մի հին կոտրած հրացանով ճանապարհ ընկաց, այն էլ՝ դու հրա-  
մայեցիր՝ չուզեցայ կամքդ ըլկատարել, թէ չէ ես դիպէի, որ մեր  
Ահմօ բէգի տունը իւր եմ դալու և ոչինչ զէնքի կարօպութիւն  
չունէի:

— Նապ լաւ էք անում, որ ձեր կեանքի ապահովութեան հա-  
մար կատարելագործուած զէնքեր էք պահում, ասացի Ահմօ բէգին  
և իրաւունք պուի որդւոցը վերցնել իրանց նոր սիստեմի հրա-  
ցանները:

Երկու յաղթանդամ հասց ու պինդ պղամարդիկ ոչխարենի

բոլորշի գլխարկը ծածկած, դեղնագոյն չերքեզի չուխաները հա-  
գած, լայն շալի անդրավարդիկների փոխկերը կաշուեաց զանգա-  
պանների մէջ ամրացրած՝ նստեցին մի մի հասրամարմին գէր ու  
մսուր մերկ մասակ ձիու վրայ և ուսերից կախեցին փաճկառուսա-  
կան պարերազմի աւարներից ձեռք բերուած պիսողի կոչուած սիս-  
տեմի արագազարկ հրացանները, որոնք ժողովրդի բերանում այնա-  
լու յացնի անունն են սրացել:

Հարկաւոր էր մօպից զննելու, որպէս զի կարելի լինէր հրազէն-  
ների փեսակը որոշել: «Պիպոդին հրացանն ըստ ամենալինի ձեւափո-  
խած էր և պարսկական հրացանի վերածած, երեք արծաթէ օղեր,  
որոնք սեպհական յափկութիւնն են ասիական հրացանների, զարդա-  
րում էին փողովակները»

Այդ արած էր, ի հարկէ, ուշադրութիւն ըլքրաւելու դիր-  
մամբ:

Իրաւունք ունէր անշուշփ Ահմօ բէզն իւր որդիքներով պար-  
ծենալու, իւրեանց միակ հրացաններով նրանք հարիւր աւազակի  
պարասիան կարող էին տրալ: Իմ թիկնապահներս ոչնչով չէին զանա-  
զանում աւազակապետներից. իրանց կորիծութիւնը ցոյց տալու  
համար, մատակների քամակը թռան թէ չէ, միմեանց աչքով արին  
և կրնկեցին նժոյններին:

Չորահովի երկայնութեամբ՝ սանձարձակ այն մարտկներն  
ազար իրաւունք պուած իրանց ոգքերին, ոչ թէ վազում էին գեւ-  
նի վրայ, այլ եթէ չափազանցութիւնց ըլքախնայի, կասէի, թէ  
թեւաւորուած պատառում էին օդը Եւ ի՞նչ էք կարծում, մարտ-  
ներն իսկապէս սանձարձակ էին. մի մի պարանի կրոր, շնորհքի հս-  
մար՝ պար էին տրուած վզերովը. ոչ սանձի երկաթ և ոչ լկամ՝ ու  
երախակալ չէին ցաւացնում նժոյդ մատակների երախները: Պարանի  
ծայրը թոյլ բռնած Ասադն ու Բաղիշը—Ահմօ բէզի հարազապները—  
մի մի մարմնացած դեերի էին նմանում: Մէկ փեսնում էիր՝ թի-  
կունքների վրայ ոգքերը ձիսանց պարանոցին դրած պատկել են, մէկ  
յանկարձ վեր էին ցարկում և ձիու մշջքին ուղղահայեաց կանչ-  
նում ու հրացանները մականի նման օդի մէջ վեր շպրտելով ու  
բռնելով՝ խաղս լինում, մէկ էլ հանդնած դեղից սրունքը լայնաց-  
րած՝ նսպում էին ինչպէս թամրի մէջ:

Վերջապէս ամենայն ճարգիկութիւն որ մրածուած է զանազան ձիախաղաց կրկսականների կողմէց, նրանք կարարում էին ամենայն յաջողութեամբ:

—Քո շուլերդ՝ իմ զաւակներս, երանա՞լ, ասաց ինձ վերջին հրաժեշտին Ահմօ բէզը, այսօր քո երկու որսկան շներն են, որոնք տեղն եկած ժամանակ՝ և դաշլուելլ դամբռաներ են, ինչ կը ցանկանաս, հրամացի Ե՛յ, երեսայք, դարձաւ Ահմօ բէզն իւր դշաներին, մեր ողորմած երանալին զլուտներիդ վրաց նստացրած՝ հասցրէք Նասիր բէզի վրանը, աշխատեցէք՝ որ զիւլը սոյմիշ չըլինի: (Պարսկական ոճ է, բառացի նշանակում է վարդի թարմութիւնը շլթառամի, ացսինքն՝ ոչինչ վասա չը դիոչի). ձեր աչքի լուսի պէս հոգացէք և Նասիր բէզի իւր ձեռքով գրած մի մասը թուղթ բերէք ինձ անվտանգ և հանգիստ գիշ հասնելու համար, որպէս զի ես կարողանամ գիշերս հանգիստ քնիլ:

—Բա՛շ ուստա, զա՛շ ուստա՛ (մեր զլիսի վրաց) խոնարհ երկըրպագութիւն փութին մինչև ծունկ մեր կորիճները:

—Մեր տէրուերին քո խնամքին եմ յանձնում, ասացի Ահմօ բէզին, որից խնդրում եմ՝ ողջ առողջ փուն համար՝ ինձ Թիֆլիս թել քաշել և այն ժամանակը՝ որքան ձեռքիցս կը գայ՝ ողորմած սարդարից ևս քո հաւատարիմ հապակակութեան ապացոյցը կը խնդրեմ. մեղք է քեզնման մարդկանցն անուշադիր թողնելը:

—Մեր Դրացի քէշից ալպային, ողորմած երանա՞լ, պապասսխաննեց Ահմօ բէզը, վարդի նման հոգ քաշելով՝ ձեր պեղավս ինքս կը փանեմ իր ընտանիքին պահ կը դամ՝ դու միամիգ բանիր ձանապարհ ու զնա, և որովհետեւ հրամանքդ արժան չարեցիր մեզանից մի ձիու պայտի զին ընծայ սպանալը, ուերտերի պարզենիմ աչքի վրաց, կը շահենք սրան՝ որքան մեր ձեռքից կը գայ:

—Դու քեզ համար սպահով ձանապարհ շարունակիր, երանա՞լ, խօսեց իւր կողմից քահանան, ևս ու մեր Ահմօ բէզը մեր գործը զիւրենք, մի՛ հոգալ, սականան իր տունը շի քանդիլ, ես էս գիշեր սրա մօր փլաւն ու գառան զաւուրմէն անուշ կսնեմ, էգուց երկու դշան կը վերցնեմ, մէկի ձեռքն այնալու հրացան կը դամ, միւսի առաջը սրա հօգից մի մասի գառը կը դնեմ ու Ահմօ

բէգի կեանքն ու սպացուածքն օրհնելով՝ ճանապարհ կը լնկնեմ, կը պանեմ գառը, ամէն մի կոր խորովածի վրայ մի բաժակ Շվանաձորի անուշ զինի դարդակելով՝ իմ ոսկի հարևան Ահմօ բէգի ու իր քաջ սղեքանց կենացը կը խմեմ, հետն էլ մէկ մէկ քեզ կը լիշեմ Լաւ չեմ ասնմա, ազիզ հարիան, դարձաւ տէրտէրը Ահմօ բէգին:

— Եղ ի՞նչ խօսք է, քէշիշ աղայ, միթէ գառն իմ պատուիս վայել է. մի շիշակ, գէր, երեք տարեկան որձ կը գամ քեզ, որ կէսը նոր նոր վայելես, կէսն էլ ղաւուրմա դնես, ձմեռն էլ մեր երանալի առողջութեան բաժակը խմես և եթէ հեղն էլ ինձ յիշես, շատ շնորհակալ կը լինիս:

— Ուրիմն դուք միմեանց պատիւ գուեք, Ահմօ բէզ, ասացի, իսկ ես դնամ իմ պարսքս կապարելու:

Ծերունի գանգերս մօրեցաւ, ձիու ասպանդակը, հակառակ իմ արգելանքի, իւր ձեռքով ողինդ բոնեց, գէրտէրն էլ շնորհքի համար՝ Ահմօ բէզին նմանեց և ձիուս սանձի ծայրին կպցրեց մասները: Կարիք էլ չը կար, հինդ թուրք միասին էին սօսեցել և ինձ ձի հեծացնում:

Մի ժամից՝ մենք մօրեցանք նասիր բէզի վրանին:

### ԺԷ.

Մի ընդարձակ ձորահովում՝ չորս կողմից ապահովուած բարձր լեռնաշղթաներից ճիւղաւորուած բլուրներով՝ խփուած էին 150-ից աւել վրաններ, որոնց վերի կողմն աչքի էր ընկնում՝ մի փոքրիկ լրանախումբ իւր բարձրադիր նստուածքով. իսկ դրանց առջել գնկուած էր կարմիր ժապաւ էններով զարդարած մի շքել և մեծ վրան:

Մի գրկաշափ պարզորակ վրակ քչքչալով ցած էր վազում երկու լեռնաթմբեր միացնող ձորակից և թափուում վրանախմբի ներքեւի խոր ձորը:

Ասուի ափին՝ կանաչազարդ տափարակի վրայ, փառահեղ վրանի առաջին՝ փառւած էին մի քանի գորգեր: Բոլորակ թաւշեաց բարձերը զարդարում էին գորգերի վերի կողմը:

— Անշու շու, այս է նասիր բէզի վրանախումբը, երևի ինքն

ևս հարուստ կալուածարէր է, այնպէս չէ, մաքնացոյց արի հեռուից Ահմօ բէգի մեծ որդուն:

— Գլխիդ մարմազ, երաննալ, ամէն պապղացող ոսկի չէ, շատ անդամ արեի ճառագայթներով լուսաւորուած ապակու մի կոր աւելի է փայլում, քան թէ շուաքումն եղած ջաւահիրն ու յակինթը, պարասիանեց ուղեկիցս և շարունակեց.

— Մի տկլոր հովուի մահից յեգոյ որբ մնացած, շների հետ լափ լկող նասիրը մի օձ է, որ առաջինը շանթում է իր բարերարին:

Դարաբաղի էլրէզինների մէջ յայրնի, ամէնքից սիրուած ու յարգուած մի էլրէզի այսօր այդ անաղուհաց ապերախսու նասիրի շնորհիւ՝ փթում՝ է Սիրիրում: Մի օք՝ նասիր ասուած փուչը՝ իշխանաւորների առջևն ընկած՝ հարիւր չափար ու զազախի հետ գալիս կանգնում է իր բարերարի գլխավերելը, որի հացով ինքը մեծացել էր և ցոյց է փալիս դիւանի մարդկանցն երկու դարի առաջ սպանուած մի մարդի իրեղէնները:

Նասիրը շար լաւ է իմանում, որ այդ կահկարասիքն ուրիշ մարդ է պահ գոււած եղիլ իր բարերարին, բայց նա չի ամաչում յանդգնութեամբ զրպարփել, թէ մարդին սպանողն էլրէզին ինքն է եղել: Ոչ հասարակութիւնն երդում կրակն է ընկնում, լիզու է թափում, գոգերով փող է մէջ տեղը խաղացնում, բայց մեծաւորին չի կարողանում հաւափացնել, թէ էլրէզին արդար է: Մեծաւորը նոր եկած մարդ է լինում, խեղճ էլրէդու կոյցը բաղդից՝ դեռ մուժուա (ձրի) փողերի համին սովոր չի լինում: — Կամ էս ապրանքը քեզ պահ գուողին բերան դուր, ասում է, կամ կողոպտողն ու սպանողն ինքդ ես:

— Անսրաբակոյս, ընդհափեցի ես, արի ի լոյսի պէս պարզ է:

— Ո՞չ, գլխից մեռնիմ, հրամանոցդ հետ մեղ հիւր եկող Դուշչիրիակի տէրափէրն ասում էր, որ դու մեր աշխարհքի մարդ ես, մեր կեանքին ու սովորութիւններին ծանօթ ես, բայց ես իռեսնում եմ: որ էդպէս չի, ձեռքը կփրականապէս թափ դուեց Ահմօ բէգի մեծ որդին: Եթէ դու մեր հող ու ջրի ձագ լինէիր, դու ինքդ կասէիր, թէ ամանաթ դուողի աւանդը սրբութեամբ պէսք է պահանել ու դուողի անունը բերանից չըպիսու հանել, թէկուզ՝ նրա

փոխարէն իր զլուխը զնդանի մէջ դնել հարկ լինի Եղաէս հէնց արեց էլքէգին. բարեկամի դաշտնիքը դուրս չըբուեց, աշխարհի առաջին սպանութիւնն իր վիզն առաւ ու Սիրիր զնաց:

Երկիրը նրա համար այբուեց ու մշկրաց, մեծ ու պատիկ ապերականը նասիրի վրայ ապամները կրճագրին, և անկարծիք, շան նման կը սատրկացնէին, եթէ համարձակուէր մնալ մեր հասարակութեան մէջ: Խելք արեց, թողեց Ղարաբաղի հողը և փախաւ Դարագեազ:

—Եւ հիմի թէ մեծ պապիւ ունի և թէ էլքէգի է, շեշտուցի եւ:

—Ե՞ն, քեզ լաւ յայրնի է, երանալ, որ լրտեսին ոչ ոք չէ սիրիլ, բայց ախար երկրի կառավարիներն առանց լրտեսի չեն կարող մնալ: Չուղո՛ւլ է հարկաւոր, որ ամեն քունջ ու պուճախ ներս խցկուի և համբաւներ դուրս քաշի:

Դարալազեազումն էլ մարնչութեան ցած պաշտօնը յանձն է առնում պիրադրում նասիրը և սկզբներումն՝ ինչպէս դիւանի մարդկանց ձիապան, վերջն՝ ինչպէս նասաուլ, կամ շափար, Դարալազեազն իրարոցով է բալիս:

Չենք կարող ասել, թէ խելօք ու բաջ չէր խոզի ձագը: Իւր խելքի ու կործութեան շնորհիւ էր, որ կարճ միջոցում Դարալազեազումն անուն հանեց և գրաւեց ու ցնդացրեց գաւառի առաջին հարստի միակ աղջկանը:

Նապ էլ չէր ցանկանում անամօթ աղջկայ պապու ական հայրը մի դրսից ներս ընկած լակուրի փեսայացնել, շաբ էլ գաւառի արժանաւոր երիտասարդներն ուզում էին պիրանալ անուշ պարապին, բայց մի օր՝ լոյս ցերեկով՝ յանդուդն նասիրը՝ հօր բացակայութեան ժամանակ՝ երեսուն ձիաւորով շրջապատում է դունը և սիրածին փախցնում, մի երկու շաբաթ սարերումը հետը քարշ պալիս ու բերում հօր շեմքովը ներս անում:

Ի՞նչ անէր մարդը, աղջիկը որ կայ՝ շուշայ է, որ կուրուեց, չի կարկարուիլ. աղջկայ անունն ընկնիլն ու կուրուիլը մէկ նշանակութիւն ունի, փշրուուած կուրուանքն ում է պէտք: Հայրն սրբիուում՝ է անսրուն անգեղ փախստականին լոնփեսայ շինել ու դարի չըքաշած՝ ինքը զլուխը ցած է դնում և շունչը փչում:

Այդ օրից նասիրը լուն ու դեղի, կալուածքի ու սպացուած-

քի տէր է դառնում և իշխանաւորների դռներին քարշ գալով՝ մի քանի պարի զիւղի տանուաբէրութիւնն է ձեռք բերում ու այնուհետեւ ըլէզա անունին է տէր դառնում և ողջ գաւառի մէջ խօսքի ու պարուի տէր առաջին մարդն է համարում:

Ի հարկէ, կարող էր. մվ կը համարձակուէր «Նասիր-բէգին» ըլհնազանդուիլ, որ հարուստն ամէն ըսլյումների նրա համար ընծաներ չէր ուղարկիլ: Մի օր՝ այնպիսի անհեռարես գիմարն իր ձեռք ու ոպքը շլթայած կը գտնէր և ամիսներով «Ժակումը» (բանով) կը փիթէր:

Ամիսը տարի կը դառնար ու այն լիմարը մինչև որ իր կարութեան կեսը նասիր-բէգի իրան ձեռքով՝ վերջին եասաւուից բունած՝ բոլորովին չուղացնէր, բանորից չէր ազագութիլ:

—Եւ, ի հարկէ, պառող բաժինը նասիր-բէգին էր համառմ:

—Մի օր էլ՝ ողջ Դարալագեազի բնակիները՝ հայ ու թուրք իրանց սրբի ցանկութեան հակասակ՝ թուղթ տուին դիւանին, որ նասիր-բէգին մէղալ բերուի ու սար զնացած ժամանակ իրանց վրայ էլրէզի կարգութիւն:

Են օրից էսօր՝ մեր Դարաբուղի բոլոր սարւորները հանդիսաւ չունին. ճանձ չի բզզալ մէկի տանը, որ շուն նասիրի ականչը չընկնի ու նրա ձեռքով տեղ չը հասնի:

Ամէնքիս ճարը կտրուել է, սկսել հնք կեղծաւորաբար հետք բարեկամութիւն անել: Ի հարկէ, դժուար չէր օրին մէկն այդպիսի ճիճուին սատրկացնելը, եղունգի ծացրի չափ բոլորակացրած մի կոտր արծիճ էր ու դրա չսմնը, բայց խորամանկ սատրանէն իր գլխի հոգսն առաջուց էր քաշել: Ամեն դարի՝ երբ որ նոր սար եկած էլրէզիներն ու ժողովրդի պարուելի առողջաւոր մարդիկն՝ իրանց կարութեան չափ ընծաներ հետեւ առած՝ զնում ին գեղական մեծաւորներին գեսութիւնի, իշխանաւորի առաջին խօռքն այն է լինում, թէ նասիր-բէգին ձեր աչքի լու սի պէս պէսք է մարիկ դաք. թէ չէ նրա ամեն մի մազի փոխարէն՝ ձեր հօգերն ու նախիրները դաք, չէք ազագութիլ: Դարաբի սպառնալիք չըկարծիս, երանմալ բէզ, շեշպեց ուղեկիցս, մի անգամ մի հաս ձի հեռացել էր նասիր-բէգի ջոկի միջից ու խառնուել մեր ջոկին: Խնչ ես կարծում, քիչ մնաց, ոչ թէ միայն մեր համաչնքին էր արգելում:

էս սարերը ոպք դնելը, այլ բոլոր էլեւթից ու հասարակութիւնից ձեռացագիր առնուեց, որ եթէ նասիր-բէզն իրանց մէկն ու մէկից անթաւականութիւն ցոյց փայտ բոլորը միասին զրկում են այս կողմերը սար գալու իրաւունքից:

Էն օրից էսօր՝ նասիր-բէզն իր տանը հանդիսար քնում է, իսկ մենք՝ նրա հարևաններս նրան հովութիւն, նրա աղքանքին պահապանութիւն ենք անում: Երկնքի թոշունը սիրո չի անում մեր ահից, մեր սահմանի վրայով թե տալ անցկենալ, բայց անիծած նասիր խոզի հովիւներն արձակ համարձակ յանդգնում՝ են իրանց հօրերը քշել մեր արօտարեղերն ու որդնապակ տալ: Եւ մենք սիրո շահելով միացն կարողանում ենք հեռացնել մեր տափերից մի հովուի լակորի: Խնչ արած, էսօր նաւիր-բէզի ձեռքն երկար է, մերը կարճ:

Մի մարդ կայ միացն, որից նասիր-բէզը դոլում է, որը նասիր-բէզի աչքի իւղն առել է:

— Ո՞վ է:

— Գեղարքունիցի թուլիթաշի Յունօն է էդ մարդը, որ տարեկան մի քանի անգամ նասիր բէզին մեծ վնասներ է տալիս, որովհետեւ նայու նասիր-բէզը հայերին չի սիրում ու իր ձեռի տակի հայերին շափ է նեղացնում: Մէկ-մէկ էլ իր մարդկանց ձեռովլը Գեղարքունու հայ գիւղերից ոչխար ու դաւարներ է փուն քցում: Յունօն էլ հոգին հանում է. մի հաւի ծուփի փոխարէն, նասիր բէզի հինգ ձին է քաշում:

Դեռ գուցէ շափ երկար կարպայազուկը իրսնց սրափի ցաւերը խօսակիցս, եթէ հեռուից սասնի չտփ մարդիկ մեզ չըշիմաւորէին վրանախմբից 200 քայլաչտփ հեռաւորութեան վերաց:

Նրանք նասիր-բէզի հպատակներից էին, որոնք հեռուից նկատելով մեզ՝ լուդ առաջ էին ուղարկուել յարդանք ցոյց տալու:

(Հօ գիտէք, որ ըստ արտաքինին շորերով ես մեծ մարդ էի):

— Նասիր-բէզն անբաշլդ է գրնուել հրամանոցդ լոյս երեսին արձանանալուց, խոր գլուխ իջեցնելով յայսնեց ինձ եկողներից մինը. նա գնացել է դաւառապետի մօր և յայտնի չէ, թէ երբ չը դայ բայց մեր տիրուհին—նասիր-բէզի սիրելի ամուսինը մեղ

հրամանոցդ ծառաներին ուղարկել է քեզ խնդրելու, որ բարի ոգով քովդ մեր երեսը Փրոբելը չըխնայես:

Յաւ եղաւ ինձ, ի հարկէ, նասիր-բէզի բացակայութիւնը. բայց և այնպէս, սիրով հետեւեցի հրաւիրակներիս և իշայ վերը միշած սիզաւէս գեղումը՝ նասիր բէզի ընդանեկան վրանից ոչ հեռու:

—Բարե՛ ես եկել, մեր գլխի, մեր աչքի վրայ ես շնորհ բերել, ազիզ բէզ եղբայր, լսուեցաւ վրանի միջից մի կանացի քնքոց ձայն, սրբիս վարդի թփի երեսը մի բարակ սև քող գարածուեց, որ իմ գլխի տէր նասիր բէզն էս բոպէին հրամանոցդ ղուլլուղին ըբգըտնուեց: Բայց եթէ էս գիշեր մեզ մօպ հիւր լինելու շնորհքն անես, սև քօղը կը պատռուի ու բացուած վարդերն իրանց անուշ հոգովը մեզ կը զմայլեցնեն:

Ասիական քաղցրախօսութիւնին Դժուար էր ինձ նոյն ոճով պատրասխանելը, բայց ես մի փեսակ այդ Դժուար Դրութիւնից ազարուելու ճարը գրայ:

—Այս, ինձ համար էլ մեծ ցաւ է նասիր բէզ եղբօրս հետ ըշհամբուելը, պատրասխանեցի Դէմքս Դէպի վրանը Դարձրած, բայց եղբօրս վարդի թփի վրայ բազմած բիւլբիւլի անուշ կլկոցին (Դայլայլիկին) արքանանալով՝ ես ինձ միանդամայն բաղդաւոր եմ համարում: Նափ ու շափ ուրախութիւն ու սրբի հաճոյք էր, ի հարկէ, իմ քոյր բիւլբիւլի քաղցր երկով երկար ժամանակ զմայլուելը, բայց, բարաբաղդաբար, պաշօնս զրկելու է ինձ այդ բաղդից: Ես միայն կը խնդրէի սիրելի քրոջիցս, որ ինձ խսկոյն ռանապարհ Դնելու իմաստուն կարգադրութիւնն անէր:

—Փասան, էդ ինչ խօսք է, մինչեւ որ ազիզ բէզ եղբայրս իր խոնարհ քրոջ ձեռքով պատրաստած մի կոտր նոր մորթած գառան կարշամայ անուշ չանի, նրա սիրոն թնչպէս պիտի դանի էն ցաւերը, որ աղախինդ պիտի քաշի քո զնալուց յեպոյ: Երեխայք, ձայնը հրամայականի փոխեց նասիր բէզի կինը, ուղղելով իր խօսքերն առջևս շարուած իր սրորադրեալներին, բէզ եղբայրս կարակ է անում, սա իր քրոջ սիրալ չի տիսրացնիլ, շնուր, դառը մորթեցէք: Նուգ, կրկնեց պիկինը, միոքս հօ հասկացաք, դառներն երկու քայլի վրայ արածում են, ընդունեցէք ամենից մնուին ու վիզը դա-

նակ քաշեցէք։ Միթէ դուք չըգիտէք, որ իմ գիր Նասիր բէզը  
մեր զլիին կրակ կըթափի, մեզ զառան փոխարէն շամփուրը կը  
քաշի, կը խորովի, երբ որ իր բարի ուսքովլ գայ և լսի, որ մենք  
մեր բաղդը ձեւաց թողել ենք, թառլան (բազէ) եղբօրս թռցրել  
ենք։

—Որքան էլ սիրուն կաքաւի քաղցր կուղկուզուն լսողի խելքն  
է փանում, բայց եթէ ժամանակն և ղուլլուղը չեն ներում, ինձ  
պէտք է այս անգամ ներես, պատասխանեցի ես Եթէ Աստուած  
արժան կանի, մի ամսից այս կողմից անցնելու միզք ունիմ։ այն  
ժամանակ, եթէ դուրս էլ անէք՝ չեմ գնալ, մինչև քրոջս պատրաս-  
տած անմահական շարքաթով սիրոս չըզովացնեմ։

—Իսկ դուք, դարձայ Ահմադ բէզի որդւոցը, որովհետեւ Նասիր  
բէզը տանը չէ, որ նրանից ապահովագիր տանէիք ձեր հօրը, ահա  
առէք իմ կողմից այս երկուովլ և գնացէք։ Զեր հայրը կարող է  
անհանգիսու լինել։

Ծոցափեփրիցս մի թերթ կարեցի, մատիպով խզմզեցի, գուշ-  
ուղեկիցներիս և շնորհակալութեամբ ճանապարհ դրի։

Շատ դիմադրեց Նասիր բէզի կինը, բայց երբ համոզուեց, որ  
գիշերելու մրադիր չեմ, սրիպուեց հրամայել իւր սրորադրեալնե-  
րին ծառացիս հետ միասին գնալ և ամարանոցականների միջից եր-  
կու ուղեկից ձիաւորներ բերել։

Տիկնոջ հրամանաւ բոլոր կանգնողները, որոնք մեծ մասամբ  
համայնքի առաջաւորներից էին, թողին և հեռացան։

—Ուրեմն հրամմէ՛, հանգստացիր այդ բարձերի վրայ, ձայն  
փուեց ինձ վրանի տակից տիկինը, մինչև ձեզ ճանապարհ դնելու  
հոգսը քաշուի։

ԺԼ.

Բնութեան մէջ ամէն ինչ ներդաշնակութեամբ միմեանց հետ  
շլթայանման օլակուած են. ոչ մի ճարպարարուեսոր ճարպարագէփ  
իւր բնական հանճարի ճարպարութիւնը ճարպարահմուտ կերպով  
գործ դնելուց յետոյ՝ չի կարող այնպիսի կարգ ու կանոնի, այն աս-  
տիճան համաչափութեան վերածել իւր ձեռագործը, ինչպիսին մենք

տեսնում՝ ենք բնութեան ամենամեծ ձարբարտավետի բնակերպութեան մէջ։

Ահա բարձրանում՝ ես երկնահաւասար լեռների կատարները, դիպիր հեռաւոր երկար գծի վրաց շարք ընկած լեռնաշղթան և կը տեսնես, թէ ինչ կանոնաւորութեամբ և ասդիմանաբար ամենահարթ դաշտավայրի երեսին հաղիւ նշմարելի փոքրիկ թմբակի գծի վրաց՝ որոշ հեռաւորութեամբ բուսաւ մի նոյնանման, բայց աւելի բարձր թումբ։ Դարձեալ լարում՝ ես աչքիդ տեսողութիւնը և նոյն հօրիզոնական գծով թումբը բլրակի, բլրակը բլրի, բլուրը սարաւանդի, սարաւանդը սարի հետ դրացութիւն անելով՝ կազմուցաւ. մի կանոնաւոր լեռնաշղթայ, որոնք սանդուխքի աստիճանների նման՝ մի որոշ չափով միմեանցից բարձրանալով՝ հասցնում են մրաւոր բարձրացողին մինչև ամենաբարձր կատարը և հակառակ կողմից նոյն համաչափ ասդիմաններով իջեցնում մինչև հանդիպակաց դաշտավայրը, այն միայն բարբերութեամբ գուցէ, որ մի կողմի լեռնաշղթան անսպառացին է, միւսը ապառաժուր կամ խորաւէր, մէկ կողմից շէնքիդ համար հասպարուն գերաններ և վառելափացը ու կողման անելու խորի ես սպանում, միւս կողմում հարիւրաւոր հօրունախիրներ են կերս կրում։

Լեռնացին համաշափութիւնը պահուած է և լեռնանովիսիների և ձորերի ու ձորակների մէջ։

Նափ գեղ իրար հանդիպակաց երկու երկք լեռնաշղթաներ են գրաբածուած համանման համաշափութեամբ, որոնց միմեանցից հեռացնող հովիսիներն իւրաքանչիւրն իւր միակերպութեան հետ գարուան ամէն մի եղանակին, օրուան ամէն մի ժամին ու ժամանակին իւր գարբեր գոլառութիւնն է թողնում այցելուի վրայ։

Նափ չերկարացնելու համար՝ մեր պատմուածքին դառն ոլով ասենք, որ երկու միագեւսակ լեռնահովիսիներ էին Ահմօ և Նասիր թէզերի վրանախմբերի բռնած դաշտահարթ գափարակները, որոնց իւրաքանչիւրն իւր առաւելութիւնն ու պակասութիւնն ունէր և ամէն մէկը նրանցից այլ կերպ ազդեց իմ վրայ։

Ճաշուաց շոքի խսդութիւնը մեղմելու յարմարութիւնը բնութիւնից պարզեւած էր Ահմօ թէզի ընդրած ամարանոցին, իսկ երեկոյնան սպահու և գիշերացին ժամերի հովի քաղցրութիւնն

առաւել զգալի էր նասիր բէզին յարկացրած լեռնահովտի վրայ և ի՞նչ մեջմ ու թարմ զեփիւու էր խաղում օդի մէջ հարաւից հիւսիսի ուղղութեամբ. ի՞նչ քաղցր էր հնչում ականջիս կանաչասէր, զեփնաթռիչ լորերի ու արտուզների ճգճգոցն ու ճռուղիւնը՝ միացած առուակի խոխոչիւնի ու մեղմամռունչ չփչփոցի հետ:

Որքան և կոշտացած ջղերի, խոպանացած կազմուածքի և բթացած լսողութեան ենթակ ոյ լինէր մի անձնաւորութիւն, չէր կարող չըդիմադրել իւր բնական սլակասութիւններին:

Քայց որովհետեւ բնութիւնը շատերի թւում ինձ ևս չի զըրկել հողեկան վայելչութիւններ ներշնչող զդացմունքներից, ևս շագուրախ եղաց, որ նասիր բէզի հիւրասէր և պատրաստակամ՝ ամռուսինն իրաւունք գուեց ինձ մի առժամանակ հանդսդրանալ: Եւ ի՞նչ ասել կուզի, որ ինձ նման ամբողջ օրը ձիու վրաց յօդնած ու խոնջացած ճանապարհորդին բնութեան արարչի սիրելի երգիչների անոցշ դաշլայլիներն ու երեսին խփող զովացուցիչ զեփիւռիկը հոգեկան գուարձութեան հետ մարմնական հանգստութիւն ևս կը պատճառէին. քունն է ամենից թանգադին բարիքն այդպիսի դէսքերի համար: Ամենամեծ բաւականութեամբ ազատուելով գրիկնոջ հանգախօսութիւններից՝ թիկնեցի բարձին:

Սնզգայաբար ձեռքս ինքնին դուրս է եկիլ քներակիս դակից և բնութեան քաղցրահնչիւն դացեակների օրօրի ներքոյ քունն աշքերս փակել է:

Քայց ափսոս, չեմ կարծում, թէ երկար միջոց զուարձացած լինիմ անուշիկ երազների մէջ: Անիծուին ականջիս զգացուն թըմքուկները, ամէն մի նուազ հնչոցից զրգուում են. կարող էին ուրեմն անփարբեր գտնուիլ թռչնիկների, հովի ու ջրի կլկրոցներից աւելի քաղցրահնչիւն մելամաշձիկ ու սրտադրաւ սպասկական բայաթու ձայնի դէմ: Քնակոլոլ աչքերս յետ են բացւում և ականջիս հետ միացած՝ ուղղուում դէսքի դիմացս դնկուած կանացի մենարանը՝ նասիր բէզի կնոջ վրանը:

Ոչ մի նուագաբան, ոչ մի բանական և անբան երգիչ չէր կարող այնքան քաղցրաձայն հնչել իւր երգը, ինչպիսին լսում էր վրանի դակից, որ անդարակոյս ինձ սիրաշահող աներեւոյթ դանդիրուհին էր և ոչ այլ ոք:

Ահա ինչ էր երգում Նասիր-բէզի բանական բիւլբիւլը՝

Ազիզի, աղամ գեալ, աղամ գեալ,

Օլմամիշամ, սաղամ, գեալ,

Բոլումդա լամ գանջիլի,

Դափնդա դուսսալամ գեալ:

(Աւելի լաւ է հայացնենք).

Ազիզս, իմ պէրս, արի,

Մեռած չեմ, կենդան եմ, արի,

Վզիս արիւնի շլժայ

Դրանդ գերին եմ, արի:

Մինչ իս սթափուած քնից՝ ուշադրութեամբ ականջ էի դնում,  
վերջին տողի հետ յանկարծ յետ բացուեց հարեմ-վրանի դռնակի  
վարագոյրի վիշշը:

Մի առասպելական յաւէրժահարսն, պարսկական պարազի մէջ  
մի յունական ասպուածօւնի, մի հրաշագեղ ու աննման նոր կթուած  
այծի կամթի սպիտակութեամբ, կապուտակնեայ կարասի աղումազի  
քնքշութեամբ գեղեցկունի, փղոսկրի ճերմակութեամբ կուրծքը մինչև  
կէսը յետ բաց արած, իրան-թուրանի կանացի կարճ ոսկեթել բե-  
հեզեայ արխալլի մէջ թիկնած էր թաւշեայ բարձի վրայ և իւր  
առփալից աչքերով սիրացին ակնարկներ և օդային համբոյրներ էր  
բաշխուած ինձ. հետն էլ գողունի սիրաւարփ ու խորամանկ ժպիտով  
սատաֆի սէս փայլուն մարգարփաշար. մանրիկ արամներն էր ցոյց  
որալիս:

Շուկ շուր էլ ձեռքերով, իբրև թէ համեստութիւն համարե-  
լով, ուղղում էր իր հագուստի նագուածքը:

Բաց ով ծանօթ է պարսկական կանացի հաղուստի տարազին,  
և առանց բացափրելու կըմբռնի տիկնոջ գործողութեան գաղտնիքը:

Նորափի պարսկունին շապ լաւ հասկանում էր իւր հագուստի  
թովիչ յափկութիւնը, և անփութութեամբ և անուշադրութեամբ,  
իբրև թէ, չէր էլ մուածում, թէ կարող էր ուրիշներին դաշթակ-  
ղութեան պարճառ դառնալ:

Նրա կերպասեայ արխալլի, և ոսկէ ժապաւէններով բոլորուած  
շնչին նուրբ մեփաքսեայ կարճ շապկի երկանութիւնը փորի կէսից  
ցած չէր անցնում, իսկ ծիրաննեղոյն բեհեզեայ շըշազգեսրի կապն

ամրացած էր կողաշաբքը վերջանալուց անմիջապէս յեփոց Հեգիւար՝ մի ձեռնաշափ լայնութեամբ բաց մերկութիւն մնում էր շապկի և շրջազգեսպի մէջուղը, որը կորացած ժամանակ ծածկում էր ուրիշի աչքից, իսկ ուղղուած ժամանակ փայլում էր իւր բոլոր արտաքինով՝ միջակէտում ուշադրութիւն գրաւող կլորիկ փոսիկով։ աւելի պարզ ասած՝ պորտով։

Զըքաշուեց գեղեցկուհին. նա հետզհետէ լայն ասպարէզ դուեց իւր մոլեգին կրքին։

—Ի՞նչ ես իմաս կապած, սանձի ուժին ու թամբի ճնշումին անծանօթ ու անփորձ խրցնած ձիու քուռակի նման աչքերդ վրէս չուել, յանդգնեց դառնալ ինձ նասիր-բէգի կինը. վրանի շուաքում ու ծածկերի բակ թագցրած, արեի երես չըպեսած թուքը կնիկ եմ, բայց դուլլուղի մարդկանց համար էնապէս գժուած եմ, որ եթէ վրանիս պատերի վրայ դիմամբ բացուած աչքաշափ փոքրիկ ծակերն էլ չըլլինէին և բարակ կրաւէ վրանի փոխանակ եօթը բար հասոր պարիսպներով շրջապարած մութը բանորում փակուած լինէի, դարձեալ կարող էի սրգի աչքերով քեզ բենել։ Հենց որ դու սարի միւս երեսից մեր կողմը շրջուեցիր ու ինձ իմաց դուին, թէ դիւանի մարդ է զալիս՝ աչքս դէմ գուեի վրանի ծակին և երկու ծնկների վրայ չոքած՝ ճանապարհ պահում էի, մինչեւ եկար ու դրանս իջար։ Սիրաւ բարկութիւնից քիչ էր մնում թանձր ամուերը պատող, աշխարհ սարսափացնող կացծակի պէս որու բար ու կրակ թափէր չորս կողմդ հաւաքուած մարդիկների գըլինին, որ գեպնի բակն անցնէին ու ես կարողանալի հետի խօսել, և իմ ինձ հասաւ, մինչեւ մի բասակ նրանց այսուեղից հեռացրի։

Նասիր-բէգի կինը փղձկեց ու սկսեց հեծկլբալով արտասունք թափել։

—Իմացիր, քարասիրու անիրաւ, գուեց նա, սարի չափ սիրաւ մի ընկուզի չափ եմ շինել, բուռդ եմ կոխում առ, ջարդիր ու միջուկն անուշ անուշ կեր ու կուլ տուր. էլ ընչի ես ուշանում։ Նասիրն էս զիշեր չէ հգուց մինչեւ իրիկուն էլ դժուար թէ վերադառնայ. բաղդդ իր ոգքովն եկել է ուրքիդ բակին թաւալում, իսկ դու ընչի ես աքացի բալիս, յետ շպրտում։

Ես լոել եմ և ապրուշ կորուած մահապարփ յանցաւորի պէս գլուխս կախել:

Հոգեբանօրէն եթէ դափենք, կամ նորահաս անփորձ պատանի պիտի լինէի, կամ երկրորդ երիպասարդութիւնից ծերութեան սահմանն անցնող գծից ոսկ դուրս դնող ալեոր, որ գրաւուէի մի յիմար բարփածուից:

— Աչքերդ ցած մի՛ բռնիլ, զլուխտ վեր բարձրացրու, մոփի դուր լոյս արեգակ պատկերիս, կազմ ու կապսիս, հպարտհպարփ ժապաց պարսկուհին. չափ ու ձեւ արա, ընչնվ պակաս եմ ես արևի բակին այրուած ու սեւացած քաղաքացի սիրուննիրից:

Այսրեղ յանդու գն գեղեցկուհին Փեղիցը կանգնեց, սիրապանծ երկարավիզ եղջերուի գոռոզութեամբ՝ զլուխը մի կողմի վրայ թեքեց, լայնաթեղօշ թեւերը յետ ծալեց, հոլանի փողոսկրեաց թեւերը վեր քաշեց, կիսամերկ կուրծքն և փորը վահանաձև դուրս ցցեց, որքի մէկն առաջ և միւսը յետ դրեց, աջ ձեռքն օդում բարածած՝ ձախ երկու բարակ մասների ծայրով ձիւնափայլ թոյսախի նուրբ ու քնքոյշ մորթից բռնեց, առասպելական դիցուհու կերպարանք առաւ և ասաց.

— Զլկարծես, թէ զեղեցկութիւնիդ կամ ջահելութիւնիդ վրայ եմ խելքամաշ եղել. Երան. Թուրանի խոն ու խանզադէքն էլ եթէ զլուխները որքիս փակը դնեն, իրանց եօթն յարկանի քեօշք ու ոսկի ջաւահիրներն ինձ փէշքաշ անեն, բոլորի վրայ հաւասարապէս կը թքեմ ու երեսներին նայելն արժան չեմ համարիլ: Ամենքը միասին թող մափաղ լինին իմ սարի սէս գլամարդ՝ զլիսիս վեր նասիր-բէզի հափ մազին Բայց էն օրից, որ նասիր-բէզը մօքս գովել է շուլլուղի միրզաներից մէկի սիրուն, երեսը բաց խանումին և ասել է, որ ինքն ամեն գնալով նրա մօք համարձակ ել ու մուտ ունի, մարդի փանը չեղած ժամանակը ժամերով հետը սէր ու սոհբաթի է բռնւում, էն օրից, էն բերան պարուած՝ ամօթ ու պարկառանք կորցրած խանումն աչքիս փուշ է դառել ու սիրոս ծակում: Նէնց էն օրիցը՝ մաքումն դրել եմ է՛տ փուշը կրակել, ինքս սուր նշանար դառնալ, նասիր-բէզի լերդ ու թոքը պարուարել: ուղում եմ մի ժամ, կէս ժամ, թէկուզ մի բուզէ շուլլուղի մարդկանցից մէկի հետ սէր ու սոհբաթի բռնուել, թէկուզ էն շուլլուղի

մարդն առաջինն ու գլխաւորը չըլենի, վերջին միրզէն լինի: Հիմի  
հօ ինձ հասկացար, ասա տեսնեմ խօսքդ ի՞նչ է, կամք պալիս ես էս  
գիշեր յեպ ընկնիլ, որ լրկեմ, չըթողամ ձիաւորներ դուրս գան ու  
հացի պատրաստութիւն սեսնել պամա: Ասա, քարասիրու գաղան, ի՞նչ  
ես ամսած երկինք դառել, գլխիս հօ կարկուու թափելու միաք  
չունիս: կուզես՝ զզլրաշի կնիայ ամօթը յեպ դնեմ, օրով ցերեկով  
չոքէչոք դամ ուրքերդ ընկնեմ:

— Օհ, ծհ, ծհ հեկեկաց դարձեալ խանդու պարսկուհին ծունկ  
չոքելով իւր վրանի պակի:

Չմերային մառախլամած թանձր ամպերի պարահական ճեղք-  
ուածքի միջից բոսէաբար աշուր ցոլքն երկրի երեսին բարածող  
գունաց և թոյլ արեգակը մը ասորիման կարող է վրդովել ամիս-  
ներով նապած, սառոցց կրորուած գաղաչափ ձիւնի թանձրութիւնը:  
Նոյն և մի ազդեցութիւնը թոյլին ինձ վրայ խանդու պարսկուհու  
աղերսանքներն ու արդարացուցիչ գացթակշական պատճառաբանու-  
թիւները:

— Առաջին՝ շիլ ու հիւանդու աչքն ամէն ի՞նչ սխալ է պես-  
նում, լուրջ պարասխան պուի որիկնոջը: բարակ թուղթը նրան  
երեսում է գոմչի հասպ կաշի, իսկ մի կնոջ զլիսից սանդրուածքի  
ժամանակ պոկուած մազը դութանի ճուղան: Հիմի դու ինքդ ես  
հիւանդու աչքը, մշջդ բուն դրած ուղարի նախանձն ու խանդո-  
ւութիւնը քո առողջ հոդին ցեցի սէս քրքրել են, ամէն բան ձեր  
փթած պարանոյն էք չափում: ամուսինդ մի ասորիմանաւորի կնոջ  
երես տեսել է ու եկել մօսդ պարծեցել, թէ գիշեր ցորեկ ամէն  
զնալուս իր պէս մի հասարակ թուրքը այն որիկնոջ կողքը կորած  
նսպած է լինում: Թէ դու ես սխալում, խանում, թէ քո պա-  
րուական ցիմար մարդը: լաւ իմացիր, ոչ մի օրինաւոր հասկացող  
կին ոչ կը քաշուի դրամարդի հետ խօսելուց, ոչ երեսը նրանից  
կը ծածկի և ոչ ամէն մի հանդիսողի մարդապեղ կը դնի:

— Եդ առաջին, երկրորդ ի՞նչ, հարց պուեց լրջմուաբար ուշքը  
զլուխը ժողովելով պարսկուհին:

Երկրորդ, կարծիքովս ես քեզ մի մասով արդարացնել եմ ինձ  
թոյլ պալիս: ես ուղում եմ հասպար համոզուիլ, որ դու քո մար-  
դին չափազանց սիրում ես, և որովհետեւ սիրոյ աչքերը կոյր են,

իսկ կոյրը միշտ աչքածակ կը լինի, ինչ թանգաղին պարզեւ ու գանձ էլ տաս իրեն, նա կը կարծի, թէ ուրիշինն իր ունեցածիցն աւելի գնոց է ու լաւը: Հիմի դու բաղդի ձեռքով քեզ վիճակուած նասիր բէզի պէս քաջ ու ընտիր մեծամեծների ու աշխարհի սիրելի իդիթ աղայ տղամարդից առաւել գերակշռութիւն ես դալիս որ և է հասարակ գրագրի, որովհետեւ խանդուութիւնը քեզ կուրացրել է:

—Ասածներից էսքանը միայն գլխումն նստեց, որ նախանձն աչքերիս առաջը մի հաստ թաղիք է քաշել, որ սուպին և ուղիղն իրարից զանազանեւ չըկարողանամ: Բայց մինչև նասիր բէզից երեսը բաց խանումի վրէժը շառնեմ քեզ պէս մի զուլուզի մարդի ձեռով, իմ հոգիս սլիտի հիւանդ մնայ, իմ աչքերս պէտք է ձշմարիւ լոյսին չարժանանան: Թէկուզ հողեղին չըլինիս, երկնքից ցած եկած հրեշտակ լինիս, էս րոսէին դու մարդի կերպարանքի մէջ ես, ինչ համար մարդ ես, իմ հիւանդութիւնը բժշկով, իմ աչքերը լուսաւորացնող բժիշկը դու ես, որ ձեռքս ես լնկել. երեք սարուց աւելի է՝ քեզ պէս մէկին սպասում էի, հիմի ճանդս ես լնկել, ձեռքիցս աղարուողը չեմ:

Թշուառ կին, իւր երկար ժամանակից փայփայած յոյսը րոպէտէս համակեց նրա ամբողջութիւնը և վայրկենաբար յօդս ցընդեցաւ. մի ողի և ը այն մարմնացած, որին ձեռքով դեռ չըշօշափած՝ չար կախարդի մոգական գաւաղանի շարժումով աներեւութացաւ. իսկ յուռութքը վերլուծող անդիմաշտրելի ոյժն իր փոքր ժամանակ առաջ արձակած հրամանն էր:

Իւր պատուիրանով զինավառուած երկու պարսիկ էին նրա յոյսն ի դերեւ հանողները, որոնք ծառացիս հետ միասին ձիանքը քշելով, եկան վրանիս առաջին պատրաստ սպասեցին ինձ ուղեկցելու:

—Ասելին աւելորդ է. դիկինը վաշուց ցած էր թողել վրանի դրան փէշը:

—Ուշ է, օրը տարաժամ՝ է, երանալ, խոնարհ գլուխ տուեց ուղեկիցներիցս մէկը. շրապիր, մութը չըկոխած հասնենք՝ Գ. դիւղի ամարանոցը. մենք վերադառնալու ենք:

—Այսպեղ էլ մերանալ, խոժոռած շշնչացի՝ ծառացիս կողմը դառնալով:

—Լոյս կորի աէր Ս-ի փեսայի հէրը, քչփչաց ծառամս, իբրև

ԺԵ ուղղելով հագուստս, բայց ըստ էութեան՝ իւր պարմելիքի հետքը կորցնելով. էդ խօսքն ասում եմ թէ չէ, բոլորի խուքը բերաններումը ցամաքում է: Էարեղ երեսիդ պարիւ էին տալիս, բայց հէնց որ գնացինք ձիաւոր հանելու, վրէդ հազար ու մեկ հաշոց բարձ. բացաւ: Ամէն մի շուլուղի դրանը քարշ եկող զալիս է մեր գլխին չաքում է կորում, փնժինթում էին սարւորները. մենք ոչ ձի ունինք, ոչ ձիաւոր, մի անհասկացող կնոջ խօսքով մարդ չենք չօլերը քցիւ, թող էս գիշեր էսարեղ մնայ. մինչև էգուց նասիր բէզը կը գայ, կը փեղեկանայ մվ է, թնչ մարդ է, յեպոյ թէ կուզի՝ հարիւր ձիաւորով ճանապարհ քցի:

—Յեղմի:

—Զեր դունը քանդուի, ասացի, ուզում էք ձեր փաւար ոչ խարով ամառուայ արեգակի տակ, Մուղանայ չօլումը, Արագի աւազուգներումը տապակութք. ախար սա ինքն է ամենքից մեծ թոր-փաղ-երանալը, հիմի որ ուզի, ձեր անասունների ունիները կապիլ կը տայ, մի չօփ չի թողալ, որ բերանները մրնի:

Թորփաղ-նրանալ խօսքը որ լսեցին, շարունակեց ծառաս, իրարոցով՝ դիպան ու կէս սհաթի մէջ փես թնչ դղամարդիկ դուրս բերին:

Մինչ այս, մինչ այն, վրանի եփեից կանաչի վրայ արօդի կապած ձիս արձակեցին նասիր բէզի ծառաներն և յառաջ բերին:

—Մնաս բարին, խանում քոյց. ձին հեծայ և երեսս շրջեցի դէպի սիրագոչոր խանդավառ կնոջ վրանը:

—Ուրեմն, բէզ եղբայր, բարձր ձանով պարասխանեց ինձ վրանի դակից նասիր բէզի կինը. թնչ կը հրամացիս, որ աշախինդ պարասխան տայ իր գլխի պէր, քանչերի քաջ, մեծաւորների սիրելի, իր էլալծի (համացնք) պաշտպան նասիր բէզին: Նա ինձ երեք օր քաղցած կը պահի, չորս գիշեր անքուն կը թողնի, որ չնորհք չունեցայ քեզ նսման երինքից մեզ բալդ ուղարկուած ազիզ հիւրին մի սառը ջրով պարուելու, մի գիշեր մեր աղքատ ծածկի տակ հանգստացներու:

Աղաջում եմ, ազիզ բէզ եղբայր, մի գիշերուայ անհանգստութիւնդ քո պարիկ եղբայր նասիր բէզին բաշխիր, եթէ ինչպէս սառնասիրու դղամարդ չըբարեհանցիր նրա աղախնի խնդիրը ուշադրութեան առնել:

Քարձր ձայնով հար հապ ամէն մի բառի վրայ որոշակի շեշտամ էր տիկինը:

Անդարակոյս, ես ու ինքը տիկինն էինք հասկանում յիշեալ խօսքերի նշանակութիւնը, իսկ շրջապատած ամբոխի համար նրանք անկեղծ սրտից բյլսած հիւրասիրական մեծարանքներ էին, կամ պարսկական կեղծուապարիր շողոքորթութիւններ:

Եթէ ժամանակն ու պաշտօնս ներէին, պատրասխանեցի ձիու վրայից, ես նասիր բէզի ծաղկանոցի վարդի հոփով զուարձանալն ինձ բաղդ կը համարէի: Յայսինիր իմ եղբայրական ողջոյնը մեր սիրելի նասիր բէզին, ասա՝ թող դեռ մաքրի վարդի փշերն և այնպէս ապա հոր քաշի, ապա թէ ոչ, չար փուշը տուր ծայր ունի, քիթ կարող է ծակել: Մնաս բարին, խանում, մնացէք բարե, հասարակութիւն:

—Ապուած բարի ճանապարհ պայ, գլուխ իջեցրին ժողովրդի ներկայացուցիչները. բայց ոչ ես և, կարծեմ, ոչ ինձ ուղեկցող առաջիցս գնացող թուրքերը լաւ չըլսեցինք վրանից իմ հասցէին ուղած խօսքերը:

Միայն ծառայիս ականջներն են առ եղել. նա մեզանից շաբախն էր:

—Լսեցիր, աղայ, թուրքի կնկայ վերջի խօսքերը, մօրեցաւ և հարց դուեց ինձ Միքայէլս:

—Ի՞նչ ասաց:

—Զհանդամը գնա, զոռաց քամակիցդ լիրք կնիկը, լողի գլուխը խալիչի վրայ կենալ չի:

Ես ժապացի ու ձիս կրնկեցի:

### ԺՈՒ.

Մենք անցել ենք Փալանթօքեանի լեռնաշղթայի հիւսիսային երեսի հովիտը և բարձրանում ենք Գեղամայ ծովակի հարաւային կողմի լեռնաշղթայի կագարը:

Եթէ ես ձանձրացել էի, բայց ծառայիս մէջ երիւասարդական աշխոյժը մեռած չէր, նա մէկ մէկ ոգևորւում էր և վսպահանում իմ ուշադրութիւնը գրաւել դէպի բնութեան սիրուն տիբսարանները:

— Աղայ, աղայ, գլխիդ մարմար, մի յեպ մտիկ դուք մեր էս օրուայ անցկացած դաշտին, դես ինչքան զեղեցիկ են կանանչների վրայ գնկուրած հազարաւոր վրանները, կարծես գարունքուան անձրւից յեպոց դաշտի երեսին փոռուող գեղնասունկներ լինին, որոնց վրայ շողում է իրիկնապահի ոսկեգոյն արևի լոյսն ու մտիկ դուռով՝ աչքերը ծակծկուում:

Փառքիդ մեռնիմ Ասպուած, քանի քանի փեսակ սիրուն բաներ ես սպեշել ադամորդու համար, բացականչեց ծառաս, մի դես ինչպէս պատուական ձորակ է ընկած նասիր բէզի օբաների ներքեւը:

Ծառայիս սիրաբ չըկոփրելու համար՝ յեպ նայեցի, բայց բնութեան հրաշալիքներն իրանք իրանց մոռացուեցան, երբ յանկարծ խլրացումն ու շփոթն ընկաւ յիշեալ վրանախմբի մէջ. աղմուկ ու աղաղակ, ճիչ ու հարայ հրոց օդը բարձրացաւ և ամեն կողմից գոռառում էին.

— Տարան, դարան, Նասիր բէզի ոչխարի հօպը քշեցին, դարան, դունը մէկդ կաք՝ զէնք առէք, օգնութիւն հասէք, դասը կաք՝ դուրս եկէք:

Եփոթ բարձրացնողները չորս հինգ հովիւներ էին, որոնք առանց հովուական վերարկուի ձորակից դուրս վագելով՝ շուապում էին դէպի վրանախմումը:

Սյաբանը բաւական էր խոռվելու վրանաբնակների խաղաղութիւնը, ամէն մի վրանից հրացանաւորներ էին, որ դուրս էին թափւում:

Մենք կանգ առանք և հետաքրքրութեամբ նայում էինք:

Տղամարդկանցը հետեւեցին սարւորների կանայքը. զեղջկուհի լեւանականները գոզնոցների մէջ քարեր լցրած՝ շուապում էին դէպի դիմացի ձորակը:

Աերջիններին առաջնորդում էր մեր ծանօթ խանդուք բէզուհին: Նասիր բէզի կինը մապով ցոյց էր դալիս քաջ սպարսկուհիներին ձորակի միւս երեսի լեռնաթմբի վրայ կանգնած հեծեալին, որը դոնօրէնութիւններ էր անում ոչխարի հօպը քշող վեց եօթնի շափի ձիւաւորներին:

— Տես, ինչպէս է դեղին ու ժամանակին վրէժ առնում անիծածը:

—Ով է ակնարկոծդ ձիաւորը, տղամբ, հարցը ևս անէծք կոր-  
դացող թուրքին:

—Ել ով պիտի լինի, Յունօն ինքն է, էն ասլանի ձագ Յունօն,  
որ թէպէտ հայ է և շարունակ մեզ վնաս է տալիս, բայց հալալ է  
ծծած կաթը, տղամարդ է ու կորիճ: Ասործով ասած՝ Յունօն մե-  
ջաւոր չէ. նա Նասիր բէգից իր վրէժն է առնում Տարի չի անց-  
կենալ, որ Նասիր բէգը մի քանի հայ չըկորցնիլ տայ: Ահա քանի  
դարի է, որ աշխարում էր Դարալաղեազի է. գիւղի տէրփէրի արելը  
մթնացնելու. ճանապարհներն էր կորել տալիս, տան վրայ էր յար-  
ձակում, դիւանին էր մափնում, քնած տեղը գիշերն երթկովը  
գիւլլա էր քցում, բայց ոչինչ չըկարողացաւ անել. տէրփէրն իրան  
Նասիր բէգից աւելի քաջ էր. քէշիշը մի քարափի տակ նսորած  
մի հափ այնալու հրացանով իր վրայ յանկարծակի յարձակուող  
Նասիր բէգի տասն արենիսում ձիաւորներից երեքին սպանեց. մէկը  
հէնց Նասիր-բէգի հարազափ եղբայրն էր.

—Ի՞նչ օգուզ, որ վիրջը Նասիր-բէգը յաղթեց, ընդհագեց  
խօսողին իւր ընկերը:

—Մափնութիւնով մարդին անձար թողնելը դու յաղթու-  
թիւն ես համարում, պատրասխանեց առաջինը. ոչ Դարալաղեազի  
թուրքերի կողմից սուլու սրորագրութիւններ ժողովեց Նասիր-բէգը,  
որ իբր թէ, տէրփէրն եասաղների (մաքսանենգ) խումբ է պահում  
և Սոմանլուի հողը գնալ գալ ունի: Երեք անգամ դիւանը խեղձ  
տէրփէրի դունը տակն ու վրայ արեց ու գլուխը փորձանքից ազար  
պահելու համար ունեցած զէնքերից աւելի ոչինչ չըգտաւ: Մի օր  
էլ երբ տէրփէրը լսեց, որ իրան բանուարկելու միադրութիւն կայ,  
ընդանիքն երկու անչափահաս եղբայրների յուսով թողեց ու ինքն  
Արազն անց կացաւ՝ Ղղլբաշի հողումը դլուխ պահելու:

—Այդ բոլոր պատմութիւններն ես լսել եմ, միջամկեցի ինքս  
Դիւանիմամբ. Յունօն Դարալաղեազի տէրփէրի հետ ինչ կապ ունի,  
որ էսօր Նասիր-բէգի հետ թշնամացել է և հօպերը քշում է:

—Փորձնում ես, բէգ, թէ մեզ լիմարի տեղ ես դնում, վշտա-  
ցաւ թուրքը. մարդի սիրո ինչպէս պէտք է համբերի, երբ որ  
պեսնի, թէ օգարն իր ազգին նեղութիւն է տալիս ու ինքը ձեռները  
ծալի նսորի: Մի Յունօն է, մի աշխարհք, մարդը մի քանի հոգւով,

ինչքան կարողանում է, խեղձերին պէսք դալ, չի խնայում, հայ ու թուրք չըհարցրած՝ ամէնքին հաւասար աչքով է միթիկ գուլիս ու ձեռիցն եկած օգնութիւնը չի խնայում: Եդակս մի քանի Յունոներ պէտք է լոյս ընկնէին, որ նասիր, Ահմօ ու շատր խեղձերի արիւնը ծծող բէզերին մուկը շինէին: Ափսոս, որ հայերի մէջ Յունոյի պէս սրբուներ քիչ կան. Յունոյի երեսուն ընկերից, ասում են, կէսը թուրք ու քուրդ են, իսկ մեր քաջերն էլ իրանց շահի համար են աւազակութիւն անում:

— Էս անգամ Յունոն երկու երեք շաբաթ առաջ Նասիր-բէզի մարդկանց ձեռքով Գեօդչացի Վ. Ղ. գիւղից գորած ոչխարների վրէժն է առնում, խօսեց երկրորդ ուղեկիցս և պատմեց այն դէպքը, որի մասին իմ ներկացութեամբ հայ գիւղացիք գանգագուեցին օգնականին:

— Դու մրգեղից զիսկես այդ մանրամասնութիւնները, հարց պուրի ես:

— Մեղքս ինչ թագցնեմ, երանալ, Նասիր-բէզի զրկած գողերից մինն ես ինքս էի. հրամայեց՝ չըկարողացայ խօսքը չըկարարել: Ինքս էի, որ մի ճակատը ծաղիկ կարմիր մադեանի վրայ նսպիլ էի, ինձ Յունոյի գեղն էի դրել և հայերին ասացի՝ գնացէք դիւանին պարմեցէք, թէ Յունոն էր ձեր ոչխարները բանողը:

— Ուրեմն դու վկանգաւոր մարդ ես եղել, կարող ես էս սարերի մէջ մեզ նոյնպէս վնաս պալ:

— Ասքուած ոչ անի, երանալ, ես էս բողէին մի հրամանակագործ մարդ եմ, Նասիր բէզի անունով ինձ հրամայել են քեզ ողջ առողջ գանել Գ. գիւղի ամարանոցը հասցնել, և գլուխս կը դնեմ ու չեմ թողալ քո հագ մազը գլխիցդ պակսի. մենք Նասիր-բէզի իրաւունքի բակն ենք, կասի ապրի՝ կապրենք, մեռիր՝ կը մեռնենք:

— Մերոնք լեռ դառան, նկատեց ձիաւորներիցս մինն և յայրնեց ընկերին:

— Հապա չէ, պիսի գնացին Նասիր-բէզի ոչխարի համար կոտորուեին. չես ուսնում, միայն Նասիր-բէզի հօպը քշեցին, իսկ մերոնց բոլորովին ձեռք չըպուին, պարասիանեց ընկերն և աւելացրեց, ինչ էլ յարմար ժամանակը գորան, Նասիր-բէզն էզուց էլ չի դալ:

— Աղայ, դարձաւ ինձ ծառաս, միթիկ պուր դիմացի սարի գըլ-

խին կանգնած քրդին, նա Փալանթօքեանի վրայ մեր եպելից ընկը նողը չի. հէնց ինքն է որ կայ. այ, յեւ շրջուեց, երևի ընկերներին է կանչում:

— Տունդ չըքանդուի, սարսափահար եկաւ և մորակով ընկերի կողքին հրեց Յունօյի անունով Վ. Դ. գիւղացոց սպառնացողը. չես տեսնում, Յունօյի քուրդն է, հէնց հիմի սարի երեխից բոլորը դուրս կը թափուին, մենք կորանք... կը բաշխես, բէզ, ես գլուխս ազատում եմ... Մենք էս քրդի զարբը (ոյժը) տեսել ենք, Յունօյի խըմբի մէջ սրանից քաջը չըկայ:

Աւ թուրքն ամբողջ մարմնով դող եղած՝ ձիու գլուխը շրջեց ու դէպի իւրեանց օքաների կողմը ներքեւ սլացաւ:

— Ես էլ գնացի, բէզ, Ասպուած քո կուանը կենայ, մի տուն լիքը նրեխայ ունիմ; հաց տուողն ես եմ, խեղճ-խեղճ երեսիս մոիիկ տուեց երկրորդն և առանց իմ՝ հրամանին սպասելու՝ հեփեւեց ընկերին:

Ի.

Այրեն արդէն սկսել էր իր արծաթափայլ այրողու կարձ ճառագայթները զովարար ոսկեփայլի փոխել ու իւր նեփերի սուր տուր ծայրերն երկարացնել ու բթացնել. լեռնացին հով օդի մէջ սառնութիւնը հետզհետէ զգալի էր դառնում, ձորերի և լեռների ելեւէջներն այնքան էլ չէին կարող մնում ձիանց քրտինքը փրփըրակալացնել. Գեղամայ ծովակից բարձրացած հիւսիսացին սառնաշունչ խոնաւութեան զօրութիւնը մի քանի ժամաշափ փարածութեան վրայ իր ազդեցութիւնն էր գործել, բացց մենք ուղեկիցներիս կանխօրօք ասութեան համաձայն, դեռ հեռու էինք մեր ժամադրեալ Գ. դիւշի ամարանոցից:

Անել դրութեան մէջ էինք մնացել. երկու անծանօթ օրարական, լեռնահովարի մէջգեղ կանգնել մոլորուել ենք: Դիմացի լեռան դիսին՝ աւազակախմբի անդամներից մի քուրդ միայն երեսում է, նա էլ մեզ բոլորովին չի տեսնում, կամ գուցէ չի ու զում տեսած լինիլ. շուրջն ամէն տեղ աչք է ածում, իսկ մեզ չի նկարում: Մրածում եմ ձայն տալ ու կանչել, բայց նախ երկիւղ եմ անումք

Երկրորդ՝ զուր կոկորդ՝ կը ճշէինք, կես վերստաչափ հեռաւորութիւն կար, ձայն չէր հասնիլ:

—Յեւ դառնանք նասիր բէզի կողմն, աղայ, խորհուրդ գուեց ծառաւս:

Ես անխօս գլուխս պատեցի:

—Զուրն ընկնողն անձրևից չի վախիլ, արի, վճռեցի ես և առաջ ընկայ:

—Աղայ, քուրդը, չըդիտեմ, ինչ եղաւ, ել չի երեւմ սարի դլինին:

—Ասպուած իւր հետ, դու քշիր:

Ճանապարհն ուղղակի դէպի յեռան դլուխն էր բարձրանում: ոչ աջ էինք նացում՝ ոչ ձախ, դրասդներիս անխնայ միրակում և կրնկում էինք:

Եեռան ուղիղ կապարին ենք: Գեղամայ ծովակը հեռու մշուշի մէջ երեւում է. լեռների գլուխները ոսկեզօծուել են. գեսարանն սքանչելի է, բայց ես բնութեան հրաշալիքներով կշգացած եմ: ամիսներով չափածներս լեռ ու ձորեր են, իսկ հիմի, այս վլանգաւոր պահուն ևս առաւել ինձ համար անհերաքրքիր են: Խեղճ ծառաս երկիւղից դլուխն էլ մոռացել է: Կամաց-կամաց մուժը գերինն առնում է, շուապել է հարկաւոր:

Լեռնացին նեղ ուղին հազիւ է երեւում և իջնում է դէպի մի ուրիշ ձորահովիր: Ուր կուզի գնայ, մենք աչքներիս գեսողութիւնը լարած՝ քանի լոյս կայ, ոչ կանգնելու, ոչ շեղուելու ենք, կեանքի և մահուան խնդիր է:

—Աղայ, քեզ մակաղ, առաջդ լաւ մորիկ գուր, լաւ չափ ու ձեւ արա, էնպէս գնա, անվարահօրէն կակազեց ծառաս:

Հասկացայ. ուզում ես ասել՝ մեր ճանապարհը ճիւղաւորուել է և ես չեմ նկատել:

—Զիս գեսնում, շլփիկ մարդի աչքերի պէս մէկը հիւսիս է գնում, մէկէլը Մասիս:

—Այ աղայ, որն է աւելի լայնը:

—Երկուսն էլ աղուէսի ճանապարհներ են, աղայ, լայն ու նեղ չըկայ: Ի՞նչ անենք, մւր գնանք, լացակրկնած պատասխանից ծառաս Յեւ նացեցի՝ խեղճի երեսին գոյն չէր մնացել:

— Դէհ, կերածդ հարամի, կէս բարկութեամբ, կէս հեղնօրէն գոչեցի ես. ուրիշ ժամանակ գլուխ ես ցաւացնում քո չունեցած քաջասրբութեան մասին մնապարծութիւններանելով, հիմի ինչ ես մուկը դառել. ինչ որ ինձ էն էլ քեզ, քո արիւնը հօ իմիցը կարմիր չի, պղամարդի երեսին թուր խաղացնեն՝ երկիւղ չըպիփի անի. Ասքծու անունը տանք ու աչ գնանք, կամ մի շէնի մէջ դուրս կը դանք, կամ մի քարափի պակ կուշ կը դանք, դիշերը կը լուսացնենք:

Ծառաս սիրու առաւ և ինձ հերևեց:

— Աղայ, էն մարդ է, թէ քար, որ սկին է տալի առաջներիս, ձորահովորի ծացրին եղած թլրակի ոլորապույրի թերանին, խօսեց ծառաս:

Ծառայիս աչքերն աւելի սուր էին: Ճիշդ, ճանապարհի վրայ մի սփուեր էր երեսում:

— Մարդ, քար, դազն՝ միենոյն է, հրացանդ ձեռքդ առ ու եփեիցս արի, տնօրինեցի ես և իմ փոքրիկ հրազէնս ձեռքիս բըռնեցի ու ձիուն կրնկեցի:

— Աղայ, քուրդն է, Փալանթօքեանի քուրդը:

— Ո՞վ կուզէ, լինի, արի:

Այս, պարզ ճանաչեցի, քուրդն ինքն էր: Երկի նա նոյնպէս նկատել էր մեզ ու սպասում էր:

— Բարի երեկոյ, քուրդ:

— Ասքծու բարին, աղայ. առանց տեղիցը շարժուելու և մեզ ճանապարհ տալու պափասխանեց քուրդը Գեղարքունցի հայերի բարբառով: Նա այս հարցը տուեց ինձ.— Քեզի լուրբան, աղայ, էս մւր էք չօլքեամայ բռնիլ էք, զնում էք էս մթին:

— Էնչի՞ է չօլքեասմայ (վրարանդի), չթս տեսնում առաջներիս ճանապարհը:

— Միտք ունիք Գեանջամց դնալու:

— Ո՞չ, նոր-Բայազիդ ենք զնալու և էս գիշեր Գ. գիւղի ամառանոցումն ենք քնելու:

— Եաւո ես հեռացել, աղայ, Գ. գիւղի եայլաղը մնաց սարբաջ կողմը:

— Ուրիմն դու մեզ առաջնորդիր:

— Իմ՝ երկու աչքի վրայ։ Ես հեռուից դեսայ ու հասկացայ, որ ճանապամոլոր էք ընկել, են յոդի (այն պարմառաւ) կայնեցի, որ ձեզ քար ու քարափից ազափեմ։ Եփսիցս եկեք։

Քուրդն առաջ ընկաւ։

— Աղայ, ձին շբապեցրեց, հաւասարուեց ինձ և քչփչաց ծառաս. աւազակի քամակից ընկած՝ ուր ես գնում։

— Արի, տիսմարի Շուրու շուրու քշի ձիդ, քուրդ։

Ծառաս լրութեամբ հեփսեց, իսկ քուրդը պարասխանեց։

— Զիերին ափսոս չես գալում ես, հա, հա, ճրագներ կը պըզ-պըզան, թափէն (բլրակ) իջնենք՝ հասել ենք։

Բլրակն իջանք և մմի մէջ մեր առաջ նշմարուեցին մի կարգի ընկած քսանից աւել քրդական վրաններ, կամ եղէ զնապար թա-ղեկ ալաշուխներ։

Վրանախմբի շները մեզ դիմաւորեցին հեռուումը դնկուած մի հարիի վրանի առաջին։ Անշուշու մենք մեր գրաստների հետ զո՞ն էինք գնալու պարաւող ընդանի գաղանների սուր արամներին, եթէ մեզ առաջնորդող քուրդը վաշօրոք հարիւր բայլաչափ փարա-ծութիւնից քրդերէն լիզուով ձայն չըսպար և զզուշացնէր վրանա-քնակներին՝ շներին զսպելու համար։ Ամէն մի շան առաջ երկու երեք յաղթանդամ քուրդ կորել էր և արգելում էր հաւարարիմ ոչխարապահների կագաղութիւնը։

Շուրուով բոլոր վրաններից պշամարդկանցը հեփսեցին ձիթի կամ նաւթի թիթեղեայ ճրագը ճեռքներին կանացի սեւը։

Մե՞ր իջած վրանի ընդարձակ փարածութեան վրայ հարիւրից աւել մարդ, կին, երիսպասարդ, պականի, մանուկ, տղայ և աղջիկ-ներ ժողովնեցան և ճրագները մեր քթերի փակ բանած՝ քրդական լիզուով միմեանց հարցեր էին փալիս։

Զի՞է լայօ (ի՞նչ է քօ) ճշում էր ամէնքի վրայ մեզ դեկավարող քուրդը։ մարդիկ չեք փեսել, գոռաց նա հայերէն, երևի մեզ հաս-կացնելու համար։ քաշուեք, հեռացեք, Ասփծու սրեղծած ըանդա (արարած) են, մեզ զօնաղ են, եկել են։ մեր զլիսի, մեր աչքի վրայ են եկել։ Համեցէք, աղայ ջան, ալաշուխը պարասափ է, նո-քարիդ դունն է, ուրդ դիր երեսիս, ներս մփիր, երկու ձեռքով ցոյց դուեց ինձ մեր առաջնորդն ալաշուխի մուպքը։

Քրդական ալաշուխները կամ վրաններն, առհասարակ շար անզարդ և պարզ են լինում. ինչպէս ասացի՝ եղէգնաշար շարժական մի գազանոց պափի վրացից մէկու կէս մարդի բարձրութեամբ թաղիքով ծածկած մի բոլորշի տնակ է, որի բրամագիծն երեք գազից աւել հազիւ լինի՝ ուրիշ ոչինչ: Իսկ այսպիսի թաղիքածածկ կրուրը հեղեղ էլ թափուի, չի կաթիլ: Մեզ հիւրասիրով քուրդը սակայն, ինչպէս երեւում էր, պարսկական շքեղ վրաններ շապ էր տեսել և հետեւ էր: Ալաշուխի ներսի կողմից հասր թաղիքի երեսը ծածկած էր էժանազին լայնածաղիկ կարմիր չժողվ, որի վրաց նկարուած էին որսեր և որսորդներ: Գորդածածկ լափակի վրաց՝ փոխանակ ընդհանուր գործածական ձիթի, կամ նաւթի ճրագի, պղնձէ աշրանակի մէջ վառուում էր զամբարը:

Մութն արդէն զեփինն առել էր և մենք բացի դրան առաջ առանց սեռի խորութեան խռնուած ամբոխից՝ ոչինչ չէինք դեսնում:

Այնքան բարձր էր խառնիճաղանձի աղաղակը, որ տեղական կեանքին անծանօթը կը կարծէր, թէ խուժանը ցարձակում է գործելու իւր վրաց և ոգնափակ տալու. բայց ես ընդհակառակն մեծ հաճութեամբ դիփում էի լեռների զաւակների անմեղ հետպքրութիւնից առաջացած հարցասիրական ձգտումը և միանդամայն արգելեցի հիւրասէր տան տիրոջը բարկանալ ամբոխի վրաց:

—Կը բաշխես, գլխիդ շուրբան, սարի մարդիկ են, ոչինչ չեն հասկանում, ուրախացել են, որ եկել ես, վիզը ծուեց տանտէրը:

—Ինձ համար ձեր զեղի պարզութիւնն աւելի սիրելի է, քան թէ զզլբաշների կեղծաւորութիւնը, պափախանեցի ես: (Նասիր բէզի հնոջը ցիշեցի):

Իմ բերան բանալու հեր՝ կարծես, դիւթական ազդեցութեամբ՝ բոլորը միանզամից լսեցին և սկսեցին ուշադրութեամբ լսել ինձ:

—Ես շաբ ուրախանում եմ, շարունակեցի ես, երբ դեմում եմ ձեր մացբերին, քոյրերին, աշխիկներին իրանց օպարական եղբօր դիսութիւնովն ուրախացած՝ համարձակ, բաց երեսով, Ասործուած բաց բերանով, ազափ լեզուով հաւաքուել են ինձ բարի հաղար բարի ասելու, իսկ շաբ զզւում եմ, երբ զզլբաշի կանացքը

ուրիշների առաջին երեսները ծածկում են, իսկ առանձին տեղերում գժուած կովի պէս կապերը կրրում ու իրանց ողամարդկանց անունը գետինը դնում: Ասենք՝ մեր հայ կանացքն էլ երեսները ծածկում են ու չըխօսքան են մնում, բայց հայ կինը զզըլբաշի կնոջ պէս անպատճառ չէ, հայ կինը քրդի կնոջ պէս համեստ է:

— Հա՞ հա՞ շատ ուղործ ես հրամանքես անումես, աղայ աղպէր, ձայն բարձրացրին միասին մի քանի պառաւ և միջահասակ կանացք. հայի կնանիքը մեր քուրերն են, զզըլբաշի կնանիքը մեր դուշմանները. մենք հայ կնանոնցը սիրում ենք, այ, թէ կուզե՞՞ Գիւլօն հիմի մեր մէջն է, հայի կնիկ է, Գիւլօլից հարցրու:

Գիւլօն խօսքի հետ յիշողութեանս մեջ զարթնեցին նադօյի և օգնականի պարմած վիստական արկածքները:

Յունօյի սրբի առարկան մեծ յօժարութեամբ կը ցանկայի գրեսնել, բայց առ ժամանակ խօսքը կոսուրը քցելը խոհեմութիւն համարեցի:

Փոքր առ փոքր ամբոխը ցրուեցաւ և մնացին քրդական համայնքի մի քանի գլխաւորները, որոնց հիւրընկալ դանուգէրս յեւ պահեց՝ ինձ յարգելու և հետո ժամանակ անցկացնելու համար:

— Կը բաշխես, աղայ, դիմեց ինձ դանուգէրը, սարի քուրդը չալից գլուխ չի հանում, մինչեւ հացը հասնիլը. թէ կուզես, մի քեասայ (քերելան) նոր եփ փուած դաք կաթ խմի, սառած արիւնդքիւ եռ գայ:

— Միծ հաճութեամբ, բայց դեռ քո անունդ ինձ յացնիր:

— Հրամանոցդ ծառայ Հասօ:

— Գիւրհս, Հասօ եղբայր, ինչ կայ. խնդրեմ ինձ համար իրիկնահացի նեղութիւն չըքաշես, մի գաւաթ կաթը հերիք է ինձ, շատ յոզնած եմ, կը զեղեմ հանգստանալ: Այս եղբայրներիցս էլ ներողութիւն եմ խնդրում, որ չեմ կարող հերներն երկար ու քաշը մնալահաթներ անել:

— Հիմի նարիիր, Հասօ եղբայր, ասացի ես մեր քրդին, երբ միւսները գիշեր բարի մաշթելով ցրուեցին, և իմ հարցմունքներին մէկ-մէկ պատասխանիր:

Գուրդը չոքեց երկու ծնկան վրայ և բերանը կիսաբաց՝ սպասողական դրութեան մեջ մրաւ:

—Առաջին՝ Դու այն մարդն ես, որ Փալանթօքեանի վրայ մեր  
եպելիցն էիր լնկել:

—Հրամանք, ես էինք: (Այդպէս էր խօսում նա. ես-ի հետ  
յոգնակի):

—Ի՞նչ էիր ուզում մեզանից:

—Սսում էինք՝ շուփ շփափեցէք, Փալանթօքեանն իջէք. ձորն  
անցկացէք ու Ահմօ բէզի մօպ համար հոգս բաշելը:

—Մենք մի, Դու ով, քո ի՞նչ ցաւն էր մեր համար հոգս բաշելը:

—Մեր մեծը լրկեց, ես էլ եկանք:

—Որ լինի:

—Որ լինի թուլիքաշի (աւազակապետ) Յունօն:

—Եւ ոչ նադօն:

—Զէ, նադօն Յունօյի քեսու պղան է: Դու գիտես՝ մեր նա-  
դօն Յունօյին սիրում է, բայց Յունօյի հետ դաշտեր կորող աւա-  
զակ չէ. Նադօն ուահաթ մարդ է, իր տուն ու գեղի հետ է, ամիսը  
մի երկու անգամ էլ սարերն է գնում իր փաւարին գլուխ քաշելու:

—Իսկ նադօն միթէ ձեր հետ չէր. իմ աչքովս ընկաւ:

—Հասկացայ, հրամանքդ. Էն մարդի համար ես խօսում, որին  
մենք շուրջ էինք բոլորել, որի հետ էինք ես ու մի ուրիշը, երբ  
որ երեքով եկել էինք Յուլեյման բէզի աչքին երևալու, էնպէս չէ:

—Այն, հէնց նա, գլուխս պմբացրի ես:

—Մի բան էլ ես հարցնեմ, աղայ. հրամանքդ Յունօյին աչքով  
տիսած չըկաս, կարծեմ. էնպէս չէ:

—Յունօյին՝ ոչ, բայց նադօյին, այն, գեսել եմ:

—Տեսմք՝ ինչպէս գլխի ընկայ. հասկա կասեն քուրդ միլլաթը  
քաղդ էշ է, բան չի հասկանում. բն, ի՞նչ անենք, սարի մարդիկ  
ենք քրդերս, չորս տրնանի անասունների հետ է մեր գործը, անսա-  
սունի բնութիւն ենք սպացել, բայց ախար անասունների մէջ էլ  
խելօքներ կան. իմ տակի ձին ինձանից աւելի ոչովի չի թողնիլ  
քրան նստիլու, ծուլ-ծուլ կը լինի, նստողին գլխի վրայ կը քցի:  
Եներ կան, որ առանց հովուի ոչխարի հօդ են կառավարում. էդ  
ինելք չէ: Թէ կուզեն մեզ փխմար ասոլ, մեզ վրայ ծիծաղողները,  
քրդերիս թող համարեն շուն ու ձի:

—Ոչինչ չըհասկացայ խօսքերիցդ, Հասօ եղբայր:

— Դու չըհասկացար, համայ նօքարդ (Ժառադ) հասկացաւ.  
Դու երկու իրար նման մարդին մի հոգի ես շինել. հա նադօյին  
գեսած՝ հա Յունոյին, ոնց որ մի խնձոր մէջտեղից կիսած։

— Դիցուք՝ ես սխալուել եմ, բայց մի օփար մարդ, մի աւա-  
գակապես ինչ կապ ունի ինձ հեր, ընչի պիտի մի անծանօթի  
համար մըրածի։

— Դու նադօյի բարեկամն ես թէ չէ։

— Այո, բարեկամն եմ։

— Թէ էդէնց է, Յունոյի բարեկամն էլ ես. երկու շաբաթ է  
մենք քո եփեից թաքուն մարդիկ ենք ման ածում. եթէ նադօն  
քեզ հետ չըլիներ՝ Պարալազեազ մրած օրդ, Սուլէյման բէզը քեզ  
էն ձորումն երկու շաբաթ առաջ կը կողովորէր. եթէ Յունոն էս  
առաւուր Փալանթօքեանի ձորումը Սուլէյման բէզի աչքին չերևար,  
Դու էսօր՝ կամ կաներդ կապած-ընկած կը լինէիր, կամ, հեռու քե-  
զանից, սպանուած։ Եթէ Յունոն ինձ ձեր քամակից չըշրկէր, որ ես  
ձեզ շփապացնիմ Փալանթօքեանի էս կողմի ձորը շուր անց կենաք,  
մենք կուշանացինք, չենք կարող Սուլէյման բէզի բունը վերցնիլ,  
Նրա մարդկանցից երկուսին գլխիդ մարադ անիլ Ասենք, իմ ձեր  
եփեից ընկնելը զուր անցկացաւ. Դուք մեր երկիւղից թևաւորի  
պէս էիք թոշում. մինչև ես սարի գլուխը կը բարձրանացի, Դուք  
Աւդոքէզի օքաններին մօպացել էիք, ու հէնց իմանաս, իմ ձէնն էլ  
չըլսեցիք, շունչս կորուեց ձեզ ազնացէք գոռալով։

— Ասում էինք, բայց ոչինչ չենք հասկանում։

— Ես էդպէս էլ Յունոյին պատմեցի. նա մինչև իմ զնալն էր  
Սուլէյման բէզի հետ կառի բռնուել. մերոնց սպանովածն էն եր-  
կուն էին, աղաց, բազմակողմանի ժակիուլ ասաց ինձ քուրդը, որոնց  
հրամանքդ քո աչքովը գիսար Աւդոքէզի դրանը։

— Ի՞նչ բաներ ես հնարում, քուրդ. ևս Աւդոքէզի մօպ մար-  
դու դիակ շեմ գեսել։

— Մի թաղցնիլ, աղաց, մեզ ամէն բան յաբոնի է, մէյի՛ն  
(Դիակ) բերող երկու մարդից մէկը քեզանից վախեցած յետ փախ-  
չելուս՝ մեր ձեռքն ընկաւ ու իր բերանով Յունոյին ասաց։

— Ի՞նչ ասաց։

— Ասաց, թէ քեզ գեսել են Աւդոքէզի վրանումը բազմած ու

գլուխ են առել, փախել: Օգուզն ի՞նչ, խեղճերը չըգիտէին, թէ իրանք դեռ յես չեկած, մենք իրանց բնին պիրել էինք. ապահով գուն եկան իրանց մաշարէն (քարայր), որ Սուլէյման-բէդին պատմեն, բայց էդ ժամանակը Սուլէյման բէդի տեղը Յունօն էր բազմած իր կորիճներով, իսկ Սուլէյման-բէդը Գեանջու ձորերը հասած կը լինէր:

—Ուրեմն դուք բռնեցիք այն երկու մարդին, հարցրի հետաքըքը բռնեցիք:

—Մէկը դեռ մաշարէն չէր մրել՝ թռաւ ձիու քամակը, ուզում էր փախւել, ու թիկունքից լնկերներիցս մէկի գնդակին մարալ եղաւ, ձիաթափ ընկաւ, մէկէլը ողջ առողջ մեր ճանդն անցաւ: Նա ասաց, որ Սուլէյման-բէդը մեր սպանած երկու լնկերի մարմինը լրկեց Աւդո-բէդին, որ թաշիլ տայ ու իրանց համար հաց ճամփէ, բայց քո շուաքը հերիք էր իրանց հացն էլ մոռանալու, գլուխներն էլ:

—Ուրեմն նրան էլ սպանեցիք:

—Ո՛չ, Յունօն նամարդ (անազնիւ) չի, նրան ազագեց, որ գնայ Սուլէյման-բէդին խելքի բերի՝ մեր սարերից հեռանալու:

—Որպէս զի միայն ինքն իր խմբովը մնայ խեղճ սարւորին կողոպսով, նրա տաւարը քշով, երկրադործի եզր դութանի տակից խլով, քրդի կարծիքն իմանալու դիրմամք՝ շեշտեցի ես թշուառութիւնն արգայալիքի խօսքերը:

—Հոգուդ մեղք ևս անում, աղայ, թէ որ ինձ փորձում ես, վշտացաւ քուրդը. չի՞ որ Նադօն քեզ ասել է, թէ Յունօն որ կայ, խեղճ մարդկանց համար էն աման է, որ ամառուան այրով արեգակի առաջը կարում է, խանձուած, մրկած ու չորացած դաշտերին ու արտերին անձրև է տալիս ու մեռած տեղից կենդանացնում: Քանի Սուլէյման բէդն էս սարերումը չէր երևացել, Գէօդչայի ու Դարալազեազու սարերից մի ուլ չէր պակասել. մեր Նադօնի տաւարարածները դիշեր ցերեկ ապահով քնած էին լինում: Համա հիմի մեղանից կրակներում կորած (զինավառուած) տասը կորիճ Նադօնի ապրանքին է գլուխ քաշում:

Դարձեալ Նադօ, մրածեցի ես և մի քանի րոպէ լուրջ միածողութիւնս լարելու համար՝ լնդհագեցի քրդի խօսակցութիւնը:

Սիրելի Հասօ, ասացի, ինչպէս երևում է, մենք իրար հետ  
խօսելիք դեռ շատ ունինք. լաւն այն է՝ գնաս ինձ համար մի եր-  
կու հար կարպես բերիլ փաս վրաս ծածկելու. ինձ յայգնի է, որ  
քուրդ ազգն անկողնի փոխարէն պանու գործած կարպետներ ու  
գորգեր է գործ ածում: Ծառացիս էլ պարուիրիր՝ թող քիչ բան  
ուսի ու քնի. մենք վաղը շուպ պիտի ճանապարհ ընկնինք:

—Ծառադ հիմաց կշրացած կը լինի, փեղաշոր էլ քեզ համար  
կը գտնուի: Սուպ չէ, մենք չլերի ու փալասների մէջ ենք քնում,  
բայց հիւրի համար՝ հիմի սովորել ենք, փեղաշոր պահում ենք,  
պարասիանեց Հասօն և ինձ միայն թողեց:

(Հարունակելի)

## ՍԵՒ ԱՄՊԵՐԵՆ...

ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Աւ ամպերէն, ամսղի սրտէն  
Արցունք կուգայ, թռն կուզայ.  
Ա՛ն, հւր կ'երթայ իմ սև ճամբէն.  
Այ բաշԴ, եարաբ վերջ չկանց:

Ե սրաբ դարդլու, չոր գլուխս  
Ուրփեղ պիտի քուն մզնի. —  
Պապակ-փափաք սրտի վրանց,  
Թէ չոլի մէջ ամայի...

Ա՛ն, աչերս հիվ պիտի՝ ծածկէ —  
Ազիզ մէրս համբուրով.  
Թէ ձունն ու հող — քամին բերէ  
Աւ ագռաւի վնայ-վույով...

## ԿԵԱՆՔԻՍ ՃԱՄԲԵՆ...

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Կեանքիս ճամբէն սար ու սար էր,  
Ա'խ, շատ ընկայ դէս ու դէն.  
Հիմի դադրեր, թափս եմ կորեր,  
Յոլսս եմ կորեր չար բախտէն:

Սիրս դարդոր ու անդարման  
Կարօփցեր եմ սև հողին.  
Գրկեմ հոլը, սիրս քուն դամ  
Իմ մօր ծոցը—սև հողին:

Գերեզմանս, երնէկ, կորի,  
Վրէս քամին շառաչէ.  
Վրէս խաչ, քար հէջ չըլնի,  
Մէնակ ուռին հառաչէ:

Ա'խ, աշխարհում մարդկանց ձեռքէն.  
Խաչեր շատ եմ, շատ դարեր.  
Ա'խ, վաղուց ել սրբիս վրէն  
Կան շատ ծանր, սև քարեր...

## ՆԵՄԱԿՆԵՐ ԶԱՆԳԵԶՈՒԹԻ ԳԱԽԱՐԻՑ

Նիկ. ԱՂՅԱՆԻ

### II

Նւանիձորից, ինչպէս տեսանք, ճանապարհը բարձրանում էր շարունակ. նա հասնում է մինչև Գիւմրանց սարի ուսը և ապա սկսում է գլխիվերել: Այդ սարը մի բնական սահման է Գիւնէցմահալի, այսինքն Մեղրու և իր շրջակացքի և Ղափանի (հին Կապանի) միջև. իմ տեսած առաջին զիւղը այդ զաւառակում կեմանցն էր, երկրորդը Եփահողը:

Եփահող (Ռխացն). զիւղը գտնուում է մի անգառապատ դաշտակի նեղ գոգաւորութեան մէջ. արևմբեան կողմից հոսում է «Կրաթաղաց գեղակը», իսկ միջից արևելքից դէպի արևմուգք այդ գեղակին խառնուղ Եփահողի ջուրը: Կլիման բարեխառն է. բնակիչների ասելով ոչ այնշան շող է ամառը, ոչ էլ ցուրտ ձմեռը: Գիւղը հին է և բնակիչները բնիկ են համարում իրանց. չեն յիշում թէ գաղթած լինեն ուրիշ գեղից: 79 գուն են ներկացումն, դրան ու վեց գարի առաջ՝ 11—14 գուն գաղթել են այսպեղիդ Մազրա զիւղը հողի քչութեան պարճառով:

Գլխաւոր պարապմունքը երկրագործութիւնն է. ցանում են ցորեն, գարի, հաճար, կը անանէ<sup>1</sup> որ մի տեսակ հացաբոյս է: Մշակութիւնը հին գործիքներով է. երեք լուծ արօր են բանեցնում: Բերքը սպառում են Մեղրում ու Նւանիձորում: Հողը ուժից ընկած է և քիչ: արդիւնք սրանալու համար անհրաժեշտ է հանգստացնելը,

որ և երկու կերպ է լինում։ կամ անմշակ ձգում՝ են 1—2 տարի կամ թէ սերմը փոփոխելով են հանգստացնում։ օրինակ՝ ցորենի գեղ ցանում են կրաւարութիւնով շիկահողցին երկու ցանք ունի. աշնան ցանք և զարնան ցանք. աշնանը վարում է ու ցանում; իսկ գարնանը ցելում է։ Երկրագործութիւնը սակայն չի ապահովում գիւղացոց ապրուստը, որովհետեւ հողն ուժասպառ է, անպառող և քիչ։

Գիւղի հողը պետական է. մի կոտր հող վիճելի է և, դիւ, ացոց ասելով, շուտով համայնքի սեփհականութիւնը կը դառնայ։ Արովհետեւ Փարեցուարի քչանում է վարելահողը, ուստի սկսել են անպառը կորել և վարելահող դարձնել։ Անպառը վարելահող դարձնելուն նողասրում է նաև այն հանգամանքը, որ գիւղացոց թէ սարի և թէ ցածի հողերը վար հողեր են, իսկ նոր բացած հողը ինչ կուզի լինի լու է եղածից։ Հողերը բաժանեած է ընդամիքներին վրայ «համփայի» սկզբունքով. մի օրավարը 2 փութ սերմի գեղ է. իսկ մի համփան <sup>1</sup> ունի 20 օրավար հող։ Սովորութիւն չունին հողը ծախելու իրար վրա, ինչպէս և ջրել չգիտեն. բոլոր հողերը անջրդի՝ «դամփա» կամ «դէմփ» են, թէեւ ջուր շապ ունին, բայց հոսանքը խորընկած է. ունին և բազմաթիւ աղբիւրներ, բայց զլուխ չեն դնում, որ ջրելու համար գործադրեն։ Վարելահողերը պարարտացնել չգիտեն. պարարտացնում են միայն բանջարանոցները, որ ամեն գուն ունի և որոնք ջրում են, որովհետեւ ընկած են ջրի հոսանքով. բանջարանոցները հերթով են ջրում. հերթի վրայ «համփում է մի առանձին մասը, որին ընդրում են գիւղացիք, ինչպէս նւանի ձորում։ Կարգովիկ ցանելու դեղերը պիէջնում են։

Գլսաւոր պարապմունքներից երկրորդը անասնապահութիւնն է. 79 տանից 59-ը կով ունին 1—6 հար. այծ 1—10 հար և անպայման մի ջորի կամ մի ձի. երկու գուն ոչխար են պահում։ մինը 30, միւսը 40 հար։ Կայ նաև, քիչ տներում, կթի գոմեց։ Տաւարնա ամառը պահում են պետական արօտապեղերում; որի համար վճարում են 20 ռ., որովհետեւ իրանց հողաբաժնի մէջ չեն ընկնում. անպառին էլ, որից վայր են կարում, վճարում են 20 ռ.։

<sup>1</sup> «Համփան» կազմված է մի կամ մի քանի ընդամիքներից. կան դներ որոնք պէս համփի հող ունեն, կան որ «Հարէք» են և այն.

Եզները քիչ են և չեն էլ պահում, վախենալով շրջակայ գիւղերի թուրքերից, որոնք շարունակ գողանում են:

Մնում են կողմնակի երկրորդական պարապմունքները, որոնք մասնաւոր մարդկանց ձեռքն են: Գիւղը երեք ջաղաց ունի, որոնք բաւական արդիւնք են տալիս, որովհետեւ աղում են թէ գիւղի և թէ շրջակայքի ցորենը: Գիւղում կայ մի դարբին և մի որմնաժիր. իսկ հիւսնը թափառող արհեարաւոր է, գնում գալիս է: Գիւղացիներից երկուսն էլ մանրավաճառ են: Սակայն անհնարին է տանելի ապրուսոր հանելը այս պայմաններում, ուստի գիւղացիք երեք տարի է ինչ պանդխորում են: Ներկայումն դուրսը՝ Բագւում, Բաթումում, 10—15 մարդ կայ. Դրանք ծառաներ են, խոհարար կամ հասարակ մշակ: Գնում են նաև մօտակալ հանքերը, ուր կամ հանքի բանւոր են դառնում կամ բեռն են կրում գրաստով: Ցիշելու է նաև շերամապահութիւնը, որով մի քանի գներ են պարապած և որի սակաւ արդիւնքը ծախսում է թէ դուրսը և թէ գիւղում:

Եիկահողի կինը ուրիշ տեղերի կանանց պէս աշխատասէր է. բոլորն էլ ճախարակ են մասնում և բամբակից ու բրդից թել են պարապում կուաւ ու շալ գործելու համար: Բամբակ գնում են Մելրուց, իսկ բուրդը թուրքերից են գնում փոխելով ցորենի հետ ինչ խօսք որ տան բոլոր գործերը կով կթելուց մինչև կարկապանը կանանց վրայ է. մասնակցում են և երկրադորձական աշխատանքին՝ բացի վարի ու հունձը: Այստեղի կինը լաւ դնվես է համարում: կարող-ձեռող. ընդհանրապէս առած գեղեցիկ են: Սակայն վար վարքի տէր, ոննը բրրած կանացք շար կան: Պապահում են բաւականին պսակից առաջ ըլացած աղջիկներ. երբեմն փեսացուն թողնում է աղջկան այդ վիճակում և ուրիշը առնում: բայց սովորաբար փեսացուներն առնում են վերջը: Զհաս պսակներ պարահում են: Աղջիկը ամուսնանում է 14—18 տարեկան, որ մի թշւառութիւն է գիւղացու համար. պարմառը երբեմն տղեղութիւնն է, բայց ընդհանրապէս՝ աղքափութիւնը: Այս վերջին հանգամանքը շար անգամ սփիպում է տղին, որ տւղած—(սիրած) աղջկան փախցնի, և թէ աղջկայ հօրանք տղի աղքար լինելու համար չեն ուզում:

իրանց ալջիկը տալ նրան։ Պատկելիս ձևի համար հարցնում են նաև ալջիկայ կամքը։ Հազիւ է պարահում, որ ալջիկը հօր վասթ-րից դուրս գայ, որ նշանակում է թէ ամուսնութեան խնդրում հօր կամքն առաջնակարգ նշանակութիւն ունի։ Հարսը ամուսնու դանը մընելուն պէս ամենքի հետ խօսում է։ Հիթոսութիւն կայ, բայց հին հարսների մէջ, այստեղի հարսներն ընդհանրապէս քաշւող չեն և կարծ քթկալ՝ են պահում։

Գիւղում ուսումնարան չկայ, թէև ուզեցել են ունենալ. և իսկապէս շար էլ յարմար տեղ է կենդրոնական ուսումնարանի համար. շուրջն են Հանդ, Սարաշէն և Շեշկերով գիւղերը։ Աւնին մի եկեղեցի, որի փոքրիկ գումարը երեցփոխը փալիս է գիւղացիներին 12<sup>0</sup>/օ-ով։ Գիւղացիք պարոք են անում երեք դէսլքում՝ եզն առնելիս, ցորեն առնելիս, որ միշտ պակասում է ձմրան ամիսներից սկսած, և հարկը փալու ժամանակ. և քանի որ եկեղեցու փոշերը բաւական չեն գիւղի կարիքների համար, ուստի գիւղում չորս ուրիշ մարդ կան, որոնք շահով փող են դալիս 20<sup>0</sup>/օ-ով, թէ համագիւղացիներին և թէ շրջակացքին։ Գիւղից չորս երեխայ կարդում են Մեղրու ուսումնարանում. զրադիկութեան հետ նրանք բերել էին և հայերէն երգեր, որ նորութիւն էր գիւղի համար։

Գիւղը երեք քահանայ ունի, մէկը, ինչպէս վերն էլ ասի, հովում է Շւանի-Ճորը. մի տգէտու Միւսը 100 դարեկան ծերունի է, որովհետ է Տաթևի վանքում։ իսկ երրորդը Դպրոցի երես չի փետք։ սովորել է Տաթևի վանքում։

4. Ծըկէտէն. (Կակածին)։ գիւղն ընկնում է Շիկահողից Դեպի արևելահարաւ. ձմեռը շար ձիւն է գալիս և ցրփեր է անում. սակայն երթևեկութիւնը չի խսփանուում. ամառը հով է, որովհետ է Շիկահողի նման գիւղի փեղը բարձր է, ցորենը հասնում է յուլիսի վերջերին։ Գիւղը 38 տուն է. բնակիչները 351 հոգի. 201 դղամարդ և 150 կին։ Գլխաւոր պարապմունքը երկրագործութիւնն ու անասնապահութիւնն է։ Ցանում են ցորեն, գարի, հաճար և կորեկ. ցորենը ծախում են Մեղրում կամ հանքերում, որ շար մօտ է։ Գործիքները հին են. բանեցնում են վիճակի (արօր) և լծում են 3 զոյգ եզ։ Հողը, իրանց ասելով, այնքան էլ «քերմունք» չունի։

թէն շաբ էլ ուժասպառ չէ: Վարելահողերը երկու գարին մէկ հանգստացնում են. երբեմն հանգստացնելը սերմը փոխելով է լինում. երկու տարի ցորեն են ցանում, մի տարի գարի կամ ուրիշ բան: Բաւականին հող ունին, ուստի հինգ տարի է դադարել են անդառը կորել և վարելահող դարձնելուց: Հողը համփայի փրայ է բաժանած. օրավարը հաշըում են  $1\frac{1}{2}$  փթի գեղ. շափում են հողը նաև քեսով: ասում են, օրինակ, մի բեռան հող ունիմ: բեռը ութ փութ է. ամեն փուն ունի 1—15 բեռան գեղ հող, որ նշանակում 10—80 օրավար. հողը գիւղի սեպհականութիւնն է. սեփական է նաև անդառը, որից ով որքան փայտ ուզենայ կարող է կորել տան համար:

«Տաւարի կողմից էլ գիւղացիք նեղութիւն չեն քաշում: ամեն փուն ունի 1—6 կով. նոցնքան էլ եղ. 2—15 այծ. համարեա գիւղի կէսը կթան գոմիշ ունի 1—2 հարու Տաւարն ամառը սարն են դանում. սարը պետական է և ամբողջ ամառաւյ համար գալիս են 29 ռ. այս հարկը դաւարարէրերն են վճարում: Սարի արդիւնքնիրից շաբ քիչ է ծախս գնում: աւելի դանն է սպառում: Դրա համար էլ գիւղացոց ապրուսոր րանի նման է. գործ են ածում կաթ, մածուն, պանիր, իւղ ու թան:

Միւս պարապունքը հանքերին փայտ ծախեն է, որով շուրջը չեն պարապած, որովհետեւ ձեռնորու չէ: Փայտ ծախողները իրաւունք են առնում գիւղի բնուրած մի մարդուց, որ հակում է գիւղապափկան անդառի փրայ, և փայտ են կորում իրանց դրասպով դանում հանքերը և ծախում փութը 5 կոպէկ: Մի երկու փուն էլ մի քիչ շերամ են սպանում, որ այնքան էլ շաբ բերք չի գալիս և զլուաւորապէս դան գործածութեան համար է: Գիւղում կայ մի դարրին, մի որմանադիր, մի հիւսն և մի սպիրիչ:

Միւս գիւղերի հետ համեմապած ձըկըտէնը քիչ պանդուխու է դալիս. թէն 15 տարի է ինչ առաջին մարդը դուրս է եկել գիւղից: Այժմ դուրսը՝ հազըում ու նուշըում 6 հոգի կան, որոնք մշակութիւն են անում: Պանդխութիւնից եկածները անընդունակ են դառել երկրագործական աշխատանքին. պագմանն այն է որ վաղ են դուրս եկել գիւղից և գիւղում եղած ժամանակ էլ, աւելորդ ուժեր լինելով՝ երկու ագործութեամբ չեն եղել պարապելիս:

Կանաչք շնորքով են և աշխափասէր. սովորական առանձին գործերից դուրս՝ նրանք գործում են գործ, շալ, կարպելու, կփառ և խուրջն. խելացի են և մաքրասէր: Ալջիկ առնելիս աչքի առաջ ունին նրա աշխափասիրութիւնն ու բան անելու շնորքը: Սիրահարութիւններ չկան. աղջկան ցոյց են գուլիս փեսացին ու հարցնում թէ հաւանում է. իսկ աղջկան հարցնել չկաց. նա կառարում է ծնողների կամքը: Ալջիկները մարդու են զնում 13—17 տարեկան, տղաները պատկւում են 20—30: Նորահարսը ինչպէս և տան աղջիկը օպարների հետ չեն խօսում: Հարսը սկիսուրի հետ 3—4 տարի անխօս է մնում: Տան մէջ կնոջ դիրքը երկրորդական է, մարդն իր անելուն անում է, առանց կնոջը հարցնելու կամ նրա խորհուրդին կարեւորութիւն դալու: Հնաս պատկներ քիչ են պարահում: անհաւափարիմ կանաչք կան:

Դպրոց չունին. մօտակայ կիւտկիստ գիւղի ուսումնարանում ունեցել են 8 աշակերպ, որոնք ապրելիս են եղել բարեկամների մօտ և կիրակնամուտին գալիս են եղել դուն, որ երկուշաբթի վաղ նորից զնան ուսումնարան: Դիւլում, բացի աշակերպները, 2—3 կարդացող կան. ապացուում է Նոր-Դար, որ միացն դրանք են կարդում: միւները ոչ մի հնապաքքրութիւն չունին դէպի թէրթ ասած բանը. նոյն իսկ լսել չեն ուզում:

Ճըկբէնը մի եկեղեցի ունի, որ հինգ տարի առաջ է շինած. եկեղեցին գումար չունի, այնպէս որ գիւղացիք թուրքերից ու կիւրկիւմցիներից են միայն պարպէտ առնում՝ սովորական 20<sup>0</sup>/0 ով, թէև գիւղի մէջ 7—8 հոգի շահով փող դուռ կայ. սրանք գլխաւորապէս օպար գիւղացիների են գուլիս: Պարտքը վճարել չկարողանալու դէպում կոֆլ ու եզր կամ ունեցածը ծախելը սովորական է: հարաբէն առնւում է «վէսկու» (այսինքն վարուցանքի), եղան, ցորնի, հարսանիքի և թաղման համար: Վաշխառուները մեծ մնաս են հասցնում գիւղացու գնդիսականին:

Գիւղը մի քահանաչ ունի, որ թէև այս գիւղի վրայ է ձեռնադրւած՝ բացց կիւրկիւմցի լինելով այնպեղ էլ ապրում է. միայն կարիք եղած դէպում այցելում է գիւղը, այն է կնունքին, թաղման, հարսանիքին և մի երկու զլիսաւոր գոներին:

5. Կիւտկիւմը (Γιοւդկիոմъ) Ճըկբէնից դէպի հանքերը գու-

նոր ճանապարհին է, մի բըրափափի վրայ, որ իջնում է զառիվայց-  
րով դէպի Ուզուրչայի կամ Վափան-գետի նեղ հովիսը. այդ հով-  
գումն են Զանգեզուրի սղնձահանքելը. գիւղից մինչև այնպեղ  
1 ժամաց ճանապարհ է ոպովի Գիւղը 48 տուն ունի և 507 բնա-  
կիչ. 281 տղամարդ և 226 կին: Եղանակները, գիւղացոց ասելով,  
միջակ է. ամառը հով է, ձմեռն այնքան էլ ցուրտ չէ. անձրեներն  
էլ առար են լինում: Եռւրջն են Ճըկըտէն, Քղաւէրձ (ջ) չորս վերսպի  
վրայ և Վաղաքան (7 վերսպի վրայ) գիւղերը, այնպէս որ կարող է  
քահանայական կենդրոն լինել:

Յանքերը բունում են ցորենը, դարին, աճարը, կորեկը և կըռ-  
նանէն՝ որից շատ համով հաց են թխում: Փոքրիկ բանջարանոց-  
ներում ցանում են լորի, կարսովիկ և բանջարեղին: Հողի արդիւնքը  
շատ քիչ է, ուստի և ոչինչ չի արդահանուում. ընդհակառակը՝  
հացը միշտ պակասում է, որ և գնում բերում են Շնեփերից (գե-  
տերից), որ պարզաբու հողերով շրջապատած թուրք գիւղերի մի  
խումբ է դէպի հարաւ՝ Սրաքսի ափերին լնկնող: Վարուցանքը հին  
ձեռով է. նոյն վիճակին երեք լուծովի: Ընդհանրապէս հողը յոգնած  
է և անպատշ, սովորաբար միջակ բերք են սպանում, մէկին երեք:  
Օգուելու համար անհրաժեշտ է հանգուցացնելն ու պարագացնելը.  
երկուսն էլ անում են. մի պարի վարում են և ասդա երկու պարի  
հողի մնում է լնկած. իսկ պարագացնելու միջոցներից մէկը հուն-  
ձի մնացորդի՝ խոզանի ալբեն է, միսը՝ ալբելը, որին միացն գիւ-  
ղին մօքիկ հողերն են ենթարկում: Հետուները չեն բանում, որով-  
հետեւ մեծ աշխատանք է: Հողերի մեծագոյն մասը, ինչպէս ամբողջ  
գաւառում այնպէս էլ այսպեղ, բլուրների ու սարերի թեք լանջերի  
վրայ է ընկած. ճանապարհներ ինչ խօսք որ չկան, գաւառում ոչ  
մի անիւաւոր կառք չի բանում, իսկ ձիով այց տեղերն աշը բանելը  
«փէյնելու» համար գլխացաւանք է միայն: Պարագացնելու միւս  
միջոցն էլ սերմափոխութիւնն է: Բոլոր հողերը «դէմի» են, անջրդի:

Վարելահողը, անդառի մի մասն ու արօպները գիւղի սեփա-  
կանութիւնն է և բաժանւած է «համփայի» վրայ: Մի օրավարը  
 $1\frac{1}{2}$  վիթի տեղ է (այսինքն կարող է  $1\frac{1}{2}$  փութ սերմ աճեցնել), բեռը  
9 փութ է. ամեն դուն 4—10 բեռան տեղ հող ունի, այսինքն  
24—60 օրավար: Պէտք է այսպեղ նկագեմ, որ օրավարին ամեն-

գիւղում միւնոյն չափով հող չէ համապատասխանում. օրավարները պարբեր են նայած հողին. ինձ յայտնի չէ օրավարի իսկական, թւական չափսը. կարող եմ ասել սակացն, որ յամենայն դէպս ընդունուած կէս դեսեպարինից փոքր են այստեղի օրավարները:

Գիւղը բաւականաշափ բաւար ունի. ամեն գուն կով ունի 1—8 հար, վերցրած ամենաշափ ու ամենաքիչ թւերը, 1—6 եզ, 1—15 այծ (մեծամասնութիւնը 1—2 այծ). մի չորս-հինգ գուն մի-մի կթան գոմէշ ունին, մի գուն էլ 30 ոչխար: Տաւարն ամառը ար է գնում արքունական հողերի վրայ, որի համար բաւարարէրերը վճարում են 40 ռ. գործեկան:

Եթէ կողմանկի գործեր չունենային գիւղացիք, հազիւ կարող էին ծացրը ծացրին հասցնել. հանքերի մօրիկութիւնը մի բաղր է սիւցիկիւմցոց համար: Գիւղացիների մի խոշոր մասը, գլխաւորապէս աշքափները՝ այնքեղ փայտ ու ածուխ են ծախ գանում: Անգառի մի մասը, որ գիւղի համայնքին չի պապկանում, այլ 8 հոգու միայն, գիւղացիները կտրում են թէ ածուխ շինելու և թէ փայրի համար. փայտի փթին վճարում են մի կողէկ և յետոց հանքերում փութը ծախում 5—7 կող: Խսկ ածուխի բեռը գնում է 90 կ.—1 ռ. 30 կ. բեռը երկու. հար երկու արշին երկարութիւն ունեցող պոպրակ է: Գիւղացիների մի մասն էլ բեռնակիր է հանքերում: Արհեստաւորներից կան դարբին 2 հար, սափրիչ 1 հար. ապա դնող 3 հար, հիւսն 2 հար և մի «դաստառ» (խումբ) զուռնաչի, որոնք ուրիշ գիւղեր էլ են կանչում: Մէկ երկու հարուստ գուն կապալներ ունին վերցրած հանքերում, մի քանի հոգի էլ շերամի բոժոժ (բարամա) վաճառելով են զբաղւած: Բոժոջն առնում են ցածի թուրքերից և ծախ գանում Շուշի կամ Օրդուքաթ՝ մեռաքսաթելի գործարանները: Գիւղի մէջ էլ մի 20 գուն շերամի պահում, բայց քիչ քանակութեամբ. գլխաւորապէս գան համար. ուսունը 1—4 փութ արդինք է սպանում:

Տաս-գասերկու գարի է սկսել են պանդիստել. Կիւպիւմցիներ կան այժմ Բագւում, Մերլում (անդրկասպեան երկիր), Պարսկաստանում. մշակներ, ծառաներ, խանութպան, վաճառական և նոյն խսկ գործարանարէր (թագւում): Ամենքը գնում են փող աշխագիւռ, զլուխ պահելու. գիւղում ապրելն անհնարին է դարձել: Ներկայումս

Դուրսը 1օ մարդ կաց, յետ են եկել չորս մարդ, որոնք անընդունակ են դառել երկրագործական աշխատանքին. այժմ բանւոր են հանգում կամ բեռնակիր՝ զրասրով: «Մի բանն որ մշակութիւն ա, ասում էին, հազիր մեր գիւղի մօս ըլլինք»: Չորս փուն էլ զաղթել են բոլորովին—Արդարիլ (Պարսկաստան), Մերվ, Շուշի և Բագու:

Մի եկեղեցի ունին, որի փողը բալիս են զիւղացիներին որ. կոսով. շահով փող փուղ ուրիշ 4 մարդ կաց զիւղում: Քիչ ժամանակով փող են փոխ առնում, իսկ եզր սարկած կամ հացը պակսած ժամանակ արդէն պարզը են առնում: Այցելածս բարին ունին և մի հացոց ուսումնարան, որ բացել էին 95 թ. Սեպտ.: Ուսումնարանն ունէր 60 աշակերտ և 7 աշակերտուհի. աշակերտներից 8-ը ձըկը-պէնից, մէկ-մէկ Վաշաքանից, Բլաւէրճից և Խլաթաղից և Յ-ը Բէ-խից: Ունին մի ուսուցիչ 460 ո. բարեկան ոռնիկով. բալիս էին նաև սենեակ, վառելիք և ծառաց:

Հետաքրքրական եմ համարում մէջ բերել լիշտակարանից մի մի նիւգիւմցի զրուցակցի կարծիքները ուսումնարանի մասին. պէտք է ասեմ, որ Մելքոնց մինչև Տիւղ բոլոր գիւղերում և ամենքի բերանից նոյնն եմ լսել, այնպէս որ մէջ բերածս եթէ ոչ ժողովրդի, գոնէ զանգեզու րցի հացի կարծիքը պիտի համարել: Նրա ասելով ուսումնարանը իրանց ցոժար կամքով են բաց արել, նկազմելով որ անուսում առնգիրը մարդը մի բանի պէտք չէ: Ուսումնարանի վրայ նայում են, ինչպէս մի հիմնարկութեան վրաց, որ օգնում է ազրուստ ձեռք բերելուն, զլուխ պահելուն, այսինքն ունեւոր դաւնալուն. մի հիմնարկութիւն, որից դուրս եկողը զրի սեն ու սիպտակն ճանաչում է, կարող է մի ցլուլուղի (ծառացութեան) մրնել, միրքը բաց է: Ուսուցչից ամենից առաջ իմ զրուցակիցը սպահանջում էր, որ լաւ բնաւորութիւն ունինաց. Ուսումնական ըլի վարժապետը, որ անգին մարզարիս ըլլի՝ բնաւորութիւնը վար էլ ընչի ա պէտքը, էրեխայ թակող ըլլի, Դինջ ըլլի, հարթեցող ըլլին: Իմ հարցին ուսուցչի գիւղական խնդիրներին մասնակցելու մասին՝ ասաց. «Ո՞նչ հարկաւոր ա. Շթաւջին (հարկ) չի բալու. թող զլուխը կախ իր գործին մնաց: Որ ըգբէնց անի (այսինքն զիւղի զործերով կենաց) էնա խառնակիչ ա էլի. ես նրան կանչում եմ իմ փուն. թող ուրի, խմի, գնա իրա դուն՝ հանգարանաց:

Գիւղում սփանում էին Մշակ, Նոր-Դար, Արձագանք. եօթ հոգի լրադիր հասկանալու չափ կարդալ զիտեն. մնացած զիւղացիներից բանիմացները սիրով են լսում: Նկարիմ այսրեղ, որ ընդհանրապէս այս կողմի զիւղերում կարդալ իմացող աւելի շատ կայ քան զրոշ. շատերն էլ զգրել դիտեն առանց կարդալ իմանալու, այն էլ միայն իրանց ազգանունները. բայց դրանք ոչ թէ դրում են, այլ իսկապէս նկարում, գծում են. զիտեն որ յայտնի ձևով քաշած զծերը իրանց ազգանունն է կազմում. այսպէս են և կարդալ իմացողներից շատերը: Ընդհանրապէս այս զիւղի բնակիչների զիւրակցութիւնը բարձր է միւսների հետ համեմարած: Թուրքերն ակնածում են սրանցից, գլխաւորապէս՝ որովհետեւ վախինում են. 30—40 որսկան կան զիւղում, որոնք կտրիճ բղամարդիկ են և իրար պահող: Այս զիւղի ապրուարն էլ տարբերում է միւս զիւղերի ապրուարից. միսը անսովոր բան չէ. գործ են ածում իւղ, պանիր, մածուն, թան, ձու, կաթ. ապրում են մինչև 70—80 տարի. 60 տարեկանները շատ-շատ են: Գիւղացոց ապրուարն ու ապահովողն ու բանի նման դարձնողը կողմնակի պարապմունքներն են:

Կանացք աշխարհանկար են և գնորես, զործում են կարպետ, գործում, խալի, կտու, «քեարզեա» (ասեղնագործ), սեղանի ծածկոց: Պորզ, խալի, կտու, «քեարզեա» (ասեղնագործ), սեղանի ծածկոց: Մարդու են գնում 13—18 տարեկան. բղամարդիկ կին են առնում 18, բայց մանաւանդ մինչև 20—30 տարին: Սիրահարութիւններ կան, ինչպէս նաև աղջիկ փախցնելը, որ արդիւնք է բղացի աղքաբութեան կամ չհասութեան. վերջինը անսովոր բան չէ: Ամուսնութեան գործում աղջիայ ձայնը նշանակութիւն ունի: Հարսները օգարների և սկեսուր-սկեսրացի հետ չեն խօսում. նրանց խորհուրդները մարդը լսում է, որքան տան ներքին գործերին է վերաբերում: Հակառակելու ամեն դէպում կնոջ ծեծել գիտեն: Վար վարքի տէր կանացք քիչ կան.—Կը սպանեն երկուսին էլ, ասում էր մէկը: Կանանց մի մասը երեսը բաց ունի, միսը ծածկած կարճ քթկալով:

Գիւղում երկու քահանայ կայ. մէկը ձըկըսկէնն է հովւում, միւսը կիւրկիւմը. վերջինը ուսել է Շուշի մի քահանացի մօք. ուսումնարանում կրօնի դասեր ուներ. ինքը գուղացի է. զիւղի ուած արդիւնքը բաւարար էր համեմարում:

## ԱՐԾԻՒԾ

ԴԵԲԵՆԻԿ ԴԵՄԻՌՃԵԱՆԻ

Այսպեղ ապրում էր արծիւ վեհարքան,  
Որ ազադութեամբ մենակ էր հարթում։  
Հայրենին ազատ, ձիւնն յաւերժական՝  
Եւ սիրոն արծւանիկ լայն-լայն էր պրոփում,  
Երբ ամպի ճեղքից ովկիանն էր շողում՝  
Գոռ ալիքների թռչող վաշգուրով,  
Երբ խոր յագակում անդունդն էր դողում՝  
Փոթորիկների ահեղ շնչերով.—  
Ազատն է ապրել այսպեղ մի անգամ.  
Եւ դու սողում ես—հեռու բարեկամ։

Այսպեղ ապրում էր արծիւն ամեհի,  
Քաջազօր արքան ժայռեղին գահի。  
Այս բարձունքից էլ ընկաւ զահավէժ,  
Ընկաւ նեփի պէս անդունդը մահի。  
Այսպեղ ամպերի քարւանն է իջնում,  
Որոպն է թազում—լեռան բնակիչ,  
Այսպեղից քամին իր գաղթն է գնում,  
Ուր կեանքն է սլաց, ու մահը—թռիչ.—  
Ազատն է հանգել այսպեղ մի անգամ.  
Եւ դու սողում ես—հեռու բարեկամ։

# ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԵՐԻ ԻՐԱԼՈՒՆՔԸ

## ԸՏ ՌՈՒՍԱՑ ՕՐԵՆՍԴՐՈՒԹԵԱՆ

ՄԻՔ. ԱԹԱՅԵԳԵԱՆԻ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Իրաւաբանութեանը հեղաքբքրով մի շաբք հարցերի մէջ վիճաբանութեան առանձին նիւթ է տալիս հեղինակի իրաւունքի իրաւաբանական բնաւորութիւնը։ Հեղինակի իրաւունքը, իրրեւ արդիւնք հասարակութեան նոր պայմանների, թէև իրաւունքի պատմութեան մէջ հանդէս է զալիս համեմապարար նոր ժամանակում։ Սակայն արդէն ընդարձակ գրականութիւն է առաջ բերել քաղաքակրթւած պետութիւնների մէջ։

Մեղ զբաղեցնով հարցի վերաբերմամբ լոյս պեսած բազմաթիւ հեղագորութիւններին նայելով՝ հեղինակի իրաւունքի մասին այս կամ այն կարծիքն արգայալով զիրոնական-գրողները որոշ խմբերի են բաժնուում։ Գիտնականների մի խումբը բոլորովին հերքում է գրական սեպհականութեան գոյութիւնը և հեղինակի իրաւունքը հիմնում է արգօնութիւնների վրայ։ մի ուրիշ խումբ հեղինակի իրաւունքը համարում ոչ թէ սեպհականութիւն, այլ գոյքի (Այսպիսի իրաւունք) իրաւունք։ Երրորդ խումբը հեղինակի իրաւունքին վերաբերում է իրրեւ անձնաւորութեան իրաւունքի։ ուրիշներ հեղինակի իրաւունքն ընդունում են իրրեւ սեպհականութեան իրաւունք և այլն։

Նայելով՝ թէ ինչ գեսակէսից են վերաբերում ինդրին-և ինչ հասպատութեան հետ են նոյնացնում հեղինակի իրաւունքը,

Դրա համեմատ էլ նրանց վերադրում՝ են այն բոլոր յագկութիւններն ու հեգուանկները, որոնք յագուէկ են համապատասխան հասրագութեան:

Կան մի շարք դրոշներ էլ, որոնք աշխարում են հեղինակի իրաւունքի մէջ դպնել ինքնուրոցն բնաւորութիւն կրող մի հասրագութիւն (ինսորիվուտ), որ տարբերում է քաղաքացիական իրաւունքի հասրագութիւնների բնաւորութիւնից:

Հեղինակի իրաւունքը իր պարանական զարգացման լնժագրում անցել է մի քանի շրջաններ, որի միջոցին նրան իբրև սկզբնական հիմք ծառայել է ինչպէս հին աշխարհին, ոտքնապէս միջին դարերին անծանօթ հրափարակչական իրաւունքը: Միայն զիրութիւնների և արևեսրների վերածնութեան շրջանից (15 և 16-րդ դարերից) սկսած, վերածնութեան, որ շուտով փայլեց Եւրոպայի հորիզոնի վրայ փափագրութեան դիւտից յեպոյ, —երևում են գրական երկերի սեպհականութիւնների պահպանութեան առաջին նշանները: Իսկ այդպիսի սեպհականութիւններ համարւում էին դասական (կլասիկ) երկասիրութիւնների հրափարակիչները, երկասիրութիւնների, որոնց հեղինակները արդէն վաղուց յաւիրենականութեան էին իջել և, հետեւաբար, չէր կարող խօսք լինել հեղինակի իրաւունքի կամ նրա որևէ է պահանջի մասին: Մի կողմից այն հիման վրայ, որ գրքերի փափագրութիւնը ենժագրում է որոշ նախնական ծախսեր, որոնք կարող են ետ սպացւել միայն ապագայում, երբ այդ գրքերը կ'արածեն, միւս կողմից այն, որ՝ գրքերի մեծ պահանջի պայմանով՝ զանազան մարդիկ ձեռնարկում են հրափարակել իրանց մօս եղած դասական հեղինակութիւնների ձեռագիրները<sup>1</sup>)—ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ հրափարակիչների շահերի պաշտպանութիւնը պէտք է ճանաչւել իբրև անհրաժեշտ և արդար միջոց նրանց նիւթական շահերը ապահովելու համար: Եւ ահա ԽՎ դարի վերջում արևմտեան Եւրոպայում հրափարակիչների համար բացւում է արտօնութիւնների շրջանը: Բայց հրափարակիչների տոյն բացառիկ արտօնութիւնները երկար չպետքին և պէտք է պեղի ուսչին երկերի հեղինակների՝ իբրև նրանց սրելծաղոթողների՝

<sup>1</sup> Шершненевицъ. Авторское право.

աւելի զօրեղ իրաւունքի առաջ Տիրապետող վարդապետութիւնը հեղինակի իրաւունքը համարում է մի հասպափութիւն, որ կանոնաւորում է գրական, երաժշգական և գեղարւեսդական երկերի ընդօրինակումներով արսագույղերու և գարածելու բացառիկ իրաւունքը։ Այդպէս ուրեմն, գրական սեպհականութեան իրաւունքի հիմք են ծառայում հեղինակութիւնները ընդօրինակումներով վերաբարպելու և գարածելու, այսինքն ծախքը հանելու, բոպէները։ Այս վերանորոգութիւնը գիտութեան սեպհականութիւն է դառնում XIX դարի վերջում և XIX-ի սկզբում և անդրադառնում է նաև Սրեմաւոքի օրէնսդրութիւնների մէջ՝ իրեւ հետևանք շահերի ընդհարման, մրաւոր աշխատութեան և ջանքերի։ Եւ, չիրաւի, կեանքի նոր պացմաններն և պահանջները օրէնսդիրների մէջ միպէ յլացրին կանոնաւորել հեղինակների և հարաբարակինների յարաբերութիւնները, զրական երկերի հեղինակներին և նրանց ժառանգներին թոյլ տալով ժամանակաւոր կերպով օգուտել այդ երկերի բերած արդիւնքից։ այլ խօսքով՝ հեղինակութիւնների պալագրութիւնից և ծախելուց նիւթական օգուտ սրանալու արգօնութիւնը սահմանափակւեց որոշ ժամանակամիջոցով՝ 30, 50 և աւելի դարիներ—զանազան ժամանակամիջոցների համար, —որի լրանալուց յերոյ հեղինակութիւնները դառնում են հասարակական սեպհականութիւն։

Հեղինակի իրաւունքի ժամանակաւոր լինելու մէջ շար հետագույղներ գիտանում են ժողովուրդների լայնածաւալ լուսաւորութեան դրաւականը՝ իրեւ մի միջոցի, որ հնարաւորութիւն է դալիս էժան կերպով զրքեր ձեռք բերելու։ Այս նիւթին վերաբերեալ օրէնքը, առում է ֆրանսիական իրաւարան Աէնուարը, միայն այն ժամանակ կարող է լաւ լինել, եթե ոչ հեղինակի իրաւունքն է զոհ բերում հասարակութեան իրաւունքին, ոչ էլ հասարակութեան իրաւունքը հեղինակի իրաւունքին։<sup>1</sup>

Այսպէս թէ այնպէս, տուանձին պետութիւնների օրէնսդրութիւնները իրենց հովանաւորութեան դակ առան հեղինակների շահերը. սակայն սահմանափակումը բաւական չէր։ Բանն այն է որ

<sup>1</sup> Табакниковъ, Литературая собственность.

միջազգային յարաբերութիւնների զարդացմամբ, մի պետութեան սահմաններից դուրս դարւելու և դարածւելու հետ միասին պէտք զգացւեց հեղինակների փոխադարձ շահների պաշտպանութեան, որի հետեւանքն այն եղաւ, որ առաջ եկան միջազգային զանազան դաշնակցութիւններ, ինչպէս օրինակ՝ Բէլգիայի և Ֆրանսիայի, Անգլիայի և Ամերիկայի միջև հեղինակների իրաւունքները փոխադարձապէս պաշտպանութիւնը վերաբերմամբ։ Այսպէղ կարելի է նկատել, որ հեղինակների իրաւունքները փոխադարձաբար ընդունելու հարցի վերաբերեալ միջազգային ամենամեծ իրողութիւնը եղաւ Բեռնի դաշնադրութիւնը 1886 թ., որին մասնակցեցին Եւրոպացի համարեա բոլոր լուսաւորւած պետութիւնները, բացի Ռուսիայից։

Ռուսական պետութիւնը, որ այնքան լայն կերպով օգուտում է գրականութեան, դիրութեան և արևեարների վերաբերեալ օգարաշխարասիրութիւններից, հասկանալի է որ իր համար ձեռնորու չհամարեց Բեռնի դաշնադրութեան մասնակցութիւնը, բայց և այնպէս 1861 թ. նա էլ սպիտաւած էր եղել Դաշինք կապել ու Ֆրանսիայի և իսկ յաջորդ գործին Բելգիայի հետ հեղինակների իրաւունքների փոխադարձ պաշտպանութեան համար։ սակայն դաշնադրութիւնը ոչ ունենալու էր մինչև 25 դարի, այնպէս որ 1887 թ.-ից Ռուսիան արդէն իրեն ազատ է զգում հեղինակի իրաւունքին վերաբերեալ որ և է միջազգային պարագաներութիւնից։ Չնայելով Ռուսական պետութեան այսպիսի առանձնացած դրութեանը այդ խընդրի մէջ, բայց և այնպէս պէտք է ենթադրել, որ հեղինակի իրաւունքի աստիճանական զարգացումն ու միաւորումը, հաւանորէն առաջ կը բերեն մի ընդհանուր օրէնք այդ հարցի մասին բոլոր քաղաքակրթւած պետութիւնների համար։ Այս ինդիրը պրոֆ. Եերշենսիչի կարծիքով, աւելի ևս հնարաւոր է այն պատճառով, որ հեղինակի իրաւունքի հասպագութիւնը նոյնքան քիչ է կապւած մի երկրի սովորութիւնների, բարքերի և նախապաշարմունքների հետ, որքան և ինքը միաքը, որ կեանք է բալիս գիտութեան և արևեապների վերաբերեալ երկերին։<sup>1</sup>

Սոյն ներածութեան մէջ մենք միտք չենք ունեցել ներկայա-

<sup>1</sup> Шершеневичъ. Авторское право.

ցնել հեղինակի իրաւունքի զարգացման կարարելապէս ամբողջապահութեած պատկերը. մեր նպատակն է եղել լոկ ընդհանուր կերպով գծել հեղինակի իրաւունքի յառաջընթաց շարժման պարմութեան զինաւոր կէտերը, միաժամանակ մէջ բերելով և մեզ հետաքրքրող հարցին վերաբերեալ լուսաւորւած պետութիւնների յացնած ընդհանուր դրութիւնները: Եթերագայ շարունակութեան մէջ մէնք կ'աշխափենք մի պարմական, համեմարաբար մանրամասն, հայեացք ձգել հեղինակի իրաւունքի վրաց Ռուսիայում, միայն սկսելով հետրոս Մեծի թագաւորութիւնից, որովհետեւ Ռուսական պետութեան նախընթաց պարմութիւնը ոչ մի հետաքրքրութիւն չի ներկայացնում հեղինակի իրաւունքի հարցի նկարմամբ:

Պետրոս Մեծի թաղաւորութեան լուսաւորող շրաշանը հոչակւած է այնպիսի դէպքերով, որոնք պէտք է արագացնէին հեղինակի իրաւունքի գաղափարի վերահաս ծնունդը ուուս հասարակութեան մէջ: Պետրոս Մեծը քաջալերում էր տպագրութեան գործը, նպաստում էր տպարանների զարգացմանը և օրար գրականութեան երկերի ժարդմանաբար լոյս դեմնելուն. նա հիմնեց առաջին ուուս լրագիրը, մագրեց նոր քաղաքացիական գառեր (փոխանակ ուստոնական տպառերի): Ուուս հասարակութեան մէջ դեռ մեծ պահանջ չէր զգացւում գրականութեան և սրա հետ կապւած հիմնարկութիւնների, ինչպիս օրինակ տպարանների վերաբերմամբ. հրաբուրակչական գործը պահպանում էր բացառապէս կառավարութեան ձեռքով: Առաջին արրօնութիւնը, որ Պետրոս Մեծը շնորհեց Ամստերդամցի տպարանարէր Տեսինդին, բացառիկ իրաւունք էր տալիս վերջինիս տպագրել և Ուուսասպան բերել իր տպարաններից դուրս եկած հրաբուրակութիւնները, քարոզներ, նկարներ, մաժեմարթիկական և գեղարվեստական գրքեր, պատկերներ և այլն:

Դեռ ՏՎԻ և ՏՎԻ դարերում արևմուգում մասնաւոր անձերի, հրապարակիչների զգացած պահանջը՝ արրօնութիւններ ձեռք բերել իրենց հրաբուրակութիւնները կողմանակի արդարապութիւնների դէմ պաշտպանելու համար—մինչեւ իսկ ՏՎԻ դարում Ռուսիայի մէջ նպաստաւոր հող չգրաւ իւր համար: Ուուս հասարակութիւնը դու-

պատրաստւած չէր ըմբռնելու մի այդպիսի նորութիւն։ Նշանաւոր է այն երեսզթը, որ Ռուսաստրանում հեղինակի իրաւունքի առաջին արգոնութիւնները ձեռք բերին ոչ թէ ֆիզիկական, այլ իրաւաբանական անձնաւորութիւնները, այն է՝ Գիտութիւնների Ակադեմիան և ապա «Ժողովրդական Դպրոցների յանձնաժողովը»։ Գիտութիւնների Ակադեմիան իրաւունք սպացաւ փապարել և ծախսել հասցեների և քաղաքական, ասրացարաշխական օրացոյց, ինչպէս նաև Պետքերբուրգում լրադիր հրապարակելու իրաւունքը։ Իսկ ինչ վերաբերում է ժողովրդական Դպրոցների յանձնաժողովին, Դպրոցների համար գրքեր հրապարակելու բացառիկ արգոնութիւնը նրան շնորհւեց։

Գիտութիւնների Ակադեմիայի 1703 թւի կանոնադրութեան մէջ զեփեղւած է այդ արգոնութեան մասին հետեւեալը. «Կայսերութեան մէջ գունուղ բոլոր փապարաններին արգելում է արդարապել, առանց նրա առանձին թույլրութեան, այն գրքերը, որոնք լոյս են փեսել ակադեմիական փապարանում։ Հակառակ դէպքում նոքա պիտի գրաւեն յօդուգ Ակադեմիայի»<sup>1</sup>։ Այնուհետեւ 1761 թ. Կառավարիչ Սենատի հրամանով հիմնում է մի առանձին փապարան իրեւ մաս Սենատի փապարանի, ուր փալում են նադեորնի սովետնիկ Վոլչկովի թարգմանած գրքերը։ Դուրս է դալիս, որ մի այդպիսի գործ ձեռնարկւած էր շնորհիւ կառավարութեան առանձին հոգածութեան դէպի Վոլչկովի նիւթական վիճակը, որին այդ անհրաժեշտ էր մի զբանարութեանը դարման անելու համար»<sup>2</sup>։

Եկամբերինա Ա-ի թագաւորութեան միջոցին արգոնութիւններ շնորհւեցին, 1771 թ., Ռուսաստան եկած Յովհան Հարթունգին՝ Պետքերբուրգում մասնաւոր («ազատ») փապարան հիմնելու համար, ուր պէտք է փալէին միայն օրար լեզուներով գրքեր, միևնոյն ժամանակ պարուաւոր լինելով փապել այնպիսի հեղինակութիւններ, որոնք շատապարպելի չէին ոչ քրիստոնէական օրէնքների, ոչ կառավարութեան և ոչ էլ բարեբարոյութեան փեսակեպից»<sup>1</sup>։ Մի քանի փարբեցոյց, այն է 1776 թ., նոյնպիսի արգոնութիւն շնորհւեց Վելյուքսիսը և Ընոռ զրավաճառներին։

<sup>1</sup> Ենըենեպիչ, Հեղինակի իրաւունքը, էջ 122.

<sup>2</sup> Կալմըկով. Գրական սեպհականութեան մասին.

ԽVIII դարի վերջում երևան եկան նոր տպարաններ, մանաւանդ Պետքը բուրգում և Մուկւայում։ Ռուսական լուսաւորութիւնը տպարածելու գործում ահազին ծառացութիւն մասուցեց առաջին ուս ժուռնալիսր և գրող Նովիկովը։

Ալէսանդր Լի թագաւորութիւնը նշանաւոր է դէպի գրական գործիչները ցոյց գրած առանձին հոգափարութեամբ, որոնք ծառայողների հետ համահաւասար սրանում էին թոշակ և նշաններ։ Ի միջի ազլոց, Էժշկական-Վիրաբուժական Ակադեմիան արժանացաւ կառավարութիւնից ձեռք բերելու այնպիսի արգունութիւն, որի շնորհիւ ակադեմիկոսը, պրոֆէսորը կամ ադիւնկտը իրաւունք ունեին իրենց ներկայացրած շարադրութեան համար վարձարրութիւն սրանալու։ Միենոյն առանձնաշնորհը ներմուծւեց 1814 թ. նաև հոգեոր ակադեմիաների կանոնադրութեան մէջ։

Այսպեղ պէտք է նկատել, որ Պուշկինը առաջին գրողն էր, որ մեծ եկամուս ձեռք բերաւ իր երկասիրութիւնների հրաժարակութիւնից. ցուցում կայ, որ Պուշկինը կառավարութիւնից 20,000 ռուբլի թուղթ փող սրացաւ իր «Պուգաչովի խուվութեան պատմութիւնը» գրւածքի համար։

Այսպէս թէ այնպիս, ռուսական ինքնուրոյն գրականութեան ծնունդ առնելը և ռուսաց հասարակութեան հոգեոր պահանջների ասպիճանական զարգացումը օրէնսդրութեան մէջ առաջացրին այն միոքը, թէ հարկաւոր է կանոնաւորել հրաժարակիչների յարաբերութիւնները և զլիսաւորապէս պարզել հեղինակների իրաւաբանական դրութիւնը։ Սրա հետեւանքն այն եղաւ, որ 1828 թ. ապրիլի 22-ին հանդէս եկան դրացննական կանոնադրութիւնը և սրան իրեկ յաւելւած՝ հեղինակների մասին կարգադրութիւնը։

Թէև 1828 թ-ի օրէնքը հեղինակի իրաւունքի նկազմամբ ներկայ օրէնսդրութեան հիմք է ծառայում, այնուամենայնիւ այդ օրէնքը 1830-ին մի քանի փոփոխութիւնների ենթարկւեց. այնուհետեւ օրէնքների ժողովածուի 1842 թ-ի հրաժարակութեան մէջ հեղինակի իրաւունքի վերաբերմամբ որոշումները՝ առանց փոփոխութեան՝ դեղ գրան ՏXIV հապորի մէջ՝ իրեկ յաւելւած ոճրագործութիւնների առաջն առնելու և խափանելու մասին կանոնադրութեան 129 յօդւածի։ Սակայն արդէն 1857 թ-ին հեղինակի իրաւ-

ւունքի ժամանակամիջոցը, հեղինակի մահից յերոյ, երկարացւեց 25: ից մինչև 50 տարի և օրէնսդրքի հրաժարակութեան մէջ դրաքննական (ցենզուրայի) կանոնադրութիւնը XIV հարորում՝ առանձին տեղ սրբացաւ: Մինչև 1887 թւականը գրաքննական կանոնադրութիւնը անփոփոխ մնաց և միայն այդ թւականին հեղինակի իրաւունքների մասին որոշումները տեղափոխուեցին իբրև յաւելած X հարորի I մասի 420 յոդւածի և կազմեցին սեպհականութեան իրաւունքի մի առանձին դեսակը:

**Սերկայումն գործադրուող օրէնսդրութեան մէջ հեղինակի իրաւունքին վերաբերեալ որոշումները մի առանձին բաժին չեն կազմում, այլ տեղաւորած են Ռուսական Կայսերութեան օրէնքների ժողովածուի առանձին մասերում, այն է՝ քաղաքացիական դատավարութեան կանոնադրութեան X հարորի I մասում և պատիժների վերաբերեալ կանոնադրութեան մէջ:**

Վերջինս իր մէջ բովանդակում է լոկ մի քանի յօդւածներ զիրնական և գեղարւեստական սեպհականութիւնը իւրացնողներին պատրասիանակութեան ենթարկելու ժամանակամիջոցների և համապարտախան պատիժների մասին: Իսկ ինչ վերաբերում է հեղինակի իրաւունքների էութեանը գրական երկերի նկարմամբ, այդ իրաւունքի դիրոջ (=սուրցեկո) և առարկայի (=օբյեկտ) դրութեանը, չիշեալ իրաւունքների ծագելուն, ուրիշին անցնելուն և վերջանալուն, այդ ամենի բնորոշումը դրւում է քաղաքացիական օրէնսդրութեան և կառավարիչ սենադի վճռածինջ որոշումների մէջ, որոշումներ, որոնք կայացել են հեղինակի իրաւունքին վերաբերեալ զանազան վիճելի ինդիրների առիթով: Ռուսական օրէնսդրութիւնն անհրաժեշտ է համարում սահմանել հեղինակի իրաւունքի էութիւնը. այսպէս՝ 420 յօդւածի 2-րդ ծանօթութիւնը յայգնում է. Պրական և գեղարւեստական երկերի սեպհականութեան իրաւունքը, որ պարկանում է այդ երկերի հեղինակներին, նրանց ժառանգներին կամ այն անձնաւորութիւններին, որոնց վրայ է փոխանցւած այդ իրաւունքը առաջինների և երկրորդների կողմից, կոչւում է գրական սեպհականութիւն, իսկ

երաժշտական աշխարհասիրութիւնների վերաբերմամբ սեպհականութեան իրաւունքը—երաժշտական սեպհականութիւն...»

Թէև մի այդպիսի որոշում դժւար թէ կարող լինի լուսաբանել հեղինակի իրաւունքի էութիւնը, սակայն գրական սեպհականութեան առանձին չիշափակութիւնը մասամբ ցոյց է Փալիս, «ը ոռուսական օրէնսդրութիւնն էլ զանազանում է այն սովորական սեպհականութեան բնաւորութիւնից։ Բացի այս՝ 420-րդ յօդուածի յաւելածից (Ճանօթ. 2) երեսում է, որ օրէնքը հեղինակին իրաւունք է Փալիս օգուստու իր հեղինակութիւնից, որպէս բարեվաստակ (Յագուրիօքրետենի) ձեռք բերւած գոյքից։ Հեղինակութիւններից և բարեվաստակ ձեռք բերւած գոյքից օգուստու իրաւունքի միակերպութեան մասին օրէնքի ցուցումը հետևանք է ոռուսական օրէնքի հայեցակէտի՝ գոյքերի բանակների վերաբերմամբ։ Օրէնսդրութիւնը զանազանում է պոհմական դոյքը, «ը չի կարող կուակի ենթարկել, և բարեվաստակ ձեռք բերւած գոյքը։ Միայն այս վերջինը կարող է իր տիրոջ կողմից անարգել կերպով դրւել մի ուրիշին և ձեռքից ձեռք անցնել վաճառման, կուակի և այլ միջոցներով։

Ցիրաւի, ալսպիսի գործողութիւնների մէջ հեղինակութիւններն ու ընդհանրապէս արդար վաստակով ձեռք բերւած գոյքերը նման են միմեանց։ բաց միայն այդքան։ Հեղինակութիւնների հրապարակական անրդից գնելու դէպքում՝ օրէնքը շեղւում է բարեվաստակ ձեռք բերւած գոյքերի վերաբերմամբ իր ընդունած կարգից։ օրէնքը հեղինակութիւնների գնողին սեպհականագէր չէ ճանաչում, այն ինչ այլ գոյքերի վերաբերութեամբ այդպիսի սահմանափակում՝ գոյութիւն չունի։ Միայն կարելի է այս ասել, «ը հեղինակի և բարեվաստակ ձեռք բերւած այլ գոյքի պէրերը համանաման են։ ինչպէս որ առաջինը կարող է իր այդ բանակ ցանկութեան համեմար ազարորէն վարւել իր երկի հետ և ուրիշներին զիջանել, նոյնպէս կարող է վարւել գոյքի պէրը։

Վերև արդէն նկարեցինք, որ մի երկի բաղադրութիւնն է առաջ բերում դրական սեպհականութեան իրաւունքը հեղինակի կամ նրա ժառանգների համար։ Եւ ոռուսական օրէնսդրութիւնը այդ առիթով մարդնանիշ է անում հեղինակի իրաւունքի հական կէտը՝ սահմանափակելով հեղինակութիւնները բապադրելու և ժամա-

Նակամիջոցը շաւագործելու 420-րդ յօդւածի (Ճանօթ. 2) յաւելւածի առաջին կէտը հեղինակին փալիս է բացառիկ իրաւունք իր բոլոր կեանքում օգուելու պայագրութիւնից և նրա վաճառումից իր բարեհայցողութեան համեմարու։ Հեղինակի իրաւունքի էութեան մասին մանրամասն հայեացք գոնում ենք քաղաքացիական բաժնի հետևեալ վճարածինջ որոշման մէջ (=կասացիոնիօ թէշենի) 1870 թ. № 788. «Մեր օրէնսդրութեան համաձայն՝ գիտութեան, գրականութեան գեղարւեագների և արւեստների ամեն մի արրադրութիւն փալիս է հեղինակներին զանազան իրաւունքներ թէ անձնական և թէ գոյքի։ Անձնական իրաւունքներն են կամ զանազան դեսակ պարզեներ և կամ՝ արտօնութիւններ, որ գորում են նրան իրրե հեղինակի. իսկ գոյքի վերաբերեալները նոքա են, որոնք պարկանում են նոյն անձին, որպէս հեղինակութիւնների սեպհականագրիրոջ։ Սրանցից առաջինը ժառանգական չէ և չի կարող գոյութիւն ունենալ հեղինակի մեռնելուց յետոյ։ Երկրորդը՝ ընդհակառակը, ինչպէս և ամեն մի գոյքի սեպհականութեան իրաւունք, կարող է անցնել ժառանգներին կամ մի որ և է ուրիշին օրինական սահմանների մէջ»։

Այսպէս ուրեմն վճարածինջ որոշումը ընդունում է անձնական դարրի գոյութիւնը հեղինակի իրաւունքի մէջ, երեխ այն հիման վրայ, որ իրերի բնութեան դէմ կը լինէր, և թէ կարելի համարւէր հեղինակութիւնն իր հեղինակից բոլորովին անջափել, ինչպէս անջափում է մի առարկայ իր նախկին դիրոջից և սեպհականութիւն դառնում մի ուրիշի։

Այսպեղ ի նկարի է առնեում այսպէս կոչւած հեղինակելու արարողութիւնը, որ հեղինակի անձնաւորութիւնից անբաժան է թէւ հեղինակի իրաւունքի պէրերը կարող են փոխւել։

(Վերջը բաջորդ անգամ)

# ԴԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԱՎԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

«Deutsche Hilfsbünde für Armenien»

ԳԵՂՐԳՐԻ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵԶՋԵԱՆԻ

(Վ, Կ, Ր, Հ<sup>1</sup>)

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ուրեմն մեզ հետաքրքրող հարցերը սոքա են. ա. արդեօք Հիւ-  
ֆսբունդը ձգում է դաւանափոխ անել հայ որբիկներին և բ.  
ձգում է արդեօք գերմանացնել նոցաւ

Անցեալ համարում մենք գուխը նիւթեր այս հարցերին պա-  
տասխանելու համար. հիմնելով նոցա վրայ և առհասարակ այս  
հարցերի վերաբերեալ բոլոր նիւթերի վրայ, որոնք ամբողջութեամբ  
բերել ի հարկէ անկարելի է<sup>2</sup>, կարծում ենք, որ սխալ չէ հետեւալ  
եղակացութիւնը:

<sup>1</sup> Տես Մուրճ 1899 թ. № 11—12, 1900 թ. № 1, 2, 3.

<sup>2</sup> Հետաքրքրութիւն համար կ'բնրենք դիմաւոր աշբիւրները. «Mitthei-  
lungen aus d. Orient». 1899 № 4, էջ 27, № 5, էջ 34. № 9, էջ 73-74.  
«Das Reich Christi» 1898. ապրիլ, յունաշ «Deutsche Interessen im O-  
rient», էջ 102. Նույն թերթում, 1899, չուլիս, յունաշ Innere Missions-  
kräfte». —Aus der Arbeit des armen. Hilfswerks» թերթում, 1898, նո-  
յեմբեր, էջ 173. 1899 ապրիլ, էջ 43, սեպտեմբեր, էջ 128. Յեռոյ անհրա-  
ժեշտ է լիշել «Christliche Welt» թերթից բրոշիւրով արտադրած պ. Ռոբ-  
բախի շահեկան յունաշը «Was müssen wir bei der Arbeit für die Arme-  
nien?»

Այն ժամանակ, երբ Հիլֆսբունդը սկսում էր փոքր առ փոքր կազմել, նորա ձգումները և զործունէութիւնը լոկ մարդասիրական էին—սովեալներին հաց բաժանել, կանանց և որբերին ապատան փալ, աւերւած զիւղերում փոշ, շորեղէն, սերմ բաժանել. ահա ինչումն էր կայանում նոր սպեղծւած ընկերութեան զործունէութիւնը: Նոյն իսկ այն ժամանակի, այսինքն 1896 թ. հրագարակւած թուոցիկ և այլ թերթերը լոկ այդ մարդասիրական ոգովն են ներշնչւած: Այս մարդասիրական ձգումներին ժամանակի ընթացքում միացան նաև կրօնական ձգումներ և յետոյ՝ արդարացում քաղաքական փեսակէուից (ոչ՝ քաղաքական շահեր): ուրիշն Հիլֆսբունդի ձգումների զարգացումը կարելի է այսպէս ներկայացնել.

1. մարդասիրական	2	3
կրօնական	{	մարդասիրական
	կրօնական	քաղաքական
	(արդարացում)	

Սկսենք մարդասիրական ձգումներից: Յատ մեծ սխալ կ'լինէր ասել թէ անկարելի բան է, որ Հիլֆսբունդը ունենայ կամ ունենար լոկ մարդասիրական նապարակներ առանց այս կամ այն եսական շահերի խառնութիւն Մենք, հայերս, ինչպէս ուրիշ փոքր աղջերը ամեն կողմից շահագործւած լինելով, մրնելով ամեն մի նոր յարաբերութեան մէջ օպարների հետ, ակամայ ա priori սկսում ենք կասկածել, չ'լինի այս անգամ էլ կամենում են մեզ խարել,

nier berücksichtigen?» (=«Գործելով լօգուր հայերի մենք Բնչ պիտի ի նկատի ունենանք»). Յօդւածագիրը մարդանիշ է անում հայոց նկեղեցւ վերանորոգման ներքին և արուաքին շժւարութիւնների վրա: Վերջապէս սպասոր Բրոկէսի (Brockes) Փոքրիկ յօդւածը—«Die gregorianische Kirche und das Evangelium» տպած սպասոր Լոհմանի կրօնական թերթերից մէկում—«Der Freiwillige», (=կամաւորը) 1899. № 10, և նորերումներնան եկած սպասական փեսակէուից դր. Լեպսիուսի շատ շահեկան յօդւածը, նորա նոր ամսաթերթում «Der Chrisiliche Orient». 1900 լունար-փետրւար: Կարելի է լիշել և թուոցիկ թերթը 1897 թ. «Deutsche Orient-Mission», որը լուս է սփոռում այն հարցի վրա, թէ ինչ կապ ունի հակերին օժանդակելու գործը» գերւանական արևելեան միսափոնի ընդհանուր ձգումների հետ:

շահագործել։ Timeo Danaos et dona ferentes, մգածում ենք  
մենք։ Բացի այդ, մենք, ինչպէս և ամեն մի փոքր ազգ, ունենալով  
անթիւ սեփական ցաւեր, չենք կարող ըմբռնել, թէ ինչպէս կա-  
րելի է, որ գտնւին մարդիկ, որոնք ամբողջ իրենց կեանքը նւի-  
րեն այնպիսի մի եսազուրկ գործի ինչպիսին է մի օրար և ան-  
յացր ազգի օգնութիւնը։ Չպիսի մոռանալ որ իր սեփական ազ-  
գին ու հայրենիքին ծառացելու անհրաժեշտութիւնը, որպէս բա-  
րոյական պարոք, չի զգացւում մեծ ազգերի մէջ այնքան ուժել  
կերպով, ինչպէս փոքր ազգերի մէջ։ Վերջինների համար ամեն մի  
անհարի թէ ֆիզիկական և թէ կուլտուրական կորուսը շատ զգալի  
է. և նա, ով նիրում է մի օրարի գործի, նկագուում է գրեթէ ինչպէս  
դասալիք։ Եւրոպական կեանքը ընթանում է համեմագարար այն-  
պիսի բնական կերպով, նա ունի այնքան հսկողներ և պարասխա-  
նագուներ, որ շատ բնական է, որ գտնուում են աշխարեղ մի քանի  
մարդիկ, որոնք մի օրար բայց անհամեմատ անբախու ազգութեան  
գուռապանքների գուռապորութեան դակ, մի մեծ գործ են սկսում,  
որի նապարակն է այդ ազգին փոքր ինչ օգնել։ բնական է նոյնպէս,  
որ յիսուն միլիոնաւոր ազգի մէջ դրնւեցան հազարներ, որոնք պար-  
րաւոր եղան նիւթապէս օգնելու այդ գործին։ Ուրեմն Հիլֆունդի  
օգնութեան գործը չպիսի անսպատճառ կեղծաւոր, շահագործական  
լինի. կարելի է միայն կասկածել և կասկածելով հարկաւոր է փոր-  
ձել, և posteriori ապացուցանել այդ. և մենք կարող ենք ասել, որ  
Հիլֆունդի դործունէութեան ուսումնասիրումը և հէնց այն հան-  
դամանքը, որ նորա ծախսած գումարից մեծ մասը գնացել է ոչ  
թէ որբանոցների ուսումնարանների, այլ անմիջական օգնութեան  
վրայ (հացի, սերմի, շորեղէնի և գործիքների վրա), ցոյց է դա-  
լիս, որ լոկ մարդասիրական ձգումները, Հիլֆունդի ուրիշ ձըգ-  
ուումների թւի մէջ, սկզբից մինչեւ այսօր միշտ մեծ դեր են խաղացել։  
Ճիշդ է, կայ մի հանգամանք, որը ակամաց կարող է ա priori  
կասկածանքների դեղի գուալ։ Անչն և եղել պարմառը, որ մարդա-  
սիրութեան խօսուն զործը սկսեցին և գանում են հոգեւորական-  
ները, այլ ոչ թէ աշխարհականները։ Պարահական է այդ երեսը, թէ  
թէ չէ։ Աչ, պարահական չէ, և այդ ունի իւր պարմառները, որ  
կարելի է բացարկել։

Սինէւ հայկական կոտորածները 1894—96 թ. գերմանացիք գրեթէ չգիտէին ինչ է „Armenier“ (հայ) խօսքը, արդէն չեմ ասում որ. ոչ ոք գաղափար չունէր թէ ուր են ապրում հայերը: Կոտորածների ժամանակ, երբ զերման հասարակութիւնը լրագրական հեռագիրների շնորհիւ դեռ նոր էր սկսում ծանօթանալ հայերի հետ, զերման հոգեորականները արդէն բաւականի բան գիտէին հայերի մասին: Չոլէտք է մոռանալ որ գերման ժողովրդի քաղաքական ուշադրութիւնը միշտ գրաւած է եղել ներքին, գերմանական հարցերով, գերմանական իշխանութիւնների յարաբերութիւններով: Երբ այդ անկախ պետութիւնները, հիսմարկի օրերով, կազմեցին մի ընդհանուր մարմին, կայսրութիւն, այն ժամանակ ժողովուրդը, հոգեբանօրէն ու քաղաքականօրէն շատ բնական կերպով, սկսեց հետաքրքրուելնա և արդաքին քաղաքականութեան հարցերով: Սակայն այդ արդաքին հարցերը դեռ կրում էին զուր եւրոպական բնաւորութիւն, և այն լայն-համաշխարհային քաղաքականութիւնը, որը այժմ Վիլհելմ II այնպիսի յաջողութեամբ դանում է, երկար պատմութիւն չունի, զուցէ միայն երկու դասնեակ դարիներ: Մի ժողովրդի համար դա շատ քիչ է, և հասկանալի է, որ գերման հասարակութիւնը ոչ միայն հայերի, այլ առհասարակ եւրոպայից դուրս բնակող ազգերի մասին շատ թերի գուշեկութիւններ ունի: Այս կերպում հոգեորականները աւելի շատ գիտէն քան թէ հասարակ աշխարհական քաղաքացիք: Թէ շնորհիւ եկեղեցական պատմութեան, որը ամեն մի հոդեորական ուսումնասիրել է, և թէ ներկայիս Արևելքում տիշի ունեցող կրօնական մրցման շնորհիւ, հայերի ինչ լինելը նոցա փոքն ի շատէ պիտի ծանօթ լինէր: Ամբողջ բողոքը, որ բարձրացրին գերմանացոց պաստորները կոտորածների դէմ, շեշտում էր այն գլխաւոր հանգամանքով, որ պատուած են քրիստոնեաներ: Կարելի է հաստատ ասել, որ եթէ հայերը քրիստոնեայ չլինէին, այն բողոքը, այն ժողովները, որոնք պեղի ունեցան կոտորածների ժամանակ հայերի օդիքին, (արդարութիւնը պահանջում է աւելացնել—և միայն շնորհիւ զերման պատորների) —ամենեին դոյութիւն չին ունենալու:

Գալով կրօնական շահերին, պիտի նկատենք, որ այն ինչ որ մենք այսպեղ «շահեր» ենք անւանում, չեն կարող «շահեր» ասել

այն մոքով, ինչպէս այդ հասկացւում է, երբ ասում ենք կաթո-  
վիկական շահեր, քաղաքական շահեր և այնու Չեմ կարծում, որ  
բողոքական եկեղեցին կարողանայ ունենալ որ և է շահեր, որով-  
հետեւ նա կազմուերպւառ մի մարմին չե, որը ունենար իր սեփա-  
կան քաղաքական կեանքը, ինչպէս, օրինակ, կաթոլիկ եկեղեցին,  
որի ներկացացուցիչները ամեն գեղ սպազմանում են իրենց հին  
քները և պատրաստում նորերը յանուն կաթոլիկ եկեղեցու, որպէս  
կազմակերպութեան: Բողոքականութիւնը անհարական է: Բողոքա-  
կան եկեղեցու միսախօնարները, լինեն նոքա ամերեկացիք, թէ գեր-  
մանացիք, նւիրւում են իրենց գործին, հետեւելով լոկ անձնական  
հակումներին, սեփական հաւաքին և համոզմունքներին: Բնաւ զար-  
մանալի չէ, եթէ գերմանացի բողոքական սպասորների մէջ գըտն-  
ուում են ոմաքք, որոնք, խիսր համոզւած լինելով իրենց դաւանու-  
թեան առնարարձր լինելուն, ձգտել են տարածելու այդ դաւանու-  
թեան սկզբունքները ոչ-բողոքական ժողովուրդների մէջ՝ քրիստո-  
նէական և ոչ-քրիստոնէական:

Սակայն այդ քարոզը մի եկեղեցական մարմնի ծրագրի իրա-  
գործումը չէ, այլ, կրկնում եմ, հետեւանք անձնական ճգոտումնե-  
րի: Գերմանական, կամ ամերիկական միսախօնարները, այդ քարո-  
զով ելք են փալիս իրենց կրօնական ովեսորութեան, անձնական  
ձգումնին, այն է ելքայրական ծառայութիւն մարտոցանել այդ ծա-  
ռայութեան ամենակարօպներին: Նոքա ծառայում են իրենց իշեալնե-  
րին: Այդ իշեալները կարելի է քննադարութեան ենթարկել, բայց  
իշեալները նոցա սեփական իշեալներն են, և նոքա ծառայում են  
նրանց անփեղծօրէն, և միայն նոցա, այլ ոչ թէ իրենց երկրի քա-  
ղաքական կամ ուրիշ շահերին: Բողոքական քարոզը կարող է միե-  
նոյն ժամանակ շար նպաստիչ հանդիսանալ, օրինակ, Գերմանիայի  
սեփական արևելեան ծրագիրներին, բայց բողոքական միսախօնար-  
ները (կարող են լինել ինարկ է բացառութիւններ) զիտակցօրէն  
իրենց գործունէութիւնը չեն յարմարեցնում այդ ծրագրին: Այդ-  
պէս չէ կաթոլիկների միջև: Ճիշտ է, սոքա էլ շապ քիչ են հետա-  
քրքրւում քաղաքական հարցերով, բայց հենց այն սպարմառով որ  
ունին մի ընդհանուր եւ միակ հայրենիք—կաթոլիկ եկեղեցու ա-  
հաւոր կազմակերպութիւնը իր մայր աթոռով—Վագիկանը: Յանուն

այդ քահանտյական կազմակերպութեան հազարաւոր կաթոլիկ միստիոնարներ<sup>3</sup> կամաց և յաճախ ակամաց, այսինքն առանց ներքին կոչման, աշխարհիս բոլոր կէտերում պապական քարոզ են անում <sup>4</sup>։

Աւելարանականութեան և կաթոլիկութեան դրդիչ հանգամանք. ների գանազանութիւնը շատ մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ արտայացրում է ոչ թէ միայն նոցա նպատակների և հեղուանքների այլ և քարոզի ձևերի վրայ:

Ովքեր են, օրինակ, Հիլֆսբունդի գործիչները։ Մարդիկ, որոնք, կրկնում ենք, ոգևորւած են երկու գաղափարով—տարածել մաքուր կրօնը (բոլոգականութիւնը) և «մաքրել» քրիստոնէական գործերով։ Հայ ընթերցողի մէջ, այս խօսքերը կասկածանքի և հեղնութեան ժամփի կարող են յառաջ բերել։ Նորա համար անհաւատի է, որ գտնւում են Եւրոպացում լուրջ մարդիկ, որոնք կարող են յափշտակւել այդպիսի ձգտումներով։ այսուղ անպատճառ պիտի մի յերին նպատակ լինի»

Բայց զիտենալու է մի բան—և հարկաւոր է դորա վրայ մատնանիշ անել, ոչ թէ Հիլֆսբունդը արդարացնելու նպատակով, այլ որպէս զի Հիլֆսբունդի երեան գալլ մեզ համար որքան հնար է, բազմակողմանի հասկանալի դարձնելու համար,—որ մեզ, հայերիս անհասկանալի են մի շարք ձգտումներ, որոնք սովորական երեսով են ուրիշ և մանաւանդ Եւրոպական ազգերի մէջ։ Յայտնի է, որ մենք, հայերս, ոչ անգիտակցաբար, ոչ էլ գիտակցաբար շատ կրօնաւէր

<sup>3</sup> Մի նշանաւոր քրանսիական հեղինակ, (ինչպէս երեսում է չափազանց մոլեուանդ կաթոլիկ) հաւատացնում է, որ կաթոլիկ միստիոնարները Արևելքում անձնւէր են իրենց զործին, իսկ բոլոգականները սարսափելի ենամոլը. Այս համեմատութիւնը դժւար ընդունելի է, որովհետեւ անհասկած նոքա, (ալսինքն բոլոգականները), որոնք նւիրում են մի զործի, հետեւելով անձնական կոչման և որոշ զաղափարի, պէտք որ աւելի անձնւէր չինին, քան թէ ապաշրունականու միստիոնարները—կաթոլիկները. Այդ կարելի է ընդունել միայն այն մտքով, որ կաթոլիկները աւելի մեծ անձնական զոհեր են բերում իրենց պապին, քան թէ բոլոգականները, որոնց զոհաբերութիւնների սեղանը—իրենց սեփական համոզմունքներն են. (La France du Levant, par Etienne Lamy. Revue des Deux Mondes 15 սեպտ. 1899. էջ 925—26).

չենք։ Կրօնական հետաքրքրութիւնը պահսում է մեզ<sup>4</sup>։ Գիրակցական հաւաք, այսինքն հաւաք, որը հիմնւած է ոչ թէ միայն ըգդացմունքների այլ և մի ամբողջ փիլիսոփայական հայեցողութեան վրայ, մենք չունինք։ Խոկ նայեցէք Եւրոպացում այսուել, թէ կաշ թոլիկութիւնը և թէ բողքականութիւնը ունին իրենց անթիւ փիլիսոփայական սիստեմները, որոնք անշատար երեան են գալիս խոկքանէ մինչև այսօր ձգով մրցել դրական փիլիսոփայութեան հետ։ և այն ահաւոր ճիզը, որը դրել է դրական, գիրական փիլիսոփայութիւնը կրօնական սիստեմները բաւարարութիւն համար; արդեն ապացուցանում են, որքան ու ժեղ են այս սիստեմները. քրիստոնէական դարերի մեծ փիլիսոփաները, թէստոները թէ աթէիստները, մարերիսալիստները թէ սպիրուուալիստները, զբաղւել են ամենա լուրջ կերպով ոչ թէ միայն կրօնական, այլ և դաւանական հարցերով։ Կաթոլիկ և բողքական արոֆեսոր-ասքւածաբանները շաբ յաճախ վիճում են փիլիսոփայական հողի վրայ, և ոչ թէ միայն առողջերու ըստ Առւկասու այսպէս է կամ այնպէս է» և այնու Զարմանալի չէ, ուրեմն, եթէ գիրուում են ժարդիկ, որոնց մէջ իսոր արմարացած կրօնական զգացմունքները համերաշխ ապրում են իրենց մրցի բարձր ուսման և զարգացման հետ։ Այս կէտը հարկարոր է ի նկատի ունենալ, որպէս զի չկարծւի, որ եթէ Եւրոպական մոքով զարդացած մի մարդ ի սրբէ նւիրում է այնպիսի մի գործի, ինչպիսին է՝ աւեգարանը բացարել անուսում։ և ծէսէրի մէջ խեղդւած մի ժողովրդի, պէտք է անպատճառ այդ ձգունների դիմակի գաղաքական սամանուններ որոնել, լինի այդ քաղաքական կամ եսամոլկուրական։

Ամեն թիւրիմացութիւնից խոյս բալու համար, խօսենք միայն Հիլֆսբունդի վրայ։ Բացի մարդասիրական նախարակներից, Հիլֆսբունդը, ասացինք, ունի և կրօնական շահեր, բացարելով, որ «շահերի» փոխարէն աւելի ճիշդ կ'լինէր ասել ձգուններ։ Մենք բույց ուինք, թէ ինչումն է կայանում զանազանութիւնը Հիլֆսբունդի կրօնական ձգունների և կաթոլիկ շահերի միջև, և ասա-

<sup>4</sup> Այս երեսիթը լիցում ենք լոկ որպէս Փաքու, ոչ թէ իրեն մի պակասութիւն։

ցինք, որ այդ զանագանութիւնը ազդում է և քարոզի ձեերի վրայ։  
 Յայտնի է, որ լուսաւորչականը, կաթոլիկ, դառնալով չի կա-  
 րող կաթոլիկ դառնալ փոքր առ փոքր, այլ, ընդունելով կաթոլի-  
 կութիւնը, միւնոյն ժամանակ ընդ միշտ կտրում է իւր յարաբե-  
 րութիւնները լուսաւորչական եկեղեցու հետ. կարելի է ասել և  
 տելին, որ նա կիսով շափ կտրում է իւր նախկին յարաբերութիւն-  
 ները և ազգային շահերի և ցաւերի հետ, որովհետեւ այնուհետեւ  
 նորա համար առաջին տեղը արդէն բռնում է պապը, և յետոյ  
 ազդը։ Կաթոլիկ միասինարերի գործունէութիւնը Արեւելքում կա-  
 յանում է նորանում, որ մի կողմից նոքա խլում են որ և է եկեղե-  
 ցուն պատկանող մի անձ, կաթոլիկ դարձնելով նորան, և միւս կող-  
 մից ամեն միշտներով աշխատում են տկարացնել այդ եկեղեցին։  
 Հիլֆսրունդի բոլոքական գործիչները իրենց աւելաբանական քա-  
 րողութեան մէջ չեն ձգտում խլել հայերին իրենց մազր-եկեղեցուց,  
 այլ, ինչպէս նոքա հաւագայնում են մեր առաջ բերած գրութիւն-  
 ների մէջ, ընդհակառակը, ուժեղացնել այդ եկեղեցին, որպէս զի  
 նա աւելի յաջողակ կերպով կարողանայ մրցել ուրիշ հարեան եկե-  
 ղեցիների հետ մի կողմից, և միւս կողմից—առաջն առնէ հայերի  
 մէջ ծաւալւող անհաւատութեան։ Այդ երկու նպագակին կարելի է  
 հասնել միայն լուսաւորչական եկեղեցու աստիճանաբար վերանորոգ-  
 ման ճանապարհով։ Լուսաւորչական եկեղեցին չի ընթացել զուգըն-  
 թացաբար մարդկացին կեանքի անընդհապ զարգացման հետո նա  
 խրել է ծէսերի մէջ։ ձևականութիւնը ինեղում է հաւարը։ ան-  
 հրաժեշտ է մաքուր կրօնի ճառագայթները դարձնել նորա վրայ,  
 որպէս զի նրա մէջ արթնանայ ըստ Աւելաբանի իսկական հաւա-  
 ռի պահանջը, որպէս զի հաւարը դիմակցական դառնայ, և այլն։  
 Այդպէս են մարդում Հիլֆսրունդի գործիչները։ Բայց առում՝ են  
 նոքա, ինչպէս անել, որ վերջը ծառայած լինելու փոխարէն՝ դուր-  
 չդայ որ գործեցին ի վնաս հայոց ազգին ի նկատի առնելով այն  
 նշանակութիւնը, որը հայոց եկեղեցին ունի հայերի համար, պիտի  
 խուսափեն ամեն մի հանգամանքից, որը կարող կ'լինի թուլացնել  
 այդ եկեղեցին։ Բոլոքական դարձնելով որեւէ լուսաւորչականի և  
 ուրիշներին այդպիսով հաւագայինութեան օրինակ պալով, կ'նշա-  
 նակէ զիմակցաբար նպաստել այդ վրանդին։ Ի՞նչ անել։ Այս հարցի

վրայ, որը յաճախ դրական կերպով դրւած է եղիլ, զանազան պատասխաններ յառաջ եկան. սոցա բոլորի ընդհանուր գաղափարը առ է. հարկաւոր է վերանորոգել հայոց եկեղեցին, ոչ թէ արտաքին այլ ներքին ծանապարհով, այսինքն այնպէս ղաստիառակել հայ երեխաների (Ներկայումս — որբերին), որպէս զի նորա մեծ անալով նկատեն իրենց մայր եկեղեցու պակասութիւնները եւ աշխատեն հեռացնել նոցա. գործելով այդ հարցում աւետարանականութեան ուղղութեամբ:

Աւրեմն Հիլֆսրունդը ցանկանում է, որ հայոց եկեղեցին վերանորոգի հայերի միջոցով, և ոչ թէ քանդի օտարների ձեռքով: Այժմ գետնում է ընթերցողը, որ այն հակասութիւնները, որ ամեն մի քայլափոխում պատրահում էինք մեսսիոնարների նամակների մէջ (դես Մուրճի նախորդ համարները), իսկապէս հակասութիւններ չեն և գեղեցիկ կերպով ներդաշնակում են: Մի կողմից Հիլֆսրունդի աշխատակիցները ելք են դալիս իրենց կրօնական քարոզի ծարաւին, միւս կողմից աշխատում են յարմարացնել իրենց գործունեութիւնը հայերի շահերին. և բոլոքական միսսիոնարներից ըղիած այս նախադասութիւնը թէ մենք զգում ննք դէպի լուսաբորչական եկեղեցին ջերմ ալ, և ցանկանում ենք նորան ամենաբարձր զարգացում: — այդ խօսքը կեղծաւորութիւնէ:

Հիլֆսրունդի ծրագիրը սքանչելի է և մեզ մնում է հաւարակ որ նա անարար կերպով գործադրում է այդ ծրագիրը. մեզ մնում է նոյնպէս յուսալ որ Հիլֆսրունդը ապագայում, երբ նորան կը միանան նոր մարդիկ և կը հեռանան հինքը, մի՛ անգամ ընդունած ազնիւ սկզբունքը կը մնայ անփոփոխ: Կարծում եմ որ աւելորդ չէ բերել այսաւել այն խօսքերը, որ պ. Երնար Լոհմանը, հարաւային կոմիտէների նախագահը, զրել է մեզ, որպէս պարասիան բոլոքական քարոզի հարցին:

«Կարող եմ ձեզ հաւաքացնել, որ մենք բոլորովին հեռու ենք հայկական եկեղեցու մէջ բոլոքականութիւն քարոզելու մոլոքից: Երբ ես հեռանում էի Հայաստանից <sup>6</sup>, մի ծեր հայ քահանաչ, որի հետ

<sup>6</sup> Յունար 18, 1900. Հեղինակը ուել է մեզ առաջ բերած դուերի հրարարակութեան թովառութիւնը:  
Անցեալ դարի հեղինակը ճանապարհորդել է Տաճկա-Հայաստանում:

միասին գործած եմ քառապեալների համար, ասաց ինձ. «Ու-  
ղարկեցէք մեզ Աւետարանի քարողիչներ, որպէս զի նոքա բարածեն  
(verkünden—հոչակեն) Աւետարանը հայոց եկեղեցու մէջ (նօտրը  
բնադրումն է):» Եթէ հայկական եկեղեցին ցանկանում է ուժեղ լի-  
նել, նա պիտի ներշնչէի ողեկան ոյժերով: Որևէ մեռած եկեղե-  
ցի, որը հետևում է միացն արտաքին ձևերի —ոյժ չ'ունէ:... Ես  
չեմ սպասում, որ մեր որբանոցներում դաստիարակուող երեխաները  
անցնեն բողոքական եկեղեցին: Բայց ես խնդրում եմ Ասպուծուց,  
որ որ նա շինէ նոցանից մաքուր և իսկական քրիստոնեաներ, որոնք  
հանդիսանան որպէս լոյս և աղ իրենց ժողովրդի և եկեղեցու մէջ:  
Ուրեմն թոյլ ուէք մեզ միասին գործել չողում ձեր խեղճ  
ազգի» 7:

Այսքանը՝ դաւանափոխութեան մասին: Ինչ վերաբերում է  
հայերի գերմանացմանը, օրինակ, ի նախասր քաղաքական շահերի, Հիլ-  
ֆորունդը հիմնելու օրից սկզբունքով որոշել էր —ոչ մի քաղաքա-  
կան զոյն չփալ տողութեան միութեան: Բայց այդ, չեմ պափա-  
հած, որ հայ որբերին գերմանացնելու հարցը որ և է գեղ շոշափ-  
ւած լինի, այնպէս որ դժւար ընդունելի է որ այդպիսի ձգուում  
գոյութիւն ունենայ, մանաւանդ որ «Օգնութեան միութեան» աշ-  
խափակիցները ամեն քայլափոխում կրկնում են, որ նոցա նպա-  
պակն է, կրծել հայ զաւակները, ինչպէս հայեր: Այդ տեսակէ-  
փից, որբերի մեծագոյն մասի համար կարելի է հանգիստ լինել,  
որովհետեւ սոցա միացն սկզբնական ուսում փալով և սովոր ցնելով  
մի որ և է արւեստ, հէնց որ երեխաները հասնում են այն հասա-  
կին, երբ կարող են փոշ աշխարել և հոգալ սեփական ապրուարը,  
Հիլֆորունդը աշխատում է անմիջապէս արձակել նոցա որ-

7 Մի քանի ամիս սորանից առաջ կաչացաւ Բերլինում Հիլֆորունդի  
ընդհանուր ժողովը: Ցիշեալ Դր. Ռորբախը շեշտում էր որբանոցների քա-  
ղաքական նշանակութեան վրայ, ցանկանալով երեի աւելի շահագրգուել  
ունկնդիրներին, որպէս զի նոքա աւելի աջակցեն այդ գործին: Դր. Լեպ-  
սիուսը իւր ճառի մէջ, ասում են, նկատեց, որ «հայերին օգնելու միու-  
թիւնը» պիչ է հետաքրքրում ալն հարցով՝ օգուտ թէ վնաս է բերում նա  
գերմանիայի պետական շահերին. նա կատարում է միայն իւր քրիստո-  
նէական պարուականութիւնը:

բանոցներից և զրկել գիւղերը. այնպէս որ ինչ ոգով էլ դաստիարակւած լինեն երեխաները որբանոցներում, ընդ միշտ վերադառնալով գիւղերը՝ նոքա նորից պիտի հացեր դառնան և մնան: Մի փոքր վրանդ սպաւնում է այն երեխաներին, որոնք նկարւում են որպէս արժանի քրաքճու ու սման: Օրբարացումը յաջողւում է դպրոցներում, երբ նոցա դասաւուութիւնը հիմնում օպար գրականութեան վրայ և տեսում է երկար դարիներ: Եթէ Հիլֆսբունդը չողաց հայկական առարկաների դասաւուութեան մասին յիշեալ փոքրամասնութեան համար, ու չի գրնի արժանի հայ ուսուցիչներ, որոնք կարողանացին զուգընթացութիւն պահպանել գերմանական դասաւուների հետ, այն ժամանակ Հիլֆսբունդը անդիտակցօրոն փոքր իշարէ կօրարացնէ որբերին, մաքնելով նրանց թարմ յիշողութեան մէջ գերմանական պապաւորութիւններ: Բնական է, որ մեզ համար միեւնոցնը չի կարող լինել, թէ արդեօք մի քանի հարիւր երեխաներ, փոքր ի շատէ հիմնական ուսում և դասուիարակութիւն սփանալուց յետոյ, մրնելով կեանքի մէջ, օպար կըլինեն իրենց ազգութեան, թէ ոչ: Դոցա թէ կորուսպը, և թէ պահուադը չի կարող զգալի ըլ լինել մեր հասարակութեան համար:

Սկզբից մենք նկատեցինք, որ ժամանակի լնթացքում Հիլֆսբունդի ձգվումներին միացան և քաղաքական ոչ թէ շահերա այլ արդարացումն: Այս, «Օգնութեան Միութիւն» կողմից ոչ մի ժամանակ ասւած չէ եղել, որ իւր արևելեան հիմնարկութիւններով նա կը ձգրի նսլաւորել Գերմանիայի կառավարութեան քաղաքական շահերին: Խնչպէս յիշեցինք սկզբունքով քաղաքական նպապակները արփաքսւած են «Օգնութեան Միութիւն» ծրագրից: «Քաղաքական արդարացումի» մասին խօսք եղել է պոլեմիկացի ժամանակ: «Մուրճա-ի անցեալ համարներում յիշած յարձակումների ժամանակ, Հիլֆսբունդի անդամներից կողմից արփացարած է եղած, որ Հիլֆսբունդը ոչ միայն ոչ մի վեստ չէ բերում գերմանական քաղաքականութեանը Տաճկասպանում, այլ ուշակի մեծ օդույու: և, որքան մեզ յայսնի է, միայն դոքուոր Առօրբախն է եղել (նա Հիլֆսբունդի գործող մարմինն չէ պատկանում), որը դրական կերպով զբաղւել է այն հարցով, թէ ինչ ծառացութիւն կարող են մարդու ցանել գերմանական որբանոցները Գերմանի ոչի արևելեան

քաղաքականութեան։ Նորա կարծիքները Մուրմանի անցեալ համարում արդէն առաջ բերինք<sup>3</sup>։

Այժմ, վերջին եզրակացութեան համար հարցնենք, թէ ինչ նշանակութիւն կարող են ունենալ մեզ համար գերմանական Հիլֆսրունդը և նորա հիմնարկութիւնները։ Պատասխանելով դորանցոց կ'առնք այն մինիմալ օգուտը, որ նա ուել է և կարող է ուալ մեզ, եթէ մինչեւ անգամ նորա ներկացիս գործունելութիւնը այնպէտ անմեղ չլինի, ինչպէս իրանք նկարագրում են, որին և հաւաքում ենք մենք և կամ եթէ նա ապագացում շեղւի իւր սկզբունքներից։

ա. Նա շատ նպաստել է հայոց անւան ժողովրդականացմանը Գերմանիայում և միշտ ապաշխանել է և կ'ապաշխանի հայերին, երբ սոցա վրաց յարձակմունքներ են լինում մամուլի մէջ։

բ. Նորա շնորհիւ հազարաւոր հայեր ազատել են սովի մահից և մօք 2.000 երեխաններ ապաստան են գտել։

Գ. Ինչ ոգով և դաստիարակւած լինեն այդ հայ որբիկները։ Փաքս է, որ 2.000 երեխաց փոքր ի շատրէ կանոնաւոր ուսում ու դաստիարակութիւն են սրանում և սովորում որոշ արհեստներ։ և այդ այն ժամանակ, երբ կուորածների առթիւ հայկական ուսումնարանները փակւեցան Տաճկաստանում։

Դ. Հիլֆսրունդի հիմնարկութիւնները իրենց գոյութեամբ շարացնում են Եւրոպացի քործակալներին թիւը Տաճկաստանում և Ամերիկական, գերմանական, Փրանսիական և այլ միսսիաները հանդիսանում են Թիւքիացում ինչպէս Եւրոպացի, այսպէս ասած, ոչ սլաշտօնական հիւպակոսներ։ Նոքա հանդիսանում են, որպէս ոչ սլաշտօնական հսկողներ դաճկական կեանքի, զլիսաւորապէս զաւառներում։ Կուորածների և ուրիշ դէպերի միջոցին նոքա հաշորդում։

<sup>3</sup> Թողլ եմ դալիս ինձ, որպէս օրինակ, վիշապակել հետեւալ դէպքը Անցեալ ուարի, ինձ ծանօթ մի գերմանացի, կարդալով նամակս Հիլֆսրունդի օրգանի մէջ, զրեց ինձ մի բաց նամակ այն քաղաքի հասցեով, որը նշանակւած էր ուպած նամակիս վերջում։ Նա գրում էր, որ պահելով իւր հաշով մի համ որբ Հիլֆսրունդի որբանոցի մէջ, նա շատ կ'սանկանար դեսնւել մի որ և է համի հետ՝ աւելի մանրամասն դեղեկութիւններ սփանալու համար իւր զդաւակիո երկըի մասին, և որ այդ նպատակով նա մոտադիր է ալս ինչ օրը դալ այդ քաղաքը և դեսնւել ինձ հետ։

են պարահածը Եւրոպացին և մամուլը սկսում է խօսել։ Մինչեւ այժմ միայն գերմանական մամուլն էր, որ լորում էր այդ Դէպքերում, այժմ բոլորովին ուրիշ է, և մի Լեպսիտուսի, Լոնմանի, Բրոկեսի հաղորդագրութիւնները բարձր են զնահապեում գերմանական մամուլի մէջ։

Ե. Ինչպէս սկզբում ցոյց էինք դռել, Հայ որբիկները ունին գերմանական խնամակալներ՝ «Ճնողներ»։ Այդ Ճնողները լինում են ինչպէս առանձին անհաղուներ, անձնաւորութիւնների մի խումբ, նաև մի եկեղեցի կամ ընկերութիւն։ Պահելով իրանց հաշւով հայ երեխաները, լինելով յաճախ նոցա հետ նամակագրութեան մէջ, այդ «Ճնողները» բնականաբար փոքր իշաբէ կապւում են իրենց զպաւակների։ Հետ և պիտի հետաքրքրւեն նոցա վիճակով, նոցա երկրի դրութիւնով, կեանքով և այլն։ Ուրեմն Հիլֆսրունդի շնորհիւ Գերմանիայի հասարակութեան մէջ կան հազարներ, որոնց ուշադրութիւնը զրաւում են արեւելքի Դէպքերը և որոնք բարոյական դրսակէտից անտարբեր չեն կարող մնալ Դէպի կստորածները և ուրիշ տիտուր անցքերը։

Զ. Շնորհիւ Հիլֆսրունդի Դալրոցներին և բոլոքականութեան՝ մեր եկեղեցին և ուսումնարանները, նոցա հետ մրցելու համար, ըստիսւած կ'լինին վերանորոգւել և լաւանալ։ այդ ապացուցին ամերիկական հիմնարկութիւնները։

Է. Վերջապէս, Հիլֆսրունդի շնորհիւ նոր արգելք է սպեղծւում կաթոլիկութեան փարածմանը Հայաստանում։ Այն ծառայութիւնը միայն որ կատարել են արդէն ամերիկացիք, արժանի է արդէն որ յաջողութիւն ցանկանանք Հիլֆսրունդին։

Նար անգամ լսւում է, որ հայերին օգնելու «Գերմանական Օգնութեան միութիւնը» արժանի չէ մեր շնորհակալութեան հենց այն պատճառով, որ նորա գործունէութիւնը օգտաւէտ է նաև գերմանական շահերին (?!):

Կրկնում ենք, Հիլֆսրունդը երեան է եկել, ինչպէս հետեւանք մաքուր մարդասիրական ձգտումի—ազագել բարոյական և Փիզիկական վախճանից՝ կոպորածներից յեպոյ մնացած որբերին։ Այդ ձգ-

տումով ներշնչած է և նորա ներկայ գործունեութիւնը։ Ան իերքելի թէն, որ է նորա գործիչներից ուսանք ոգևորւում են նաև կրօն սկան քարոզով, այն մզրով, ինչպէս ցոյց տրինք, իսկ ոսմանք մեծ բաւականութիւն են սրանում, որ իրենց մարդասիրական գործը նպասգում է և Գերմանիացի պետական շահերին Արևելքում։ Եթէ իրօք Հիւֆսրունդի հիմնարկութիւնները ծառայութիւն կը մատուցանեն Գերմանիացի շահերին, Դորանից դեռ չի բլխում, որ այդ ծառայութիւնը մեղ պիտի վնաս լինի. և մենք փեսանք, որ այդ ճանապարհի վրայ Հիւֆսրունդը անկարող է գրեթէ մեզ վնաս բերել։ Ուրեմն, եթէ նա վերջ ի վերջոյ օգտաւէլո հանդիսանաց թէ գերմանացիներին, և թէ հայերին, այն ժամանակ ոչ միայն երկու կողմը պիտի շնորհակալ լինին, այլ և ամեն մի կողմնակի հանդիսապես պիտի ուրախ լինի, որ բարի գործը օգտաւէլո է լինում։ Ինչպէս սրացողին, այնպէս և անողին։ Դորանումն է կայանում կենսական առողջ իշեալը։

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԼՅԱՅՈՆՅԵՒՆ, ԺՄԱՐԴԱ. ՄԵԿՐՈՎ ՆՈՒԱՐԵԹԵԱՆց. Առակք Լ. Ա. ՓՈՆԺԵՆԻՒԻ  
ՀՐԱՄ. Թ. Հ. ՀՐԱՄ. ԸՆԿ. ԹԻԳԼԻՍ, ՊԱԼ. Տ. ԽՈՎԲԻՆԵԱՆց. 352 Էջ,  
միջադիր. զինը 1 պուբլի:

Որքան ուրախութեամբ ձեռք-  
ներս առանք այս զիրքը, որի հա-  
յերէն թարգմանութիւնը նոյնքան  
ցանկալի էր, որքան և Կոփլովի ա-  
ռաւելութիւնը, — նոյն-  
քան և մեծ ցաւով փակեցինք նորա  
ընթերցումը. պ. Նուապարեանի ու  
Գաբրիէլ արքեայ. Ազվաղեանի թարգ-  
մանչական բաշանդի միջն անշափ  
առելի մեծ բարածութիւն նկատե-  
ցինք, քան այդ կաչ Լաֆոնդէնի ու  
Կոփլովի մէջն, չնաչած Փրանսիացի  
ուռուս առակախօսների գրելու ձե-  
ւերի ուրբերութեանը. Կոփլովը սի-  
րում է երեան հանել ուռուսց ժողո-  
վըրդական ու գրական լեզւի ամբողջ  
ճոխութիւնը, և այդ լեզւի աշը դը-  
նում է գործող հերոսների բերանը,  
առանց երբէք դորան զոհելու պար-  
մըւածքի մասելի համաշափութիւնը.  
Դորա համապատասխան՝ Ազվաղեանը  
աշխատել է իւր թարգմանութիւնը  
կարարել ժողովրդական լեզւի դար-  
ձըւածներով, նոյն իսկ երբեմն լեզ-  
ւի լստակութիւնը զոհելով պատ-

մըւածքի լեզւի աշխուժութեան, Եւ  
Ազվաղեանին շատ անդամ չաջողւել է  
բնագրի ոժը պահպանել, կարարե-  
լապէս հայացնելով այն, ինչ մարդ  
կ'կարծէր թէ միան ուռուերէն կա-  
րելի էր արտակարուել. Պր. Նուապա-  
րեանը, Ընդհակառակը, չի ըմբռնել  
Լաֆոնդէնը. Ըստ երեսութիւն, հա-  
իրեն հաշիւ չի ուել թէ ինչով է  
Լաֆոնդէնը բարբերւում Կոփլովից:  
Լաֆոնդէնը ժողովրդական ոճերով  
չի խօսում. բայց Լաֆոնդէնի առակ-  
ների մէջ լեզուն գերազանցօրէն  
պլաստիկական է, ասածը կարծ է,  
առանց որ և է ամելորդաբանութեան,  
շատ ժլար նոյն իսկ ածականների  
համար, երբ կենդանու կամ իրի  
լարկութիւնը ինքնին հասկանալի է.  
Լաֆոնդէնը կամենում է որ կոմիզմը  
երեան զայ նոյն իսկ ներկաչացրած  
դրութիւնից, գործող անձերի լարա-  
բերութիւնից: Պր. Նուապարեանը,  
հակառակ հեղինակին, երկարապա-  
տում է. անսուել ուր հեղինակը բա-  
ւականանում է մի ոտղով — նորա-

թարգմանիչը մէկը երկու է շինում, չաճախ նաև երեք. երբեմն նաև իրենից բաներ է աւելցնում՝ ի սէր ավ կամ այն բառի, կամ դարձածի, նուն իսկ ի սէր որի, անդի ուր հեղինակը միայն կենդանու, իրի, անձի անունն է բարիս և անցնում, աջնորեղ պ. Նուզարեանը անպատճառ մի ածական էլ կը դնի, որ ոչ ոքին հարկաւոր չէ, և սրացւում է առակը լիքը ածականներով. Ազդքանը արդէն բաւական պիտի լինէր կաֆոնտինի ալս թարգմանութիւնը բաւականին անպէտիք դարձնելու համար. բայց պակասորդը լրացնում է լեզեր անկանոնութիւնը և, չաճախ, անճաշակութիւնը պարզ ուսանաւոր կազմելու գործի մէջ:—Օրինակ՝ թէ կարող էք, կարդացէք ակսպիսի ուղեր ալճպէս, ինչպէս թարգմանիչը կ'ուզէր որ կարդացւէր.

Քիչ մըցորեն փոխ որուր ինձ, որ Ազրիմ մինչեւ եղանակ նոր. (Էջ 13).  
կամ՝

Կարեկցութիւնդ, — Եւէզ ըսաւ,  
է հերիանք զգացման լաւ,

(Էջ 34-35)

կամ՝

Առիւծ, դարձած խենթ մոլեզին՝  
Աը Փերքիրի, աչեր իր  
Կալծ կը ցաւորեն, կը փակվըլին,  
Աը մըուընչէ զալրալիր. (Էջ 42-43).

Միթէ կարելի է լսութեան  
ազգան մեծ պակասութիւնը ներել,  
Բայց կան և լեզւի անհարթութիւններ, իբր հերիանք պ. Նուզարեանի  
ուրուն քերականութեան, Նա ըթերը (==ը բառը իբր լոդ) անխնալ  
դէն է զցում և, կարծեօք, ամեն  
որեղ. որոշիչ լոդիր նա չի ընդու-

նում. Նաև քէֆը ուզածին պէս, դէն է զցում նա Ակը մասնիկը, որ արեմը բարեան հալոց մէջ բաշերի ներկայ եղանակի կազմողն է. նա գրում է կլուէ, կը սիրէ, կըսէ, և ալն, բայց և չաճախ առանց կը-երի. Եւ ինչու. որովհետեւ որոշ Պողերում թարգմանչին հարկաւորւում է մի վանկ պակաս ունենալ. և ազդպիսով նա, որ ամեն ինչ զոհում է՝ վանկ ու լանգ դուրս բերելու համար, նոյնպէս է վարւում և ալս դէպիքում. Հազարից մի օրինակ.

Դըրան առջե սըրահի

Զախ ու աշմուկ կը լըսուի.

Կը փախչի Մուկ (=Մուկը) քալ-քըցի;

Ընկերն անոր հերեւ (==կը հերեւ-ւի) էջ 25:

Առակը, պարմած աշդպիսի պակասաւոր լեզւով, զօրով դուրս բերած յանգերով, արդէն ինքնին կորցնում է իւր արժեքը: Բայց ոս արդէն աւելի էլ մեծ անհամութիւն է, երբ առակի որոշ Պողերը իրենց ծանրութեամբ զրեթէ անարտասանելի են. Փրանսիացու ալս սահուն ու սիրուն ուալը, որ խօսակցական լեզւի մէջ ևս հասդարեւել է՝

Vous chantiez! j'en suis fort aise  
Eh bien! dansez maintenant.

Պր. Նուզարեանը թարգմանում է՝  
Էհ, հիմա ալ, Ժիժի աղքար,  
Ուրախ ու չէն ել բռնէ պար:

(Էջ 14):

Պար բռնելը կարուլ է սազել մի խմբի, բայց ոչ անհարի, այն էլ մի ցարկորոշ ծըպուսի (==Ժիժի): ասպա՝ պար բռնելը լանգի համաք դառել է բռնել պար. երբորդ՝ աշ-

բար-ի մէջ չեշտը վերջին վանկի  
վրաէ է, իսկ բռնէ պար-ի մէջ չեշտը  
պար բառի վրաէ չէ, այլ բռնէ խօս-  
քի վրաէ, հետեապէս դա պակա-  
սաւոր լանգ է, չորրորդ՝ հասկանալի  
է ուրախ պարելը, հասկանալի է  
նաև չնորդքով պարելը, բայց ուրախ  
ու չէն պարելը—այդ իսկի հակերէն  
չէ:

Խնջու Ավազկանը ալդպիսի բըռ-  
նազբասութիւնների չի դիմում: Որով-  
հետեւ նա ինքը ոչ միայն թարդմա-  
նող է, այլ և հումորիստ, որը գիտէ  
սափիրի բոլոր պահանջները. իսկ  
այ. Նուազարեանը, ըստ երեսթին,  
կոչումով առակախօս չէ, և դորա  
գուշանդը չունի. Ապա թէ ոչ նա  
կը հասկանար նաև Լաֆոնտէնի  
պարմելու առանձնազարկութիւնն-  
երը: Աերցնենք Լաֆոնտէնի ոճի  
ողորկութիւնը: Ահա իբր նմուշներ՝  
դույների թիւը Լաֆոնտէնի ու Նու-  
ազարեանի մօտ.

Աշէս ու Խալող	8	14
Ծերացած առիւծը	12	20
Աքաշալ ու Մարգարիդ	12	20
Հեռ երկանց մէջ՝		
բուն առակը	6	12
իսրատն էլ հետը	14	20
Դորր ու Կով	14	22
Փալ և Արագիլ	17	26
Ազուա ու Աշէս	18	29
Առիւծ և Մուկ	18	26
Երկու ջորիներ	19	26
Աշաւնի ու Մրջիւն	19	31
Ժիժի ու Մրջիւն	22	31
Աշէս ու Արագիլ	28	44
Գալ ու Գառնուկ	29	46
Կաշնի և Եղեգն	32	50
Խորհուրդ մկանց	32	62

Առիւծն ու Ճանձիկ	39	62
Փոր ու Անդամներ	44	72
Մուկ, Վիթ և ալլն	91—130	

Աւ ալլն և ալլն: Դորանից հե-  
տեցրէք թէ որքան երկարաբան է  
այ. Նուազարեանը: Ճիշդ է, կան խօս-  
քեր երկու տուրով, որ եթէ մի դո-  
ւով ասէք—կազարելապէս նոյնը  
կը դուրս գալ, հետեապէս երկոտը  
աւելի երկար չի լինի քան Կովնը  
մի տողով առած ժամանակ. օրինակ՝

Օր մ'Եղեգին

Կրու Կաշնին.

Երկու դուշ է, բայց աւելի երկար չէ  
քան եթէ գրւած լինէր մի դուշի մէջ՝

Օր մ'Եղեգին կըսէ Կաշնին.

Բացց ցաւը սա է, որ այ. Նուազ-  
արեանը միայն ալդպիսով չէ տողերի  
թիւը սոււարցնում, այլ և աւելոր-  
դաբանութիւններ մէջ դցելով, որու ք  
հակառակ են Լաֆոնտէնի դրելու  
եղանակին. Օրինակ, երբ Մրջիւնը  
հարցնում է ճպուռին (=Ժիժի) թէ  
սա ինչ էր արել անցած ամառը,  
այ. Նուազարեանը Ժիժիին ասել է  
բայիս:

Դիշեր յորեկ, մի նեղանալ,

Երգ կ'երգէի զլւարթաբար.

Դուլ ու դաշար

Երբէք չըկար

Ինծի համար:

Մինչդեռ Լաֆոնտէնի մէջ վերջին  
երեք ուղղերը ամեննեին չկան, այլ  
նա բաւական է համարում ասել՝

—Nuit et jour à tout venant

Je chantais, ne vous déplaîtce.

Պր. Նուազարեանը լանզերի ցաւ  
ունի. ուր որ միայն լանզերով բա-  
ներ է դույնում, իսկորդ չահագործում  
է, առանց երկար մրածելու. դաշար,

Հկար, համար... չէ որ նոնսալանդ  
են, Եւ արտպէս նաև շատ դէպքե-  
րում, կամ ալ դէպք. Լավոնտէնը  
մի առակ սկսում է այսպէս.

Un chat, nommé Rodilardus  
(Մի կաղու, անունը (աւս ինչ).  
իսկ պ. Նուպարեանը կ'երկարցնի—  
Մի դունի մէջ մէկ դաժան  
կաղու—անունը Շորթան—  
և ալն...

Ինչ անհամութիւն! Անհամութիւն է  
արդէն ալն պատճառով, որ ամեն  
կարու միան դան մէջ է ապրում,  
և ամեն կարու միների համար դա-  
ժան գաղան է: Բայց Շորթան-ի հետ  
դաժան-ը բանդ է բռնում, խսկ դա-  
ժան-ի հեր էլ մի բան պիտի առեի,  
չէ...

Կամ կ'գեսնէք լանդի խաթրու  
ահան-ներ.

Պանիրն է ահա

Գետինը կ'ինակ.

կամ'

Ալս խօսքերով Առիւծ ահա

Օր մը սասուեր (==կը սասուեր)

մի հանձիւ

կամ'

Մրջիւն մ' ահա

Խոնարհելով ջուրին վրաէ (Էջ 50).

Եւ ով գէտէ թէ ալդ ահա-ները  
քանի բել են ցանւած ամբողջ զրքի  
մէջ. դուք ան կը գրնէք նաև էջ  
52, 55, 63, 69, 87 և ալն և ալն:

Մի խօսքով ալդ ահա-ները մի  
առանձին փրկարար դեր են կարա-  
րում, որ Ասրւած միան փրկէ.

Ասոււած ազարէ նաև պ. Նու-  
պարեանի Տէ-երից. կարդացէք ու  
մարսեցէք ալս մի-երը —

Մի շառ մարդկան  
կերպն է ասի սովորական: (Էջ 220)  
կամ'

Թագաւոր ինձ. .

իր մարդաց մէջ գըրաւած էր

Մի շառ եղեր (Էջ 213)

Ալս օրինակները մինք վերցրինք  
առաջին պատահած էջերից. դուք  
ալդ կը գրնէք ուրիշ շառ տեղերի  
իսկ անհամացնող ածականները?  
Կարելի է որ պ. Նուպարեանը  
մի բանի անուն դաէ առանց ածա-  
կանի:

Ալս սուտ խօսքերում՝ միամիտ Ազ-  
ուաւ (A ces mots le corbeau=Ալս  
խօսքերում Ազուաւը):

Զոր անմիշապէս

Խաթրերայ Աշւէս

Ութելով սապէս

Կը պուաէ անոր.

(==Le renard s'en saisit, et dit)

Գորոց լիմար

Անքան լամառ

իր շափէ վիր

Թափեց ճիգեր

Ան ասդիճան նա ուռեցաւ ու ուղկ-  
ուցաւ

Որ ճաթեցաւ

(==La chétive pécore

Տ'ենլա սի բien qu'elle creva).

Մարքիլ աղքաղ

Աական հըպարոր

Մանկուալիկներ պահէ կարդ-կարդ

թէն քրսակն լլաւ դաժարպկ

(==Tout marquis veut avoir des  
pages)

Զարմանալի չէ որ հեղինակի մի  
տողը կամ օ բառը պ. Նուպարեանի  
մօր դառել է չորս փող և դասնեա-  
կից աւելի բառ, չնորհիւ աւելորդ

ածականների ու ալլ երկարաբանու-  
թիւնների:

Մեր բարեպտող Աշուքս խորամանդ,

Որ կծի մէկն էր,... (Էջ 29).

Այս 7—8 բառերը թարգմանութիւն  
են Լաֆոնտէնի մի հար Le galant  
բառի!

Կարդացէք Կաշնի ու Եղէգնի մէջ  
Մինչդեռ գագաթն իմ վեհապանձ  
Նըման անեղ Կովկաս լերանց (Էջ 34)  
(Լաֆոնտէնը պարզ ասում է. Մինչ-  
դեռ իմ ճակատը նման Կովկասին=

Серendant que mon front au  
Caucase pareil).

ապա՝ զեփիւո քաղցրիկ... որոնց-  
մով ես վեհանձնօրէն,... ճըկուն Եղէգ և  
ալլն և ալլն:

Եւ սական այդ առակը Լաֆոն-  
տէնի ամենալաւերիցն է. Շամփորը  
համարում է այն զլուխ զործոց Փրան-  
սական լեզվի ու գրականութեան,  
ի նկատի ունենալով ասում է նա,  
որ նորանում չկալ մի հար բառ ա-  
ւելի, մի հար անորելի ոճ (pas au  
terme impropres), ոչ մի պակաս բե՛,  
(pas une négligence). որ նրեսուն  
դողի մէջ, Լաֆոնտէնը, միմիան իւր  
պարունակամբ դարւելով, վերցրել  
է ամենաչորհալի բանասդեղծու-  
թիւնից մինչև ամենավեհի բոլոր  
թոները»:

Մի համեմատեցէք, ինդրեմ, պ.  
Նուպարեանի աշ ճուռականու-  
թիւնը. նախօր ասենք, որ մի  
մուկ՝ զետնի դակից դուրս գալով,  
յանկարծ զինքը դեսաւ առիւծի ճան-  
կերի մէջ.

Կենդանեաց այդ վեհ թագաւոր,

Աւգելով դակ մեծանձնութեան  
ապացուց նոր՝

Կալանաւորն ազար ձըգեց:  
Ուր որ Լաֆոնտէնը, առանց սե-  
թեւեթի, պարզօրէն ասում է

Le roi des animaux, en cette  
occasion,  
Montra ce q'il était, et lui don-  
na la vie.

(=Կենդանիների արքան, այս Դէպ-  
քում, Ցուց տւեց ինչ որ էր, —կեանք  
չնորհեց նորան):

Նկարեցէք, որ աչդպէս է վար-  
ւում պ. Նուպարեանը ամեն դեղ,  
ամեն առակի մէջ, և ամեն առակի  
զրեթէ ամեն դուշում...

Ճաշակի պակասութիւնը նկատ-  
ւում է ամեն քաղաքոխում. «Խոր-  
հորդ մկանցը առակի մէջ պ. Նու-  
պարեանը մկներին դիրաւորութիւն  
է վերագրում աշորս ոդովլյ վախչելու  
երը կառուլի զալը իմանան, ուր որ,  
Լաֆոնտէնի խօսքով, նոքա պիորի  
պետնի դակ» (sous terre) վախչեին.  
Անշուշո, մկները պ. Նուպարեանին  
կ'արդարացնէին, որովհետեւ նոքա  
անկասկած դրս ոտներով պիորի վախ-  
չեին որպէս և Լաֆոնտէնին սուր  
չին հանիլի քանի որ կառուից ա-  
զարւելու համար զետնի դակ պիորի  
վազելու. Բայց ախար այս կայ, որ  
բանը եթէ չորս ոտներով վախչելուն  
գա՞ կագուն անպարհառ մկներին  
իւր ճանկերի մէջ կ'առնելու Միթէ  
այսպիսի մանրն ըրութիւնները պիորի  
խուսափէին Լաֆոնտէնը թարգմանու-  
շից? Եւ նկարեցէք, որ այդ չորս  
ոդքովուր նոցնպէս դեր է կարա-  
րում Նուպարեանի ոդանաւորների  
մէջ. «Աշւէսն ու Արագիլ' մէջ Աշ-  
ւէսը ընդունում է Արագի լինրաւէրը.

Ու ձիչո արենին չորս ոդքով

## Կերթաւ

Զինք հրաւիրող Արագիլի տուն։  
Եւ ոչ միայն աշդպիսի շեղումներ  
է անում մեր սթարգմանիչը», այլ  
ու լաճախ իրենից դուշեր է հնարում  
ու այդ ավաճառումն Լաֆոնդէնի ա.  
նունով։ Եւ ոչ միայն հար-հար դոս-  
տեր, այլ միանգամից բաւականին  
մեծ կրորներ։ Հենց այն նուն «Գորդ  
ու Կով» (ուզում է ասել Գորդ ու  
Եղը (=le Boeuf) առակի մէջ, որից  
մենք արդէն անհամութիւնների օ-  
րինակներ ենք առաջ բերել, գործում  
ենք Լաֆոնդէնի մօդ ամեններն չը-  
գործույլ ալս ամբողջ կոտրը։

Այս կերպ անխելք մարդիկ ահա  
հար ու շատ կան երկրի վրա։  
Ամենքն իրենց վիճակէ վեր  
կընեն բաներ,  
Կը խըզուրորւին  
Կը պատուալին։

Եւ սա նոչնպէս կոչւում է «Ա-  
ռակք Լաֆոնդէնի՞!»

Մեղ շատ ու շատ հեռու կ'ուա-  
նէր ալս գիրքը իւր ամբողջ ծաւա-  
լով բնագրի հետ համեմարելը։  
Քայց որ նաև սխալ ըմբռնումներ  
կան, թու հաւասրէ ահա այս  
կոտորը դրքի սկզբի էջներից։ Խնդիրը  
այն դարերի մասին է, որ կարելի է  
առողջ դատութեամբ արագ վճռել,  
առանց երկար ու թանկ նստող դա-  
տավարութիւնների, ուր դադ դա-  
նողը իսկապէս ոչինչ չէ շահում։

Երանի թէ դարեր շուրով  
Վ ընուէին ալս կերպով։  
(Եւ դեռ մենք ուշում ենք. դպւած  
է Վճարւէին ալս կերպով)

Մինչ ալս կերպով կ'թալին մեզ,

Անքան կ'ընեն ու կ'ընեն որ  
Ոսրբէն կուրէ դարաւոր.  
Խոկ դարախազք փեծնէկ մրայն  
իրենց բաժին կ'ունենան։  
Ալսպէս, ուրեմն, ալսուի ցաւ է  
չարդնւած, որ երկար դարավարու-  
թեամբ՝ վէճի առարկան (ոսրբէն=  
ստրաց) դարաւորն է ուսում, իսկ  
դարախազներին (=պրոկորոնե-  
րին?) միայն կծեպն (=իեճէկ) է  
մեռմ բաժին։

Բայց այդ չէ ասում Լաֆոնդէնը։  
Նախ Plaideurs դարախազներ չի  
նշանակում, այլ փաստաբաններ։  
բայց, որ գլխաւորն է, Լաֆոնդէնը  
ոչ թէ փաստաբաններին է ցաւում  
(նոցա գոնէ ոսորի կծեպն է բա-  
ժին ընկնում!), այլ դարւուններին,  
որոնց ոսորի կծեպն էլ բաժին չի  
հասնում։

On fait tant, à la fin, que l'huit-  
re est pour le juge,

Les écailles pour les plaideurs.  
Կամ երբեմն Եուպարեանը հեղի-  
նակի մի բառն է բաց թողնում, ո-  
րով միութքը աղաւաղում է։

Միւսը կ'ըսէ. «Ձորի ընկեր,  
Պաշտօն մը մեծ՝ չէ աղեկ բան。  
(էջ 17)

Մինչդեռ Լաֆոնդէնը աշդպիսի կար-  
ծիք չունէր բարձր պաշտօնների  
համար, նորա ասածն է թէ մեծ  
պաշտօն ունենալը միշտ էլ լաւ չէ  
(=Il n'est pas toujours bon d'avoir  
un haut emploi).

Մի նկատողութիւն ես: Այս հա-  
տորը, հակառակ իւր սուարութեան,  
չի պարունակում Լաֆոնդէնի բոլոր  
առակները, իսկ թարգմանածներն

Էլ չեն դասաւորւած բնագրի մէջ տպւած կարգով։ Ինչ վերաբերում է ոչ-ամբողջութեանը, թարգմանիչը ինքն էլ նկադութեան է առած այդ իւր լառաջաբանի մէջ։ բաց բնչպէս, «Գրեթէ, ասում է նա, ամբողջ թարգմանութիւն մը կրնակ համարւիլ այս, կարգ մը նւազ կարեսոր կամ, եթէ ներելի է ըսել՝ նւազ լաջող առակներ միան դուրս ձգւած ըլլալով։ Մենք դէմ չենք, որ Լաֆոնտէնը հայերէն թարգմանութեամբ, գէթ այժմ, ամբողջութեամբ չթարգմանւի. բաց ընթերցողին ենք դիմում հարցով, թէ թարգմանողի ցիշեալ խօսքերից կարող կ'լինէիք գուշակել իսկութիւնը, գէթ մօրաւորապէս, եթէ մենք չաշորդէինք մեր ալս հաշիւը թէ Հաֆոնտէնի 404 առակներից ալս գիրքը միան 182-ն է պարունակում, ալսինքն կէսից էլ դեռ շատ պակաս?! Ինչ հարկ կարաք կապող ֆրազներով իսկութիւնը թագցնել ընթերցողից?

Եթէ առակներից ընդրութիւն անելը հասկանալի է, այսուամենաբո՞նիւ պէտք է մը բան չարգէք. Ինչ իրաւունքով թարգմանողը կարող է մի առակ անւանել, օրինակի համար, «Առակ ԺԴ» (=14.րդ), քանի որ բնագրի մէջ նա կոչւում է «Առակ ՀՀ» (=20). Այդ կ'նշանակէ իսկի չհասկանալ ալդ թւահամարների գոյ ձնական նշանակութիւնը։ Ուսուցիչները՝ դասաւութեան ժամանակ, հելլակները, իրենց լոյւածների մէջ, և ալմ, փոխանակ առակի վերնացիրը լիշելու, կոչումներ են առնում վիշելով գիրքը (=զլուխ. Լաֆոնտէնի բնագրին 12 գրքից=զըլ-

խից է բաշկացած) և կոչումների համար վիշում են թւահամարը (օրինակ՝ Գիրք Ա, Առակ Հ), Գալ ալժմ ու հայերի համար, Լաֆոնտէնի նկադմամբ, առանձին թւակարգութիւն սրեղծել—կ'նշանակէ նոյն իսկ հայ ընթերցողին մոլորիցնել որովհետք ներին հայ ընթերցողը կոչումը կ'որոնի Նուպարեանի թարգմանութեան մէջ, ուր նա կ'գոնի ոչ այն առակը որ պէտք է, այլ մի ուրիշ բան։

Համեմատապէս զերծ է խոշոր թերութիւններից առաջին գրքի մէջ «Երինջ, Ալծի ու Մաքի ընկեր եղած» առակը (թէն դարձեալ մի փոքր ձգձած—18 տուլը 24 տուլի թարգմանած)։ բաց աշդունդ էլ առակի վերնադիրն է սխալ դուրս եկել. պէտք է լինէր «Երինջ, Ալծ ու Մաքի ընկեր եղած Առիւծի հետո։ (Նկատենք, որ վրիպահների ցանկ ըունի գիրքը)։

Վերջ, Լաֆոնտէնի Առակների այս թարգմանութիւնը գոհացուցիչ չէ, արդէն խակ այն պարհառով, որ պ. Կուպարեանը, հակառակ իւր լառաջաբանի մէջ արած խոսդմանը, շար շելւած է բնագրից. Յառաջաբանի մէջ նա գրում է թէ՝ «Աշխատեցանք, որքան հնար է, հաւարարիմ մնալ իր (Լաֆոնտէնի) ձերն, որ հելինակին ինքնարդիալ հանճարուն լարուկ ու խիստ սիրուն դրոշմը կը կրի»։ Բայց մեր քննութիւնը մեզ այս համոզմանը հասցըց, որ պ. Կուպարեանի բնագրում այդ միան Փրազներ են և որ նա ոչ միայն չի աշխարել հաւարարիմ լինելու բնագրին, այլ և առանձին ճիգեր է արել բնագրին հաւարարիմ չը մնալու

Օրինակներ բարական թւով մենք  
առաջ քերինքնեղինակի ամենալավ  
նի առակներից, և մեր նկատողութ  
թիւնները թարգման ութեան հիմնա-  
կան կէտերն են չշատիում, Բայց որ  
այդ աշխատութիւնը թիֆլ. Հայոց  
Հր. ընկերութիւնն է հրաժարակել,  
այդ միայն ցոյց է տալիս, որ թարգ-

մանիչ ու հրաժարակիչ իրարից գոհ  
են եղած, որ միայն աղդչափ են կա-  
րողացել մի կլասիկական գրւածք  
աշխատ կերպով հայ ընթերցողների  
ձեռքը տալ, որովհետեւ եթէ մի փոքր  
աւելի՝ «բարի կամք» ունենալին—  
աղաւաղումը աւելի սաստիկ կ'լինէր!

Ա. Ա.

ՊԱՐՍԿԱՏԱՆԻՑ

## Ա. ՅԱՐՄԱՐԵԱՆԻ

IX

ՄԻ ՇԻՔԱՐԱՑՈՒ ԿԱՐԾԻՔ ԼԻԼԱՒԱՅԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թաւրիզ 1900 ապրիլ 13.

Վաղոց ցանկանում էի թաւրիզի Նիլաւակի հալոց դպրոցների մասին գրել, բայց օր տուր չերածզում էի, ի նկատի առաջ նիւթի կարեորութիւնը, Բայց երբ Ժընէի Le Jenevois թերթում սկսեցին քարել Ծամակներ նախունը դպրոցների մասին, նկատելով որ դրանք բաւական լրիւ և մեղամատուր բնուրոց կերպով պարզեցրացնում են Նիլաւակի դպրոցները, վճռեցի այդ նամակները թարգմանելով ներկալացնել Մուրճ.ի ընթերցողներին:

Հեղինակն է մի Շեքսպուրի Հortense D. B., որը խցանու սատար ներփակ էլ երևում է, Ակադամի դպրոցներում Փրանսիայի գումար տնից

## ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Հայոց Դպրոցները, որոնցով ակմմ մենք պիտի զբաղւենք, գոյտութիւն ունին միայն Պարսկաստանում, ուր կառավարութեան դրած կարարեալ ազատութիւնը նրանց թուլ է տւել զարդանալու

Հայերը մեծ կարեռութիւն են տալիս կրթութեան և այդ իրենց որդոց մատակարարելու համար լաճախ մեծ գոհողութիւններ են անում. Այդ պարճառով, ուր որ հայեր կան Պարսկաստանում, նոյն իսկ որդեղ սակաւաթիւ էլ են, նրանք ունին իրենց Դպրոցը. Հայոց Դպրոցներ կան ոչ միայն քաղաքներում, ինչպէս՝ Թաւրիզ, Թէհրան, Սպահան, Արդարիլ, այլ և բազմաթիւ գիւղերում:

Այս Դպրոցներն ամբողջապէս պահում է ժողովուրդը, այն պատրաստով, որ, պիտի գիտենալ, կառավարութիւնը ոչնչով մէջ չի խառնուում, թէն լիւ ազատութիւն է տալիս կրթական հիմնարկութիւններ բանալու. Քաղաքների մեծ Դպրոցներն, ինչպէս Թաւրիզինն է, տալիս են 6 և 8 տարւակ մի Դասընթացք, ունին ընդհանրապէս Դրամագլուխ՝ կաղմած կամ կրակներից կամ հարուստ հայերի նւէրներից. Այս Դրամագլուխը տրւած է տոկոսով, և շահը ծառալում է Պարեկան ծախքի մի մասը ծածկելուն, ուսուցիչների վարձին, կարասիքի վերանորոգութեան և կարկառանին և ազնի. Այս Դրամագլուխից սուացւած հաստափուն գումարի հետ միասին Դպրոցը անի ուրիշ աւլքիւներ արդիւնքների, որոնք ծածկում են ծախսը, որը միշտ բաւական նշանաւոր է: Կողմնակի արդիւնքներն են—թոշակը, Դպրոցական առարկաների վաճառումը փոքր օգուտով, բարեհաճ սիրողների կումբից տարւակ ընթացքում դրւած ներկազացումների արդիւնքը ձեռագործների վաճառումը և այլն:

Գիւղերի Դպրոցները, որոնք ի հարկէ շատ պակաս ծախք ունին, ընդհանրապէս Դրամագլուխ չունին, և ժողովուրդն է, որ նւէրներով և հանգանակութեամբ ծախսելը ծածկում է: Խւրաքանչիւր Պարի մի նոր հրաշք է հարկաւոր լրացնելու համար անհրաժեշտ գումարը ուսուցիչների ռոճիկը վճարելու, մի շատ համեստ ռոճիկ սական, որովհետեւ դա լինում է Պարեկան 10-ից 100 թուման մի գումար (200—500 Փրանկ): Ապա կազ վառելիքի ծախս, Դպրոցական կարասիքի պահպանման, աշքափառ աշակերուներին դրքեր և այլ Դպրոցական առարկաներ գնելու. և խեղճ գիւղացիները մուշ արժանիք ունին, որ, չնայելով դրան, չեն լուսահարւում և զործին պինդ կամած հն: Յաճախ ռոճիկ մասը վարժապետին վճարում է մթերքով, այսպէս՝ նա սպանում է ալիւր իւր Պարեկան զործածութիւնն համար և ցախ իւր վառելիքի համար: Պարահում է, որ դիւղերում նրան երթեմի դրւում է և բնակարան:

Դպրոցները ժողովրդի սեփականութիւնն են և համայնքի իրաքանչւր անդամը իրաւունք ունի նորա արդինքները կառավարելու, նրա ծախքերը կանոնաւորելու բաց գործ հեշտացնելու համար՝ հինգ կամ վեց անդամով մի մասնաժողով է<sup>1</sup> ընդուած ամենահարուսավներից. և ահա վեց մասնաժողովին է, որ ժողովուրդը զանձնել է իւր իրաւունքները և այս մասնաժողովին է, որ ժողովուրդը զանձնել է իւր իրաւունքները և դպրոցների գնդեսական կառավարութիւնը. Այս մասնաժողովը ընդուած է երեք դպրոցի, և իւրաքանչիւր բնակիչ կարող է ընդուած լինել. իւրաքանչիւր մարդ, սկսած քսան դարեկանից, իրաւունք ունի ձախ դպրոց Այս մասնաժողովն է, որ որոշում է դարեկան բիւջէն և փնդրում է միջոցներ բացը ծածկելու եթէ կայ որ համարեա միշտ պատրահում է: Սա է, որ հրաւիրում է ուսուցիչ գիւղերում և դեսուչ մի քանի դասարան ունեցող ուսումնարաններում: Այս դէպքում դեսչին է մնում անհրաժեշտ ուսուցիչներ վարձելու խնդիրը համեմատ նրա որամադրութեան դակ դըրւած բիւջի:

Մասնաժողովը կառավարում է դրամագլուխները, նրանց արդինքը սրանում է և վճարում բոլոր ծախսները. Սրա անդամները ոչ մի վարձարութիւն չեն ստանում: Սա երեմն շատ աշխատանք ունի անելու, որ իւր հաշիւները վակի, և չնայելով զանազան աշխարհներին, որոնելից նա օգուել է, դարձեալ բաց է մնում լրացնելու. հարկաւոր է հանգանակութիւն անել ժողովրդի մէջ, որը լաճախ արդէն վճարել է իւր բաժինը. աղաջիմում են կոմիկասի հարուստ վաճառականներին, գրում ևն, ուշարկում են ողագուանաւորներ և վերջացնում են միշտ բացերը ծածկելով առանց դիպչելու դրամագլխին, որից ամեն կերպ աշխատում են խոսքաւ:

## II

Ուսուցումը ձրի չէ ել կարող լինել համեմատ ան բոլորի, որ դուք դեսաք: Խնկարի առած համեմատաբար նշանաւոր ծախսները, ստացւած թոշակը սական շատ քիչ է. իսկ չքաւոր աշակերդները վճարում են թոշակի կեսը, քառորդը միան, կամ նորդ իսկ ընդունում են առանց որեէ շակի կեսը, քառորդը միան, կամ նորդ իսկ ընդունում են առանց որեէ շակի կեսը, չքաւորութիւնը կաֆարեալ է: Դպրոցը զնում և վճարի, եթէ ծնուղների չքաւորութիւնը կաֆարեալ է: Դպրոցը զնում և վճարում է դպրոցական իրեղէնները. այս վաճառումից սրացւում է մի թեթև օգուտ: Չը վճարու աշակերդները նորդիքս ձրի են ստանում իրենց դասարանական առարկաները ամբողջ դպրոցական դարսակ ընթացքում:

Պարսկաստանի հաջոց դպրոցների և նրանց կաշմակերպութեան վրա այս թեթև դեսութիւնից մտու, ալֆմ մանրամասն քննենք այս դպրոցներից մինը: Թաւրիզի երկու դպրոցներից մինն է, որը ևս կամենում եմ այսուել նկարագրել:

<sup>1</sup> Խօսքը հոգաբարձութեան մասին է: Ծ. թ.

Թաւրիզը իւր 5-ից 7000 հակերով \*) պահում է երկու դաշրական դպրոց, երկու մանկապարտէզ, երկու կարուծելի արհեստանոց:

Թաւրիզի հաջերը բաժանւած են երկու թաղի, որոնք փակւած են բազմաթիւ թուրք թաղերի մէջ և իրարից մօտաւորապէս մի քիլոմետր՝ հեռաւորութիւն ունին։ Սոյն երկու թաղերը ազգաբնակութեամբ հաւասար չեն. Լիլաւա թաղը աւելի բազմամարդ է, և սրա դպրոցի մասին է, որ ես կամենում եմ ձեզ խօսել. Երկրորդ թաղը, Ղալան, երկու դասարան աւելի է պահում, որովհետեւ նրա դպրոցը աւելի հարուստ է,

Չորս դարի է որ երկու թաղումն էլ բացել են մանկապարտէզ, ուր ընդունում են փոքրիկ աշակերտներ 4-ից 7 դարեկան, 2 կամ 4 թուման թոշակով (10 կամ 20 ֆրանկ.) Լիլաւակի մանկապարտէզը երեք դարի ունեցել է մի ընդիր ուսուցչուհի, և չնորհիւ այս դեսակ կառավարչի նախամեննեին իւր չէր մնալ մեր (=շէցարական) մանկապարտէզներից։ Մենք չենք կանգ առնի մանկապարտէզի վրա. Այս կը սահմանափակւեմ ասելով, որ սա հիմնւած է Թաւրիզի Հայունուեաց Բարեգործական Ընկերութեան ձեռքով, որը ինքն է Նրան կառավարում և ծախսերը հոգում։ Մանկապարտէզ ընդունում են միջին թւով 40 եւեխալ, որոնց չքառորդ մասը ամեննեին թոշակ չի վճարում։

Տարրական դպրոցը, ուր ընդունում են երկուսեւից աշակերտներ սկսած 7 դարեկանից, վեց դարւաւ դասէնթացք ունի. Առաջին և երկրորդ դարիները խառն են. և հարց կալ լաջորդ դարին միացնել նաև երկրորդ դարւաւ ողաններին ու ալիքներին և այն ձեռով կազմել խռոն յասարաններ։ Առանց դժւարութեան չեղաւ երկու սեռից երեխանների միացումը և հասարակութիւնը կար յամանակ դժգոհում էր, որովհետեւ ախորել Արեւելքը Էլի աղյուս է բարքերի վրա. և առանց դժւարութեան չէ, որ խելօք ու լուս սաւորւած մարդիկ լաջողեցնում են մի քիչ ընդարձակել այն շրջանը, ուր սահմանափակւած է թով սեռ և համոզել ժողովրդին, որ երկու սեռից երեխանների միացումը կարող է ունենալ միան գերազանց հետեանք ներ.

Աշակերտներիթիւը 270 է. Թոշակը դարեկան 4 թուման է (20 ֆր.) աշակերտների բաւական մեծ մասը ձրիէ ստանում կրթութիւն. 12 դասարան կայ, որոնցից երկուսը խառն է, 5-ը աշխիկների, իսկ 5-ը ողանների։ Ուսման ուղղութիւնը կազմւած է ներկայ մանկապարտութեան բոլորովին համապատասխան ձերով։ Հիմիկւակ տեսուչը, միշտ կրթւած մարդ, իւր ուսումը աւարտած է Բերլինում <sup>1</sup>, դպրոցը կառավարում է հսութ ձեռքով

\*) Բար վիճակաւոր առաջնորդի դեղեկագրութեան (1898 թ.). Թաւրիզը ունիր 3.800 հայ բնակիչ։ Ծան. Սուրբ՚ի խոր.

<sup>1</sup> Ոչ թէ Բերլինում, այլ Եսաւում։ Ծ. թ.

և աւանդում բնազիտութեան՝ դասեր երեք բարձր դարիներում։ Ուսուցիչները և ուսուցչուները թուզ 12 են, և ոչ թէ իւրաքանչիւրը մի դասարան ունի կառավարելու, այլ մի կամ մի քանի առարկայ ուսուցանելու հերթով զանազան դասարաններում։ Սա խոկապէս շար առաւելէ մեր (==չէցարական) մեթոդից, որը միան մի ուսուցչի է չանձնում մի դասարան կառավարել, ուր նա երբեմն պիտի աւանդէ 8-ից 9 առարկան, որոնք նա չի կարող, հակառակ իւր ցանկութեան՝ ուսումնամիջել իւրաքանչիւրը մատնաւորապէս, ինչպէս նա կանէր, եթէ ունենար միան մինը կամ երկուսը։

Մեր կիւրափի դպրոցում, օրինակ, մի ուսուցիչ դաշիս է հալոց լեզուի դասեր երկու սուորին դարիների չորս դասարաններում, մի ուրիշը սովորեցնում է թւարանութիւն, երրորդը ընդհանուր պատութիւն։ Բացի այս ընդհանուր զարգացման առարկաները, աչսինքն՝ մարիենի լեզու, թւարանութիւն, աշխարհագրութիւն, ձեռագործութիւն։ — Մատները երեք բարձր դարիների ընթացքում սովորում են նաև երեք օտար լեզու, երեքն էլ վաճառական դասի համար անհրաժեշտ՝ պարսկերէն, ուսւերէն և Փրանսերէն։ Ես ունիմ շաբաթական դասը դաս ֆրանսերէնից դրաների երեք բարձր դարիներում։ Իւրաքանչիւր ուսուցչի աւանդած դասերի քանակութիւնը միջին թուզ շաբաթական 23-ից 26 է։

Դասեր լինում են ամենախ օր, նոյն իսկ ինչպարթի օրնը, և ոչ ինչպէս մեզանում<sup>1</sup>, Բաց դրա վոխարէն դառերի դեսոլութիւնը բաժանւած է շար աւելի խելացի և մանկավարժութեան համապարախան կերպով։

Առաջին դարին միան 18 դաս ունի շաբաթական (օրական 3 դաս)։ և իւրաքանչիւր դասը ուսում է միան կէս ժամ, 20 րոպէ դասամիջոցներով<sup>2</sup>։ Երկրորդ դարւանից սկսած դասերը գուում են երեք քառորդ ժամ և ընդհատում են 15 րոպէ դասամիջոցով։ Ամառաւ առաւօդների մուգ երկար դասերը, ընդհատուած միան կէս ժամ դասամիջոցով, չափազանց լողնեցուցիչ են ուսուցիչների և աշակերդների համար, և ուսումը շատեկի կօգուէր, ես համոզած եմ, եթէ ենթարկւեր դասերի այս ոչժեմին — դասերի ամենաշատը երեք քառորդ ժամ դեսոլութեամբ և կարճ դասամիջոցներով։ Այս մեթոդը գործ է դրւում մնացածքովոր դեղերում կուլէչում, օրիորդաց գիմնազիալում (ecole secondaire), և աւելի մեծ իրաւունքով պիտի գործադրւած լինի մեր դարրական դպրոցներում, ուր առնքով պիտի գործադրւած լինի մեր դարրական դպրոցներում։ Ինչ նահարակութիւնն է աներում ընդհատուած կարճ դասեր ունենալու։ Ինչ նահարակութիւնն է աներում ընդհատուած կարճ դասեր ունենալու։

<sup>1</sup> Շեցարական դպրոցներում, կիրակիներից զար, հինգշաբթի օրերն էլ դասեր չեն լինում. դա կոչում է petit dimanche — (վոքր կիրակի)

Ծ. թ.

<sup>2</sup> Ոչ թէ 20 րոպէ, այս կէս ժամ դասամիջոցներով։

ռաջին դարւաց խեղճերի համար, որոնք գալիս են մանկապարտէզից, ուրկէս ժամ ունող դասերը ընդհագուում են խաւերով, երգերով, մարմնամարզական քաջլերով և որոնք պիտի երբեմն մնան անշարժ երկու երկար ժամ և լսեն ձանձրալի դասը. Ես ասում եմ ձանձրալի, որովհետեւ դասերը նրանց այնպէս պիտի թւան մանկապարտէզի դասերից չետու և եթէ օրական 6 ժամ դասի փոխարէն նրանց դաշին միմիան կէսը, ընդհագելով իրաքանչիւր  $\frac{2}{4}$  ժամը մի դասամիջոցով, ես համոզւած եմ, որ հերեանքները պակաս չեն լինի, և երեխաները աւելի առողջ կը լինէին:

Դառնանք մեր կելաւափի դպրոցներին: Երկրորդ դարին ունի 20 դաս, երրորդը 22, չորրորդը 24, և միան հինգերորդ և վեցերորդ դարիներն են, ուր աշակերտները ունին օրական 5 դաս ամենաշատը, որից չի անցնում: Առաջին երկու դարիները ոչ դաս, ոչ էլ գրաւոր պարապմունքունին դանը կարտարելու. երրորդ դարին ունի միան բանաւոր դասեր պարբաստելու. ապա երեք բարձր դասարաններին դրւում է ինդիբներ և դասեր քիչ քանակութեամբ:

Ամբով ուսուցչական խումբը, բաշկացած 10 ուսուցչից և 2 ուսուցչունուց, բոլոր ուժով աշխատում է ուսմանը դալ մի խելացի և խակապէս մանկավարժական ուղղութիւն:

Օդար լեզուները աւանդուում են դիտողական միթոդով և առանց մալունի լեզվի օգնութեան, բացի հազւագիւտ բացառութիւններից և երբ աշակերտները արդէն ունին մի նշանաւոր պաշար բառերի, գալափարների և ոճերի: Այդ մեթոդը, որ աշխատում է երեխափին դնել այն վիճակի մէջ, որում նա գորնուում էր իւր սեփական լեզուն սովորելիս, և առարկափի անունը դալիս է անմիջապէս արն լեզով, որը ցանկանում է սովորեցնել, առաջացնում է գերազանց հեղեանքներ:

Անա շուրով երկու դարի կը լինի, որ ես փորձում եմ ֆրանսերէնք այս ձեռով, և իմ փոքրիկ աշակերտները կարողանում են թեթև խօսակցութիւն անել որոշ քանակութեամբ նիւթերի մասին—իրենց շրջապարու առարկաների, դասարանի և օրուազ աշխատանքների, դան, ժամանակի, եղանակների, հագուստների, արհեստների մասին և այլն: Դասագիրքը ամբովշապէս ֆրանսերէնէ, և իսկապէս ասած քերականութեան դասեր չկան: Գերականութիւնը, ուղղագրութիւնը, սրանց կանոնները և բացառութիւնները, ապ բոլորը սովորում են խօսակցութիւնների ընթացքում: Աշակերտները ի հարկէ գրում են. և իրաքանչիւր խօսակցութիւն ամփոփուում է մի փոքրիկ պատմութեան մէջ, որը հետզետէ դառնում է երկար և բարդ, նաևելով թէ որքան երեխաները հետզետէ դիրապետում են լեզւին: Ես համոզւած եմ, որ մի աշդպիսի մեթոդ, եթէ շարունակւի 4 կամ 5 դարի, աշակերտներին կը հասցնի այնոեղ, որ վարժ կարգացարքներն իրենց մոքերը իւրաքանչիւր օդար լեզուվ, և շատ աւելի լաւ, քան այդ:

անում են ազօրւաց թշւառ աշակերդները, որոնց սպանում են թեմաների և թարգմանութիւնների միջոցով և անգիր անել դալով կանոններ և անհույս բառերի սինակիներ, որոնք նրանց բոլորովին չեն հետաքրքրում որովհետեւ ոչ մի չարաքերութիւն չունին կեանքի հետ, քանի որ նրանք համարեա երբէք առիթ չունին նրանց գործածելու մի սովորական խօսակցութեան մէջ:

Բոլոր միւս առարկաներն էլ ձգուում են նոյն նպատակին—ուսումից սուելծել մի դուրեկան և ոչ թէ ճանձրալի բան և կրթել երեխաներին՝ քալ առ քալ հետեւելով նրանց զարգացման: Աշակերտին իրեն գոնել դալ՝ ինչ որ ցանկանում են նրան սովորեցնել, որպէս զի սա դառնաչ նրա հարստութիւնը, նրա սեփականութիւնը և որպէս զի նա բոլորովին չը մոռանար:

Հաբաթը մի անգամ և հերթով ուսուցիչներից մինը կամ միւսը իւր առարկացից դաս է դալիս, որին ներկայ է լինում ամբողջ ուսուցչական խումբը: Ապա ժողովում են և մրերմարար խուում են այս դասի մասին: Նկարութիւններ են լինում, դիրութիւններ են անւում, հարցեր են դրւում, այդունդից ծնում է մի վէճ, որից լոյս է հոսում, մի վէճ պոտուդներով լի, որի մէջ ամեն մարդ սովորելու բան է գտնում: և այս դասերը աջակցում են դասաւանդութեան կատարելազործելուն, ցուց դալով սխալները, պակասը: Նոչնպէս լաւ բան, որից կարելի է օգուտ քաղիլ:

Բացի այս ընկերական հաւաքումներից կաչ նաև իւրաքանչիւր շաբաթ մի մանկավարժական ժողով դեսչի նախագահութեամբ, ուր արծարծում են բազմաթիւ ընդհանուր և մասնաւոր խնդիրներ, որոնք որևէ ձեռվ կապ ունին ուսաւան հետ:

### III

Հայ ժողովուրդը, որ կրթութեան համար մշտական և նշանաւոր զոհութիւններ է անում, իրաւունք ունի գիտենալու, թէ ինչպէս են կառավարում այն դպրոցները, որ ինքն է պահում: Այդ պատճառով դպրոցները միշտ բաց են, և համարնքի իւրաքանչիւր անդամը կարող է ներկայ լինել դասերին: Մական որպէս զի այս ացելութիւնները անկարգութիւն չառաջացնեն դասաւանդութեան մէջ, որ կը խանգարի այս շարունակական գնալ զալու պատճառով, նշանակւած է մասնաւորապէս դպրոցական դարւաց մի շրջան, երբ դպրոցի ընթացքով հետաքրքրութ անձնաւորութիւնները հրաւիրւում են դասերին ներկայ լինելու: Սա դարւաց վերջին ամիսն է, մայիսը, երբ դասերը հրապարակական են լինում<sup>1</sup>:

<sup>1</sup> Ոչ միայն մալիս ամսին, ալլ ամբողջ դպրոցական դարւաց ընթացքում ցանկացողների համար դպրոցի դուռը բաց է. բայց աւելի լաճախում են մայիսին.

Վերջին տարին շատերը արձագանք դրին այս կոչին և, մի արտակարգ բան, երեսում էին կանալք, որոնք մինչև այդ ժամանակ դանից դուրս էին գալիս միան իրենց սեռի մի անձ ալցելելու համար, նստում էին գալու ցական նարարանների վրա և հեղաքրութեամբ լսում էին դասերը:

Այս հարապարակական դասերը օգտակար կերպով փոխարինել են հրապարակական քննութիւններին, որոնք դեպի էին ուսենում մինչև վերջին տարին հալոց դպրոցներում, որոնք դպրոցի ընթացքի և ուսուցիչների դասաւանդութեան մասին շատ պակաս հաւաքարիմ պատկեր էին դալիս: Մի հարածով մենք մի արմադական փոփոխութիւն արինք, որը առաջացրեց բարձր ալաղակներ շատ մարդկանց կողմից. մենք ամբողջապէս վերացրինք քննութիւնները Շատ մանկավարժական ժողովներ ունենալուց էրուց, որոնց ընթացքում լուրջ կերպով քննելով այս նշանաւոր հարցը, մենք բոլոր շուտով համաձայնեցինք վերջնական քննութեան անօգուր լինելուն, եթէ աւելին չասենք, և հակածառութիւնները որոնցից ամենամեծն էր աշբետչել սուրբ ոռուրինալինո, իսկոն ընկան դասութեան առաջ (devant la raiison):

Ինչ վերաբերում է փոխարութիւններին, մենք կարարեցինք հետեւալ ձեռով: Իւրաքանչիւր ուսուցիչ դեպ իւր գրաւոր գնաճառութիւնը իւրաքանչիւր աշակերտի մասին և այդ գնաճառութիւնների հետևանքով ընդհանուր ժողովում որոշեց աշակերտների փոխադրութիւնը:

Ինքն ըստ ինքեան հառկանալի է, որ թւանշանների մեթոդը ամբողջապէս արգելած է մեր դպրոցում: Ոչ մի թւանշան, և աշակերտները դրան վարժել են, ոչ թէ 6 կամ 10 սրանալու համար<sup>1</sup>, այլ իրենց ուսուցիչներին բաւականութիւն պարհառելու համար. նույնպէս որովհետք մենք կարողացել ենք նրանց համար աշխատանքը բաւականաչափ դուրսկան դարձնել, առանց նրան համեմելու մեծ կամ փոքր թանշանով:

Միան իւրաքանչիւր ուսուցիչ ամեն մի աշակերտի իւրաքանչիւր քառամսեակի վերջը որոշում է հետեւեալ նշաններից մինում թուզ, բաւարար և լաւ: Այս նշանները գրւում են մի լատուկ մատեանում և աշակերտներին չեն հաշորդւում: Մրանք ծառալում են միան փոխադրութիւնները որոշելու համար և մնում են դպրոցական արխիւում: Մրանք կարող են միան ցուց դրւել ծնողներին եթէ նրանք ինդրում են, և լամինալն դէպս գիւստէր չակրտում է այն առարկաները, որից թուզ է նրանց որդին, որպէս զի նրանք կարողանան մասնաւոր ուշադրութիւն դարձնել: Այս ձեռով կանուարւած փոխադրութիւնները, հիմնած հանդարու մրածելով դըրւած և ամբողջ տարւակ աշխատանքը ամփոփող նշանների վրա, շատ

<sup>1</sup> Ներքարիալում թւանշանների սխառչմներից գործ է դրւում 1-ից մինչև 6-ը և 1-ից մինչև 10-ը.

աւելի ճիշտ են, քան նրանք որոնք քննութեան հեղեանք են, ուր պարահմունքը չաճախ մեծ դէր է կարարում և ուր աւելի արժանաւոր աշակերտները անխողութեան են հանդիպում կամ քաշելուց կամ յանկարծակի մուանալուց:

1898—99 դպրոցական դարին մենք վերջացրինք Թաւրիզում մինչև այդ ժամանակ չեմ դեսնւած բանով, դպրոցական հանդէսով („promotions“) ժըննական ձեռվի Ռինչ պակաս չեր մեր դպրոցի բակը զարդարւած էր կանաչ գիրլեանդներով, էալթական կամարներով, որոնք բարձրացել էին դպրոցական փոքրիկ ժողովրդին բարի գալուստ մաշթուլ դէկիզներով<sup>1</sup>. բոլոր լուսամուղներում ծածանում էին դրօշակներ երգեր որպանաւորներ, մի փոքրիկ մանկական ներկայացում, մարմնամարզական քալւածքներ, իսա ու բար չաջորդում էին իրար ամբողջ կէս օրից չերոչ, և երբ տօնը վերջացաւ տոպրակների խաղով<sup>2</sup>, ոգեսրութիւնը հասաւ իր գագաթնակէտին և մեծ ու փոքր վերադարձան հիացած:

Առաւօտը գերի ունեցաւ լուրջ մասը, ուր մուտք ունէին միայն ծնողները և ուր դպրոցական մասնաժողովը կարդաց իւր հաշիւը: Ապա դեռ սուչը կարդաց տեղեկագիր դպրոցի ընթացքի մասին և լայտնեց վերջնական հեղեանքները:

Այսքան ախորժելի հանդէս դեղի ունեցաւ լունիսի առաջին երկու օրը, որից չերոյ աշակերտները երեք ամսով իրար համեմատ դրւին, որով հետեւ ամառաւէ արձակուրդը ալսորել դրւում է մակիսի վերջից մինչև անպրեմերը, քանի որ մեծ չոփերին աշքարանքը անկարելի է: Այս երեք ամսւաէ ընթացքում բոլոր աշխատանքը ընդհատում է, ուսուցիչները զնում են իրենց արժանի հանգիստը վայելելու իրենց ընդհանիքների մէջ կովկասում, առաջներն ունենալով 8—10 օրւակ ճանապարհ ալրող արեի ժակարտ կամ քայլ կառքի մէջ նստած, և նոյնքան ժամանակ էլ վերադարձի համար, եթէ հրաւիրած են չաջորդ դարւակ համար:

Այս ճանապարհորդութիւնը, որից ոչ ոք չի ուզում լեռ միալ, կլանում է համեստ ոռօճկի մի նշանաւոր մասը Հարկաւոր է հաշեկ չ0—100 ռուբլի ալս ճանապարհորդութեան համար, դրա մէջ հաշւած նաև Ռուսաստանի անցադիրը, որն արդէն արժէ 20 ռուբլի (50 ֆրանկից աւելի): Ասեմ նաև, որ երիտասարդ պարոնները, որոնք համաձայնում են Թաւրիզ կամ նաև, որ երիտասարդ պարոնները, որոնք համաձայնում են Թաւրիզ կամ 500 ռուբլուց աւելի, որը ալսորել են սփակասում կաշխատէին 400 կամ 500 ռուբլուց աւելի, որը ալսորել են սփակասում:

<sup>1</sup> Ծ.սիկներով գրւած էր «Ով կարդայ նա մարդ ա», և «Կարդա, ակ իմ խելօք մանուկ»: Ծ. Թ.

<sup>2</sup> Մի մանկական խալ է: Ծ. Թ.

Վարձագրութիւն նշանակուում է դասերի բեսակի<sup>1</sup> և թւի համեմարդ առանց սեռի խտրութեան, 300—600 ռուբլի (800—1.600 ֆրանկ.) ինչպէս արդէն ասել եմ դպրոցը շատ սահմանափակ միջոցներ ունի և չի կարող իւր ուսուցիչներին աւելի բարձր ռոճիկներ տալ:

Հայոց դպրոցների մասին այս հակեացքը մերջացնելու համար ես կամենում եմ ծեզ մի խօսք ասել մեր դպրոցական շինութեան մասին: Նա կառուցւած է Լիլաւա թաղի կենտրոնում և պարունակում է շինութեան երկու ընդարձակ մասեր իրարից բաժանւած մի բաւական մեծ բակով, որի մէջտեղը գոնուում է թաղի եկեղեցին: Շինութիւններից մինը, որը բոնւած է դրաների դասարաններով բաւական հին է, Դասարանները սական ընդարձակ են, իսկ առասորածները բաւական բարձր: Նա նաևում է դէպի հարաւ, և խրաքանչիւր դասարանը լուսաւորուում է չորս լուսամուգով: Տղաների դպրոցը պարունակում է բացի ալդ մի սենեակ՝ նշանակած ուսուցիչների համար, և թաղի հասարակական գրադարանը Ալշիկներինը չորս դարւաւ մի շքել շինութիւն է, կառուցած Թաւրիզում ծնւած մի հազի ձեռքով, որը նւիրել է համանքին: Ցածի լարկում պարունակում են և ընդարձակ և լաւ լուսաւորուած դասարաններ, մի սենեակ, որը միաժամանակ ծառակում է իրեն աշխարհագրութեան սենեակ, ուր կախւած են քարտէզներ, և դպրոցի զրադարանը:

Վերի լարկը բոնւած է մանկապարտէզով կար ու ձեի արհեստանոցով՝ ճ դարւաւ լնիմացքը աւաբուած ա ջիկների համար, և մի լնդարձակ՝ դահլիճով ժողովների համար, մի թեմով, ուր դելի են ունենում հրապարակական ձրի դասախոսութիւններ ամեն շաբաթ և ներկազացումներ, կամ գրական ու երաժշտական երեկոներ ուարին երկու կամ երեք անգամ:

Երկու չարկերն էլ ունին ընդարձակ միջանցքներ, որոնք անձրև ժամանակ դասամիջոցներին խաղալու են ծառակում: Մի քարած վոքրիկ բակ կազ շինութեան լեռնեւում: Դպրոցի դասիակ կրուրից, ինչպէս Թաւրիզի բոլոր կրուրներն են, որը իշխում է բոլոր չրջակաչ շինութիւնների վրա, մարդ հիանում է մի սքանչելի դեսարանով, և մարդի հակեացքը ուարածում է քաղաքի անթիւ դների ու պարտէզների վրա, մինչեւ Ռեմիու լիճը, որ կապուին է դիւխս-արևմրեան կողմում, մինչդեռ դրա հակառակ կումը Սահանդը բարձրացնում է իր եօթ գագաթները արևելքի փայլուն երկնքի կապուդակի վրա»:

<sup>1</sup> Վարձագրութեան մէջ նշանակութիւն ունի ոչ միայն դասերի արեսակը, ալլ և ուսուցչի զարգացման ասորիհանը.

## ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀԱՐԱՀ - ԱՓՐԻԿԱՑՈՒՄ

Տօրախոս ամիս բուրերի և մանաւանդ Օրանժեան բուրերի համար ապրիլի ամիսը, Ռոբէրտսը, ամեն պատրաստութիւն գետնելուց լեզու, արագ սլացաւ դէսի կրօնսպատ, որին տիրեց, Բուրերը ներ ու եղ նահնջեցին պատրերազմի բոլոր Դաշտերում, Անդլիացիք արդէն որք են դրել Տրանսվալի հողի վրայ Բայց Դառնանք դէպերին:

Օրանժեան բուրերը, որոնք պաշարել էին Վէպէրինը, ուր անդլիական գայնիզոն կար, սկսան եր նահանջել դէպի նարաւ, իսկ միւս կողմից 6.000 բուրեր սկսան մօտենալ Քետուլիաին:

Ապրիլի սկզբին Ս. Հեղինէի կղզին հասաւ Կրօնլէի հեր վերցրած գերիների առաջին խումբը, նոցա մէջ և զնդապեր Շիլը. Նոցա համար բանակարել էր պատրաստւած:

Անդլիացիք նորից գրաւեցին Ռուկովիլլ:

Վիլրուա Մոռէլլ, Փրանսիական կամաւորների պետը, վախճանւեց, Նա Կարենոր ովֆ էր բուրերի պատրերազմի մէջ: Պարիզում, ապր. 4-ին հանդիսաւոր հոգեհանգիստ կառարւեց Տիրամալր եկեղեցում:

Գեն. լորդ Մերուէնի պարւէրով պարուասուեց գեղեցիկ լուշարձան Վիլրուա-Մոռէլլի գերեզմանի վրայ, Փրանսիական արձանագրութեամբ:

Նարալում, որի մի մասը դեռ բուրերի ձեռքումն է, բուրերի զօրաբաժինները ապրիլի սկիզբները ցրւած կանգնած էին Զունդա և Դէնդի գերերի միջև եղած բուրների վրայ. Վաշրանկեան հովորի երկարութեամբ նոքա ամրութիւններ են կառուցել, Նարալում բուրերի թիւը համարում էր 15.000 հոգի:

Բուրական պետութիւնների պատրիբակութիւնը ապրիլի 7-ին ընդունւեց Հոլլանդիաի թագուհուց և մայր-թագուհուց, Միսսիալի անդամներին ներկայացրին թագուհիներին Տրանսվալի և Օրանժեան հանրապետութիւնների ներկայացուցիչներ Լէլտս և Միլէր:

Չիկագօլից լրկած դաշտավին հիւանդանոցի անդամները, Պրետորիա հասնելուն պէս՝ դինեցին:

Անգլ. գեներալ Ռենդլի զօրաբաժինը ապր. 7-ին ընդհարում ունեցաւ Բուրերի հետ Դեւեռադորպից 5 անգլ. մլոն հեռու. Բուրերի Դիրքը իշխում է քաղաքի վրայ Ռէնդլը գրաւեց մի դիրք, ուստից նա կարողացաւ բուրերին դուրս վանել և գրաւել ան լեռնադաշտը, որ առաջ Բուրերի ձեռքումն էր:

Բուր զօրքերի թւի մասին Թալմ'ին հետեւեալ տեղեկութիւնն էր հեռագրում Լոռենցօ-Մարքեզէից, ապր. 3-ին, թէ երկու հանրապետութիւնների զօրքերի թիւը, կապի ապստամբների հետ միասին, սկզբում՝ հաւասար էր 105,000 հոգու, իսկ այդ օրերը՝ 80,000-ից աւելի, որոնցից 50,000 գործում էին Օրանժեան հանրապետութեան մէջ, 10,000-ը Բիգարեան լեռներում և 15,000-ը Ֆորտինիաբրիմսի և Կլէրկսդորպի շրջաններում:

Դորա հակառակ, Տրանսվաալի կառավարութեան հրաժարակած ցուցակներից երեսց, որ 1899 թ-ի Դեկտեմբերին բուրերի զօրքը կազմւած էր 34, 000 մարդուց, բացի 5 հազար ապստամբներից, կորուսոր մինչև ասրդի սկիզբը բաղկացած էր 6,500 զերի ընկածներից, 8,000 սպանւած՝ և վիրաւորածներից, 14,000 հոգու համար հաշիւ չէ տրած. ենթադրում են, թէ դոքա վերադառնել են հակենիք:

Պրեորդիացում օգարերկրացի մասնագէտներին լաջուեց ձուլարան շինել մեծ թնդանօթների համար: (Նախկինը պակետել էր մեծ թուզ զոհել բանելով. Տրանսվաալի կառավարութիւնը խիստ քննութիւն էր սկսել այդ առիթով, և կասկածում էր թէ անզլիացիք են պաթում առաջացրել):

Գեն. Ռէնդլի զօրաբաժնից 25 մարդ, ապր. 10-ին մթնշաղին սակերի հետ դէպի առաջաւոր դիրքերը զնալիս, անհայտ կորան. Ռոբերտոսը այդ պատճառով ապր. 11-ին դրկեց 11-րդ զօրաբաժինը Պօլ-Կերիաի հրամանափարութեամբ զեն. Ռէնդլին օգնելու. Նոքա հասան կարիքոնոտէն սուանց հանդիպելու նշանաւոր ընդդիմադրութեան, կորցնելով 2 սպանւք, 19 վիրաւոր և 11 անկայտ կորած: Հեծեալ հետեակները գրաւեցին. Էռուվկոս:

Գեն. Զերմսայդ (անգլ). առանց դիմադրութեան գրաւեց Դեւեռապորտ (ապր. 12), Գենարաներ Ֆրէնչ և Ռէնդլ առաջին զօրաբաժիններով զնացին հալածելու նահանջու բուրերին:

Բուրերը, 4-5,000 հոգի, հեռացան Վեպերէնի շրջակալքից դէպի Լեդիբրանդ (12 ապր.)

Սպիռնսկոպի ճակառամարտին վերաբերեալ Ռոբերտոսի հեռագիրնը Անգլիակի առերազմական մինխսորը հրաժարակութեան դւեց, համաձանութեամբ Ռոբերտոսի. դոցանում Ռոբերտոսը կազում է զեն. Բուլէրին և մամաւանդ զեն. Ռոբերէնին կառավարութիւնը, սական լայտնեց, որ

այդ հեռագիրների հրատարակութիւնը անհրաժեշտ չէ դարձնում Բուլլէրին  
իւր կանչելը:

Անդիքացիք ոմբակոծութեամբ դուրս քշեցին բուրերին իրենց բա-  
նակից Վարրենտոնի մօտ:

(Պրեֆորիալում, սաստիկ պալմում դեղի ունեցաւ Բէզրի ձուլա-  
րալում, որը կառավարութեանը զէնքերի պահեստադեղի էր ծառալում.  
շինութիւնը բոլորպին կործանւեց. սպանւեցին 10, վիրաւորւեցին 32-  
մարդ, մեծ մասամբ Ֆրանչացի և իրանդացի բանւորներ):

Պահ. Համբլուոնը չետ մլւեց իսրայէլապուտի մօտ գդնւող զօրել Դիրքից:

Նորենցէ Մարքեղէ նաւահանգիստը հասաւ Փրանսիական «Ժիրոնդ»  
ողենաւը, որի պասամիրների մէջ հարիւր բանւորներ կալին Կրէզօփ  
Փրանսիական չափոնի թնդանօթալին գործարանից: Դոքա անշուշր ուղեու-  
տում էին Տրանսվալ):

Կապշտառում բոլոր հիւանդանոցները դադարեւեցին և այնուելի բո-  
լոր հիւանդներին դեղափոխեցին հիւանդանոցացին նաւերը:

(Յովհաննէսբուրգի Ֆրանչական մի բանկ ճանապարհ զցնց Դէ-  
պի Պարիզ 135 հազար ֆունդ սոբերլինգ ոսկեդրամ և 121 հազար ֆունդ  
սոբերլիգի ոսկու զոդ (=ձուկածու)

Ոորերպար, բոնւած նամակների և ալլ Փաքուրի հիման վրայ, ակա-  
համոզան եկաւ, որ Օրանժեան բուրերը շատ Դէպքերում հնազանդութիւն  
են չափուելու որպէս զի ամեն ժամանակ հնարաւորութիւն ունենան թշնամա-  
են գործուղութիւններ սկսելու անլիացիների դէմ և արշաւանքներ սկսելու  
նոցա հաշորդակցութեան ճամբանների վրայ: Այդ պառճառով Ռոբերտորը  
ախսու միջոցների Դիմեց Օրանժեցիները զինաթափ անելու համար. և ո-  
խիսու միջոցների Դիմեց Օրանժեցիները զինաթափ անելու համար. և ո-  
խիսու միջոցների Դիմեց Օրանժեցիները զինաթափ անելու համար. և ո-  
խիսու միջոցների Դիմեց Օրանժեցիները զինաթափ անելու համար. և ո-

Մարտի 29ին լրացաւ վեց ամիսը Մեգինզի պաշարման. բուրերը  
այդ օրը ժոննեցին ոմբակոծութեամբ և նիւթական մեծ վնաս հասցրին  
քաշաքին:

Վարրենտոնի մօտ բուրերը նորից զրաւեցին իրենց կորցրած Դիր-  
քերը ապր. 14-ին:

Գեն. Ֆրէնչի հեծեալները հետախուզեցին Տարանչուի արևելնան  
կողմը գրնւող բլուրները, և երեաց որ նոքա դեռ զրաւած են բուրերի բազ-  
մաթիւ զօրքերով. սաւախմբերի բացակաչութիւնը դոցա մօտ ցուց էր դա-  
լիս որ այդ զօրքերը բուրերի զօրքերի վերջապահներ են:

(Բուրական պատւիրակութիւնը Հաազից Ամսադերդամ և Ոո-  
րերդամ անցնելոց լեռու ուղեւուեց Ամերիկացի Միացեալ նահանգները, համոզւած  
չացելելով Եւրոպայի ալլ պետութիւնների մայրաքաղաքները, համոզւած  
լինելով որ ոչ ոք որամադիր չէ միջամբելու բուլ-անզլիական պատե-

բազմին. Հիւս. Ամեր. Միաց. Նահանգների պետական քարտուղար արդարքին գործների մինիստր Գէլ չաշոնեց, որ նա կ' վերաբերի բուրական միստիալին աճնպէս, ինչպէս կարեոր դիրք ունեցող որև է անձի, որը ացելում է. Միացեալ Նահանգները, և նորան աճնպէս կ' ընդունի, ինչպէս Մոնքէգլէ Ոււաչո՞ին, բայց նորան իրաւունք չի տաէ որև է բանակցութիւն սկսելու արդարքին գործերի մինիստրութեան հետ Անորերդամում պարուիրակութիւնը 17 ապրիլի ընդունեց տրանսվալեան չանձնաժողովի կողմից ։ Ճանապարհին մողովդապին ամբոխը սիրալիր ողջունեց եկողներին. նոցա մարդացւեցին ծաղիկներ և պակներ. Բուրգոմիստրն ընդունեց պարզամատորութիւնը. Երեկոյեան պարզամատորութեան կազմած ընդունելութեան ներկաչ էին ազգաբնակութեան բորոր դասակարգերից անձեր, որոնց թում բուրգոմիստրը, քաղաքացիական իշխանութիւնները և մի քանի կորպորացիաները. Պարզամատորութեան անդամները ։ Ճառեր չարուասանեցին. Յաջորդ օրւակ երեկոյեան կալացաւ մի համազումար ժողով, ուր պարզամատորութեանը լայտնւեց համակրութիւն. Ժողովին ներկաչ էին պարզամատորութեան անդամները. — Ամերիկազում պաւիրակութեանը համակրութիւն ցուց տալու համար մեծ պարասպութիւններ են դեսնուում.

Ցովհաննէսրուրգի օգնական չանձնաժողովի քարտուղար Վինցենտ, որ Օրանժեան հանրապետութեան քաղաքացի է, ացելեց պետական քարտուղար Ռէցին և նորա հետ բանակցութիւններ սկսեց երկրի սահմաններից արդարածած օրաբերկրացիների մասին. Ռէց չաշոնեց, թէ ոչ միան բրիտանական հպատակները, առ և գերմանացիները, ամերիկացիները և ուրիշ օրաբերկրացիները, որոնք հրաժարեցին զէնք վերցնելու և գնալու պատերազմ, հետզետէ կարտաքսւեն երկրից.

(Արդէն չաշոնի է, որ անդլիական զօրքերը, հրամանադրութեամբ գիւներալ լէլունանդ կարինգտոնի, Ռուդեզիա անցներու համար, շրկւեցին պորտուգալական Բէլի անահանդիսաւու ու պորտուգալական հոլի միջով անցան. Պորտուգալիաի կառավարութիւնը, իւր չէզօքութիւնը ացդպէ սով խախուեց, հիմնւելով Անդլիակի հետ նախօրօք կոած դաշինքի վրակ Ալտաութով Պորտուգալիաի Պարզամատորների ժողովը համարեա միաձայն մերժեց կոստի առաջակը՝ հարցապնդումն անելու մինիադրութեանը աճն պարզառով, որ նա թուլ է ուել անդլիական զօրքին անցնելու պորտուգալական կալամանների միջով).

Բլումֆոնտէնից ապրիլի 19-ին հալորդեցին թէ նշանառ բովանդակութեամբ երկու նամակներ ընկան անդլիացիների ձեռքը մէկի մէջ, որ նախագահ Շտէն զրել է գեներալ Բորային, տրանժ է լայտնւում աճն բանից, որ կրոնաստադի պահպանութեան համար թողնւած է սակաւաթիւ զօրք և հաջորդուում է, թէ բրիտանացիները 5,000 զօրք ունին առաջ-

պնալու համար։ Ապա Շրէն ցաւ է լայտնում այն առիթով, որ բուրերի զօրաբաժինը, կրոնշրադը պաշտպանելու փոխարէն, զբաղւած է հացաւէո շրջանները կողոպյութելով և դրանով անբաւականութիւն է սերմանում։ Տրանսվապի և Օրանժեան բուրերի մէջ, Շրէն ցանկութիւն է լայտնում, որ Նարալում գորնուղ 10,000 բուրերի մի մասը գնակ դէպի Վարենիների կիրճը, որպէս զի հանրապետութիւնների ուժերը կենդրուած անդեղ և կարողանան վճռական հարւած հասցնել անզիլացիներին։ Վերջում Շրէն ասում է, թէ ինքը պատրասխանադրու չի լինի Օրանժեան բուրերի հաւարարմութեան համար, եթէ Տրանսվալը երաշխաւորութիւն չըտազ, որ մորադիր է պաշտպանել Օրանժեան հանրապետութեան ժամանակաւոր մալրաքաղաքը։ Միւս նամակը Կրիւգէրի պատրասխանն է, գրւած զօրապետ Ֆոնտինգսուրիմսին։ Կրիւգէր ասում է, թէ աւելի զօրք հաւաքել անհնար է; որովհետեւ ամեն մի մարդ, որ գորնում է հանրապետութեան կարգադրութեան դակ, անհրաժեշտ է անսունդի համար, ուր նա գորնում է։ Վերջում ասւած է, թէ Եւրոպաի միջամրութիւնը միայն ժամանակի հարց է։

Տարանչուից գեներալ Դիկոսնի նահանջի ժամանակ՝ նրա սալյախումբը պաշտպեղնի հետ միասին ընկաւ թշնամու ձեռքը։ Վերջապահ զօրքը ենթարկեց սաստիկ կրակի։ Նահանջը երկիւղավի դրութեան մէջ դրեց գեներալ Համիլտոնին։ Նա ժորովեց իր զօրքերը և լեռքաշեց դէպի Տարանչու, թնդանօթաձգութեամբ և հրացանաձգութեամբ սասուկ ընդիմութիւն ցուց դալով լարձակուղներին։

(Լոնդոնի Daily Express թերթը հաշորդեց մի խօսակցութեան բովանդակութիւն Շւէդիայի և Նորւեգիայի թագաւորի հետ, որ մօրաւորապէս ասել է հետեւեալը։ «Ես ձեր գործը արդար եմ համարում, բայց առանձնապէս հաւատ չեմ ընծառում կրօնական հիմունքներին, որոնք վերագրելի են միայն բուրերին։ Ես չեմ կարծում, թէ կարելի լինի խօսել Տրանսվալեան կառավարութեան քաղաքական աղնութեան մասին, որովհետեւ նա մի քանի անգամ մնրժեց բարենորոգումներ մոցնելու հրաւերը և անկասկած ձգում էր արդաքսել բրիտանացիներին հարաւակին Աֆրիկայից։ Ես ցաւում եմ Զէմսոնի արշաւանքի վրայ, որպէս ցաւում են բոլոր ազնիւ անդիլացիները, բայց դուք, անզիլացիներդ, ապացուցել էք, որ համարեա ձեր բոլոր ախուեաններից աւելի ընդունակ էք գաղութեր հասորարելու վայրենաքարոյ երկիրներում և իշխել նոցա վրայ, այն ինչ բուրերն ալդ բանում բոլորովին անընդունակ դուրս եկան։ Մեծ-Բրիտանիան ազմ իմացաւ, որ նա սորիպւած է անսպասելի դժւար արդելքների լաշթել, բայց հէնց ձեր անաջողութիւններից ձեզ համար այն օգուտը սորացեց, որ ձեր գաղութները բաւականաշապի նշանաւոր օգնութիւն հասցրին ձեզ և դրանով աւելի ևս ամրապնդեցին իմ հաւատն այն

մասին, թէ ձեր դու ծը արշար էու Նեէդանորւեպիացի ալրոաքին գործերից մի նիստորը, այդ առիթով զաղոնոց որ թագաւորը խօսել է լոկ իւր և ոչ կառաջնարութեան անունից և որ չէրտացցոց ու նորեցացցոց մեծամասնութիւնը իւր համակրութիւններով բուրերի կողմին է)։

Բուրերը թողին Տարանչու ուարը և նահանջեցին, ըստ երեսթին, Դէպի Հիւսիսու, Նորա քեղում թողին մի մնադանոմ։

Հեծեայ հետևակների զօրաբաժինը հասաւ Աէպ զետի մօտ ապրիլի 20-ին, ապա նովնուել առաջացան զօրքի առ մասերը Երկաթուալու գլուխինչեց Քրադփարտ վերականգնւեց։

Լորենցէ-Մարքեդէ հասան 500 անզլիանպատճեներ, մեծ մասամբ կանաքը և երեխաներ, որոնք սորիպւած էին նեռանալ Տրանովալից։ Ազդանանքը ապա շարունակեց աւելի մեծ չափսերով։

Գանեցիի ուու կապիտանը, որ կամաւոր էր մոել բուրերի մօտ, սպանւեց հերախուզութեան յամանակ։

Անզլիասիք զրաւեցին Բրանդֆորդը առանց մեծ ընդդիմադրութիւն գրնելու, ապրիլի 20—21-ին։

Անզլիացիք (Բարոնսի բրիդադը, որի հետ էր նաև զօրաբաժնի գեներալ Գենտէր) անցան Վաալ զետը Վինծորդառնի մօտ։ Բուրերը Դէպի հիւսիս նահանջեցին։

